ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....4

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ.....6

ՄԿՈՒԶԱԿ

Կենտրոնի գործունեությունը 2010թ. ընթացքում 9

Հարցազրույց ՄԿՈՒԶԱԿ-ի տնօրեն Մարինե Հակոբյանի հետ 12

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական միության աջակցությունը 15

Հարցազրույց ԵՄ պատվիրակության ղեկավար Ռաուլ դե Լուցենբերգի հետ.....17

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ

Կրթական համակարգը Դանիայի թագավորությունում.....20

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական գործընկերությունը Հայաստանի կրթության ոլորտում 26

Հարցազրույց ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի նախագահ Մարտին Սարգսյանի հետ.....32

ՄԱՐԶԱՅԻՆ ԽԵՃԱՆԿԱՐ

Նախնական և միջին մասնագիտական կրթությունը ՀՀ Լոռու մարզում.....36

Տարածաշրջանային բազմագործառույթային քոլեջներ 45

Հարցազրույց Վանաձորի տեխնոլոգիական քոլեջի տնօրեն Հովհաննես Թադեւոսյանի հետ.....46

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ

Գինեգործ-տեխնիկ.....53

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿՅԱՆՔ

«Այստեղ ստանում ենք մասնագիտական գիտելիքներ» 53

Ստեղծագործում են ուսանողները..... 56

ՄԵՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

ՄԿՈՒ շրջանավարտներն աշխատանքի շուկայում 57

ՎԱՐՊԵՏԱՑ ԱՆԿՅՈՒՆ

«Ամեն ինչ սիրո մեջ է, աշխատանքն էլ պետք է սիրես» 61

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԿՈՒ պահանջն ավելացել է 10%-ով 63

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ..... 65

ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

2008-2010թթ. մշակված պետական կրթական չափորոշիչների ցանկը.....67

Միլենա Կորադինի. Կրթության և բիզնես ուսումնասիրություն. Զեկույց.....72

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԿՈՒ ոլորտի հրատարակությունները.....94

Ողջունում եմ «Մասնագիտական կրթություն և ուսուցում» տեղեկատվական, մեթոդական և վերլուծական հանդեսի նորամուտը:

Յուրաքանչյուր երկրի տնտեսության համար կենսական նշանակություն ունի ժամանակի գիտատեխնիկական մարտահրավերներին դիմակայելը: Այդ գործընթացի հաջողության պարտադիր պայմանը որակյալ մասնագիտական կրթության ապահովումն է:

Հայաստանի անկախացումից հետո ծանր իրադրության մեջ հայտնված նախնական և միջին մասնագիտական կրթական համակարգը վերջին տարիներին կառավարության հետևողական աշխատանքի և միջազգային մեր գործընկերների աջակցության արդյունքում նոր շունչ է ստացել: Տնտեսության զարգացմանը և աշխատաշուկայի նոր պահանջների բավարարմանն են միտված այսօր մասնագիտական կրթական համակարգում ընթացող բովանդակային ու կառուցվածքային լայնածավալ բարեփոխումները: Այս համատեքստում առավել կարևորվում է հանրության իրազեկվածության բարձրացմանն ուղղված գործընթացի արդյունավետ կազմակերպումը, որին ծառայելու է նաև նորաստեղծ «Մասնագիտական կրթություն և ուսուցում» հանդեսը:

Վստահ եմ, որ հանդեսը կնպաստի ինչպես աշակերտների մասնագիտական կողմնորոշման կարևոր խնդրի լուծմանը, այնպես էլ հնարավորություն կտա ոլորտի փորձառու և վաստակաշատ մասնագետներին ներկայացնել իրենց փորձն ու նորարարական մոտեցումները, հանդես գալ տեսական ու վերլուծական հրապարակումներով:

Մեկ անգամ ևս ողջունում եմ «Մասնագիտական կրթություն և ուսուցում» տեղեկատվական, մեթոդական, վերլուծական հանդեսի նորամուտը և հաջողություն մաղթում խմբագրակազմին ու ապագա ընթերցողներին:

Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության նախարար
ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ

Խմբագրական

Կրթություն, գիտելիք... Սրանք այն արժեքներն են, որ այսօր աննախադեպ տեմպերով զարգացող ու փոփոխվող աշխարհում ոչ միայն պահպանվել, այլև նորովի են արժևորվում պետությունների, ազգերի ու անհատների կողմից: 21-րդ դարը թերևս բացառիկ ու հետագայում հիշարժան կդառնա նաև նրանով, որ առավել ցայտուն դարձրեց հազարամյակների խորքից եկող Հին աշխարհի քաղաքակրթությունների և մշակույթների բախումը, միաձուլումը, որին մերօրյա խոսքում հաճախ անվանում ենք գլոբալիզացիա: Այլևս պատմական անցյալում է, երբ կայսրություններն ու պետություններն իրենց դերն ու նշանակությունը պայմանավորում էին բացառապես ռազմական ներուժով: Այսօր պատկերը բոլորովին այլ է. համաշխարհային քաղաքակրթության մեջ զարգացում, առաջընթաց, որակ ու, ինչու չէ, նաև ճաշակ են ձևավորում այնպիսի պետություններ, որոնց հիմնական ու գլխավոր զենքը կրթությունն է ու գիտելիքը:

Հայաստանում վերջին տարիներին լայն թափով ընթանում են բարեփոխումներ կրթության բոլոր ոլորտներում: Հատկապես ակնառու են նախնական ու միջին մասնագիտական կրթության ոլորտում ընթացող գործընթացները, որոնց արդյունքում մենք նախատեսում ենք ունենալ մասնագիտական կրթության և ուսուցման որակյալ, արդյունավետ ու ճկուն համակարգ: Դա մեզ հնարավորություն կընձեռի պատրաստել որակյալ մասնագետներ, որոնք մրցունակ կլինեն ոչ միայն մեր երկրում, այլև նրա սահմաններից դուրս:

«Մասնագիտական կրթություն և ուսուցում» տեղեկատվական, մեթոդական և վերլուծական հանդեսն այս գործընթացում հավակնում է դառնալ հանրային իրազեկման, մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվական մի միջոց, որտեղ կներկայացվեն ոլորտում ընթացող գործընթացները: Միաժամանակ կարծարծվեն համակարգի առջև ծառացած, հասարակությանը հուզող խնդիրները և կներկայացվեն դրանց լուծման ուղիները: Մենք ակնկալում ենք, որ հանդեսը կդառնա ոչ միայն մասնագետների, ուսանողների և շահագրգիռ մարդկանց ամենօրյա աշխատանքային ուղեցույց, այլև օգտակար կդառնա հասարակության համար...

ՆԵՐԴՐՎԵՑԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

2010թ. ուսումնական տարվա սկզբից Հայաստանի նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ներդրվեցին 2008-2010թթ. ընթացքում մշակված նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական 61 մասնագիտությունների և որակավորումների պետական կրթական չափորոշիչներ: Դրանցից 56-ը մշակվել են Եվրոպական միության կողմից Հայաստանին տրամադրված բյուջետային աջակցության ծրագրի շրջանակում, որն իրականացվել է ՀՀ ԿԳՆ Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի (ՄԿՈՒԶԱԿ), իսկ 5-ը՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից:

Չափորոշիչների մշակմանը և հաստատմանը հաջորդել է ուսումնական պլանների և մոդուլային ուսումնական ծրագրերի մշակման գործընթացը: Հավաքագրված նյութերը տրամադրվել են ուսումնական հաստատություններին:

2010թ. վերապատրաստվել են ավելի քան 1200 դասախոսներ, արտադրական ուսուցման վարպետներ, ինչպես նաև 92 ուսումնական հաստատության 183 տնօրեններ և փոխտնօրեններ:

2010թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին Հայաստանին Եվրոպական միության բյուջետային աջակցության ծրագրի շրջանակում ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպվել է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ևս 19 մասնագիտությունների և որակավորումների պետական կրթական չափորոշիչների մշակման աշխատանքները. դրանք կներդրվեն 2011թ. սեպտեմբերին՝ մեկ պարբերաշրջանի ընթացքում փորձարկելու նպատակով:

(Պետական կրթական չափորոշիչները, դրանց օրինակելի ուսումնական պլաններն ու մոդուլային ուսումնական ծրագրերը տեղադրված են ՄԿՈՒԶԱԿ-ի պաշտոնական համացանցային կայքէջում՝ www.mkuzak.am):

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՍԱԿԱՆ Է ՀԱՄԱՐՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ

«Մասնագիտական կրթության որակի ապահովման առկա խնդիրները և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» խորագրով երկօրյա համաժողով էր կազմակերպել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (ՈԱԱԿ):

«ՀՀ կառավարությունը մեծապես կարևորում է մասնագիտական կրթության համակարգում որակի ապահովման ժամանակակից մեխանիզմների ներդրման դերն ու նշանակությունը»,- համաժողովի ընթացքում նշել է կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը: Այս առումով նախարարը բարձր է գնահատել 2008թ. դեկտեմբերին ստեղծված ՈԱԱԿ հիմնադրամը, որն արդեն իսկ շոշափելի քայլեր է կատարել:

ԶԼՄ-ՆԵՐԸ ՄԵՐ ՄԱՍԻՆ

• ՀՀ-ում նախնական և միջին մասնագիտական կրթական համակարգի վերաբերյալ մամուլի ասուլիս է հրավիրվել լրագրողական «Հայելի» ակումբում: Որպես բանախոսներ հանդես են եկել ՀՀ կրթության և գիտության նախարարության նախնական և միջին մասնագիտական կրթության վարչության պետ Ռոբերտ Աբրահամյանը և կրթության ոլորտի փորձագետ Մարինե Հակոբյանը: Ասուլիսի վերաբերյալ հաղորդագրությունը տեղադրված է www.mkuzak.am կայքէջում:

• «Հայկական զրուցակից» շաբաթաթերթի 147 համարում անդրադարձ կա ՀՀ նախնական և միջին մասնագիտական կրթական համակարգին: Շաբաթաթերթի թղթակցի հարցերին պատասխանել է Կրթության ազգային ինստիտուտի փոխտնօրեն Տիգրան Սահակյանը:

• «Կրթություն» շաբաթաթերթի թիվ 33 (425) համարը (04.08.2010թ.) «Կրթություն՝ միտված կարողությունների զարգացմանը» վերտառությամբ հարցազրույց է հրապարակել. հարցերին պատասխանել է ՄԿՈՒՀԱԿ-ի սոցիալական գործընկերության և միջազգային համագործակցության բաժնի վարիչ Սասուն Համբարձումյանը:

• Նախնական և միջին մասնագիտական կրթական համակարգում տեղի ունեցող ձեռքբերումներն ու զարգացման հեռանկարները 2010թ. ընթացքում հաճախակի լուսաբանվել են «ԱԼՄ» հեռուստաընկերության եթերում, տեսանյութերը տեղադրված են ՄԿՈՒՀԱԿ-ի պաշտոնական համացանցային կայքէջում՝ www.mkuzak.am հասցեում:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ՄԻՏՎԱԾ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

2001 թվականին Հայաստանում առկա էր 58 ՄՏՈՒ, որոնցից 19-ը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության, իսկ 39-ը՝ ՀՀ մարզպետարանների (այդ թվում նաև Երևանի քաղաքապետարանի) ենթակայության ներքո:

ՀՀ նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթական համակարգի բարեփոխումների ընթացքն ու հիմնական ուղղությունները

Անկախության հռչակումից հետո Հայաստանում, ի թիվս մյուս ոլորտների, լայն թափով սկսվեցին կրթության ոլորտի բարեփոխումներ, որոնք մինչև 90-ականների վերջ հիմնականում իրականացվում էին հանրակրթության և բարձրագույն կրթության ոլորտներում: Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՆՄՄԿՈՒ) ոլորտում բարեփոխումները, կարելի է ասել, սկսվեցին 1999թ. «Կրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո: Մինչև 2001թ. նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությունը (նախկինում՝ մասնագիտական-տեխնիկական կրթություն) իրականացվում էր մասնագիտական տեխնիկական ուսումնարաններում (ՄՏՈՒ):

Սակայն «Կրթության մասին» ՀՀ օրենքով ՄՏՈՒ-ն՝ որպես ուսումնական հաստատության առանձին տիպ, այլևս նախատեսված չէր և ՀՀ կառավարության կողմից հաստատված՝ ՀՀ նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգի ռացիոնալացման ծրագրի շրջանակում Հայաստանում գործող ՄՏՈՒ-ները վերակազմակերպվեցին՝ որպես արհեստագործական հոսքով ավագ դպրոցներ, մասնագիտական 6 ուսումնական հաստատություններ:

2003թ. Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող TACIS-ի «Օժանդակություն մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումների իրականացման ռազմավարության և իրավական դաշտի մշակմանը» ծրագրի շրջանակում մշակվեց և 2004թ. ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացավ «ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարությունը», իսկ 2005թ.

ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը: ՆՄՄԿՈՒ ռազմավարությամբ, ըստ էության, սահմանվեցին համակարգի հիմնական նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև դրանց լուծման ուղիները, իսկ օրենքով՝ համակարգում ՀՀ պետական քաղաքականության սկզբունքները, կազմակերպական-իրավական և ֆինանսատնտեսական հիմքերը, իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքներն ու պարտականությունները:

Բարեփոխումների շրջանակում Եվրամիության, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի աջակցությամբ մշակվեց նաև «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացման գերակայությունները և 2005-2008թթ. գործողությունների պլանը», 2004-2006թթ. իրականացվեց «Աջակցություն Հայաստանում միասնական ՄԿՈՒ համակարգի զարգացմանը» նախագիծը, 2006-2007թթ. ՝ «Աջակցություն Հայաստանում ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնի (ՄԿՈՒԶԱԿ) ստեղծմանը» նախագիծը և մի շարք այլ ծրագրեր: 2008թ. ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացավ «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացման հայեցակարգը» և «Հայաստանում մասնագիտական կրթության բարեփոխումների 2009-2011թթ. միջոցառումների ծրագիրը և ժամանակացույցը»:

2008թ. Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքի միջև կնքվեց «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում բարեփոխումների իրականացման միջոցով աջակցություն աղքատության կրճատման ռազմավարության մասին» ֆինանսավորման համաձայնագիրը, որը նպատակ ունի աջակցելու ՀՀ ԿԳՆ-ին՝ բավարարելու ԵՄ TACIS-ի 2006 և 2007թթ. գործողությունների պլաններով նախատեսված Եվրամիության կողմից Հայաստանին տրամադրվող բյուջետային աջակցության պայմանականությունները:

ՆՄՄԿՈՒ ոլորտում իրականացվող բարեփոխումներն ընթանում են հիմնականում մի քանի ուղղություններով և նպատակ ունեն զարգացնելու Հայաստանում ՄԿՈՒ որակյալ, արդյունավետ ու ճկուն համակարգ:

Այն ներառում է՝

- մասնագիտական կողմնորոշման, խորհրդատվության արդյունավետ համակարգի ստեղծում,
- աշխատաշուկայի վերլուծության և մասնագիտական չափորոշիչների վրա հիմնված կարողությունների ձեռքբերմանն ու զարգացմանը միտված կրթական չափորոշիչների ձևավորում,
- սոցիալական գործընկերության և երկխոսության խթանում,
- ՄԿՈՒ հաստատությունների օպտիմալ ցանցի ձևավորում,
- ՄԿՈՒ հաստատությունների ուսումնանյութական բազայի բարելավում,
- ուսումնական հաստատությունների հաշվետվողականության և գործունեության թափանցիկության բարելավում,
- մասնագիտական կրթական ծառայությունների մատուցման որակի բարելավում,
- ուսումնական հաստատությունների ժամանակակից կառավարման մեխանիզմների ձևավորում,
- ուսումնական հաստատությունների սովորողների և շրջանավարտների մասնագիտական հմտությունների ձևավորում և զարգացում՝ համապատասխան տնտեսության և աշխատաշուկայի կարիքների,
- ուսումնական հաստատությունների ֆինանսավորման միջոցների ծախսերի արդյունավետության ապահովում,
- ՄԿՈՒ համակարգի պլանավորումն աշխատաշուկայի և երկրի տնտեսական զարգացման ընթացիկ ու ռազմավարական կարիքներին համապատասխան,
- մոնիթորինգի արդյունավետ իրականացում և հետադարձ կապ,
- կրթության որակի գնահատման չափորոշիչների մշակում և ներդրում:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում բարեփոխումների հիմնական նպատակներն են որակյալ մասնագետների պատրաստումն ու նրանց մրցունակության բարձրացումն աշխատաշուկայում, կրթական ծրագրերի համապատասխանեցումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, կրթության բովանդակության միջազգային չափանիշներին համադրելիության և ուսումնական գործընթացի թափանցիկության, ինչպես նաև մատչելիության և հավասարության ապահովումը:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ ԿԳՆ «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն» հիմնարկը (ՄԿՈՒԶԱԿ) ստեղծվել է 2008թ.՝ որպես Հայաստանի նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի մեթոդական աջակցության և ծառայությունների մատուցման կառույց:

Կենտրոնի գործունեությունը 2010 թ. ընթացքում

2010թ. ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացված աշխատանքների գերիշխող մասն ուղղվել է նախորդ տարիներին մշակված և հաստատված մասնագիտությունների (որակավորումների) պետական կրթական չափորոշիչների ներդրման նախապատրաստական միջոցառումների իրականացմանը: Դրա շրջանակում ՄԿՈՒԶԱԿ-ը ապրիլ ամսից համակարգել և անցկացրել է վերապատրաստման դասընթացներ՝ խնդիր ունենալով ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների դասախոսական և վարչական անձնակազմին տեղեկացնել կարողություններին միտված չափորոշիչների ձևաչափը, դասապրոցեսի կազմակերպման առանձնահատկությունները: ԵՄ կողմից Հայաստանին բյուջետային աջակցության ծրագրերի շրջանակում իրականացվող վերոնշյալ վերապատրաստումների առաջին փուլն անցկացվել է ապրիլ-հունիս ամիսներին ՀՀ բոլոր մարզերի և Երևանի ՄԿՈՒ ուսումնական բոլոր հաստատություններում:

Վերապատրաստման առաջին փուլի ամփոփման արդյունքներով՝ «Կարողությունների ձևավորմանը միտված մոդուլային ուսումնական ծրագրերով ուսումնառության գործընթացի կազմակերպում և իրականացում» թեմայով դասընթացներին մասնակցել են նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ավելի քան 1200 մանկավարժական աշխատող (դասախոս, արտադրական ուսուցման վարպետ), ինչպես նաև 92 ուսումնական հաստատությունների 183 տնօրեն և փոխտնօրեն: ՀՀ կրթության և գիտության

նախարարության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության ղեկավարության հետ համատեղ ՄԿՈՒԶԱԿ-ը 2010թ. օգոստոսի 27-ին անցկացրել է խորհրդակցական արտահերթ հանդիպում՝ ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների ղեկավար անձնակազմի հետ: Խորհրդակցության ժամանակ քննարկվել են ուսումնական տարվա ընթացքում ներդրվող նոր չափորոշիչների, կրթության կազմակերպման մեթոդաբանական, իրավական և կազմակերպական հիմնարար հարցերի հետ կապված խնդիրները, տրվել պարզաբանումներ:

Առաջարկվել է աշխատանքի ընթացքում առաջացած խնդիրների, խոչընդոտների և հակասությունների վերաբերյալ ներկայացնել գրավոր հիմնավորումներ՝ որպես ուղղորդող սկզբունք ընդունելով մասնագիտական կրթության և զբաղվածության կոնկրետ ոլորտի շահը:

2010թ. մշակվել են կարողություններին միտված առկա չափորոշիչների հիման վրա 30 մասնագիտությունների և որակավորումների ուսումնական պլաններ և մոդուլային ծրագրեր:

2010 թ. հուլիսից մեկնարկել են ՄԿՈՒ ոլորտի մասնագիտական կրթության 19 պետական չափորոշիչների մշակման աշխատանքները, որոնց շրջանակում ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից հիմնավորապես լրամշակվել են կրթական պետական չափորոշիչների պաշտոնական փաթեթի (մասնագիտական կրթության պետական չափորոշիչի, մոդուլների, ուսումնական պլանի, ինչպես նաև մասնագիտության նկարագրի և գնահատման չափանիշների) օրինակելի ձևաչափը և աշխատանքային փաթեթի (պայմանագրի, աշխատանքների իրականացման տեխնիկական առաջադրանքի, հաշվետվությունների և հանձնման-ընդունման ակտերի) ձևաչափը: Լրամշակված փաթեթի միջոցով նպատակ կա հասնելու առավել իրատեսական և բազմակողմանիորեն դիտարկված

չափորոշիչների ստեղծմանը, ինչպես նաև վերլուծել տվյալ մասնագիտության զբաղվածության բնագավառները:

Հաստատվել են նաև 11 միջին և 8 նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության պետական կրթական որակավորման չափորոշիչները՝ առանձին ուսումնական հաստատություններում ուսումնառության մեկ պարբերաշրջանի ընթացքում փորձարկման նպատակով ներդնելու պայմանով:

«Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումներ» ծրագրի շրջանակում նախատեսվել է իրականացնել ՄԿՈՒ ռազմավարության և քաղաքականության վերաբերյալ 3 հետազոտություն: ՀՀ ԿԳ նախարարության կողմից պատվիրակվել է հետազոտություններ անցկացնել հետևյալ թեմաներով.

• «Սոցիալական գործընկերությունը կրթության արդյունքի և աշխատաշուկայի կարիքների համատեքստում»,

• «Նախնական և միջին մասնագիտական կրթության կազմակերպման արդյունավետությունը՝ ՄԿՈՒ ոլորտի բարեփոխումների ներքո»,

• «Կրթության համապատասխանության և զբաղվածության ապահովման հետազոտություն՝ ՀՀ Սյունիքի, Շիրակի և Արարատի մարզերում»:

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից պատվիրակված 13 անուն ուսումնական ձեռնարկների մշակման գործընթացը գտնվում է ավարտական փուլում: Ձեռնարկները ներկայացվել են ոլորտային հանձնաժողովների, համապատասխան ուսումնական հաստատությունների և զբաղվածության մասնագետների փորձագիտական եզրակացությանը: Դրական եզրակացություն ստացած ուսումնական ձեռնարկները ներկայացվել են հրատարակման:

ՄԿՈՒ անձնակազմը 2010թ. ընթացքում ակտիվորեն մասնակցել է ինչպես ՀՀ կրթության և գիտության նախարարության, այնպես էլ պետական մյուս գերատեսչությունների, կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից ձեռնարկված միջոցառումներին:

Սոկրատի իմաստությունը նրանում էր, որ նա չէր կարծում, թե գիտի այն, ինչը չգիտեր:

ՑԻՑԵՐՈՆ

Կրթությունը համարվում է պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը և գտնվում է սոցիալական երաշխիքների շրջանակում: Սակայն տնտեսության զարգացման շարժիչ ուժ համարվող և առաջընթաց ապահովող մասնագիտական կրթության համակարգը միշտ չէ, որ գտնվել է հավասար պաշպանվածության և հոգածության ներքո: Դրա պատճառը ոչ միայն քաղաքական լուծումների, այլև հասարակության վերաբերմունքի խնդիր է: Խոսքը վերաբերում է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությանը (ՄԿՈՒ), որի նշանակությունը աստիճանաբար անկում էր ապրում, չնայած այն հանգամանքին, որ դրա դերն ու ազդեցությունը անչափելի է:

Հարցազրույց Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի (ՄԿՈՒԶԱԿ) տնօրեն Մարինե Հակոբյանի հետ

Հայ ընտանիքներում նախապատվությունը տալիս են բուհերին, ոչ թե քոլեջներին և ուսումնարաններին: Ըստ Ձեզ ի՞նչ խնդիրների կարող է դա բերել:

Խիստ կենտրոնանալով հանրակրթության խնդիրներին և կենսական կարևորության նպատակ համարելով բուհական կրթությունը՝ լրջորեն արհամարհվել և հետին պլան էին մղվել մասնագիտական կրթության արհեստագործական և քոլեջային մակարդակները:

Արդյունքում Հայաստանում ստեղծվել է մի իրավիճակ, երբ 100 հազար ուսանողի երկու երրորդը սովորում է հանրապետության բուհերում, մեկ երրորդը՝ միջին մասնագիտական հաստատություններում: Մինչդեռ միջազգային առաջընթացի փորձն ուսումնասիրելիս նկատելի է, որ աշխատաշուկայի գերիշխող մասը զբաղեցնում են ՄԿՈՒ համակարգի շրջանավարտները՝ առնվազն 1/10-ի հարաբերակցությամբ: Այսինքն՝ մեկ բուհական շրջանավարտին բաժին է ընկնում 10 արհեստավոր կամ սպասարկման մասնագետ:

Աշխատանք գտնելու համար գործատուները հաճախ են պահանջում բուհի դիպլոմ: Հենց դա չի՞ բերում ՄԿՈՒ համակարգի դերի նվազմանը:

Այժմ ընդունված է այն կարծիքը, որ աշխատանք և արժանապատիվ կյանք ունենալու ճանապարհը բարձրագույն կրթությունն է: Հետևաբար ամեն ինչ արվում է դրան հասնելու համար: Պետական քաղաքականությունը նույնպես տարվում է՝ «այդ երևույթը» գնահատելով որպես պահանջարկ: Մինչդեռ իրական պահանջարկը անհրաժեշտ է չափել հետևանքով, ըստ որի պարզ է դառնում, որ աշխատաշուկան չի սպառում բուհական շրջանավարտներին: Դրան զուգահեռ գործում են արհեստագործական և քոլեջային կրթության համակարգերը, որոնք առավել գործնական են, արագ և ճկուն, սակայն մասայականություն չեն վայելում: Արդյունքում, բուհ ընդունվելը լի է կոռուպցիոն ռիսկերով, այն դեպքում, երբ արհեստագործի խնդիր լուծող մասնագետի «տեղի» վրա հավակնում են նույնիսկ ակադեմիական կրթություն ստացածները:

Ի՞նչ քայլեր են կատարվում ՄԿՈՒ համակարգի դերի բարձրացման ուղղությամբ:

Վերջին տարիների կրթական քաղաքականությամբ հիմնավոր շրջադարձ է կատարվել դեպի ՄԿՈՒ համակարգ, որտեղ ջանում են լայնածավալ բարեփոխումներ անցկացնել աշխատաշուկայի անբնական բաշխվածությունը հավասարակշռելու նպատակով: Կրթության ազգային ինստիտուտի կազմում Եվրամիության աջակցությամբ ստեղծվել է Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնը (ՄԿՈՒԶԱԿ), որին պատվիրակված է նպաստել ՄԿՈՒ բարեփոխումներին, աջակցել աշխատուժի զարգացմանն ու մրցունակության բարձրացմանը, նպաստել բոլորի համար նպատակային կրթության ապահովմանը՝ աշխատաշուկայի կարիքներին համապատասխանեցնելու միջոցով, աջակցել որակավորումների միասնականացմանը և միջազգային ճանաչմանը:

Ինչպե՞ս պետք է իրագործեք Ձեր առջև դրված խնդիրները:

ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնը մշակում է մասնագիտական պետական կրթական չափորոշիչներ: Այդ կերպ կսահմանվի մասնագետին ներկայացվող բովանդակային և գործնական կողմը: Նախատեսվում է աստիճանաբար հասնել շուրջ 130 մասնագիտությունների և որակավորումների կրթական չափորոշիչների մշակմանը, որոնցից յուրաքանչյուրին հաջորդելու է համապատասխան ուսումնական պլանների, առարկայական և (կամ), մոդուլային ծրագրերի մշակումը, ձեռնարկների, դասագրքերի, ուսումնամեթոդական այլ նյութերի թողարկումը: Իհարկե, այդ ամենին համապատասխանեցված իրականացվելու է դասախոսների և վարպետների վերապատրաստում, որոնց թիվը կազմում է շուրջ 4000 մասնագետ:

Ո՞րը կարելի է համարել ՄԿՈՒԶԱԿ-ի առջև դրված ամենակարևոր խնդիրը:

Ստեղծել այնպիսի ճկուն համակարգ, որը կարողանա է արագ արձագանքել աշխատաշուկայի և տնտեսության կարիքներին: Պետք է տեսնենք, թե այսօր երկիրն ի՞նչ ուղղությամբ է զարգանում, տնտեսության ո՞ր ճյուղերն են գերակա, և դրան համապատասխան մասնագետներ պատրաստենք: Իրական արդյունքներ ունենալու համար անհրաժեշտ է ստեղծել նպաստավոր միջավայր, առողջ համագործակցություն և, ամենակարևորը, դաշտը տեսնել ամբողջության ու կապակցվածության մեջ:

Աշխատաշուկա-գործատու-պատվիրատու-կրթություն-աշխատաշուկա... շղթան շարունակ պտտվող և փոխադարձ ներգործող համակարգային գործընթաց է, որը չի կարող վերացականորեն պլանավորվել կամ կտրված լինել իրականությունից: Մենք այլևս կենտրոնացված վարչահրամայական տնտեսական համակարգի պայմաններում չենք գործում, այլ շուկայական, տնտեսական ազատ

մրցակցության դաշտում: Հետևաբար, կրթության խնդիրն է տեսնել բազմաձևությունն ու ապահովել մասնագետներ, որոնց կվստահեն ու կընդունեն աշխատանքի:

Արդյոք կապ կա՞ գործատուների հետ, և ինչպիսի՞ մակարդակի վրա են նրանց հետ հարաբերությունները:

Յուրաքանչյուր զբաղվածության բնագավառի կարիքներն ամենաէականն են կրթության պլանավորման գործում: Հետևաբար գործատուն պետք է ուսումնական հաստատությանը դիտարկի իր կադրային կարիքներն ապահովող կողմ և ձգտի ներգրավված լինել կրթության պատվերի ու բովանդակության ձևավորմանը: Մյուս կողմից ուսումնական հաստատությունը պետք է ցուցաբերի նախաձեռնողականություն գործատուին լսելու և արձագանքելու համար՝ գիտակցելով, որ իր արդյունքի սպառողը գործատուն է:

Կարելի է լուրջ առաջընթաց համարել սոցիալական գործընկերության հիմքերի ձևավորումը, որը փորձարկվեց ՄԿՈՒ զարգացման ազգային խորհրդի (ՄԿՈՒԶԱԽ) կազմավորման, ոլորտային փորձագիտական հանձնաժողովների, ինչպես նաև ՄԿՈՒ հաստատություններում կառավարման խորհուրդներ ստեղծելու ընթացքում: Դրանց բոլորի պարտադիր մասնակից կողմը նաև գործատուներն են: 2009թ. ընդունվեց ՀՀ ՄԿՈՒ ոլորտում սոցիալական գործընկերության հայեցակարգը, համաձայնագրի՝ սոցիալական գործ ընկերության կողմերն են ՀՀ կառավարությունը, գործատուներին ներկայացնող կազմակերպությունները և արհեստակցական միությունները:

Կա՞ն ուսումնասիրություններ՝ կապված աշխատանքի շուկայի առաջարկի և պահանջարկի հետ:

Աշխատանքներն առավել կհեշտանային, եթե լիներ աշխատաշուկայի խոր ուսումնասիրության արդյունքում ձևավորված մասնագիտությունների ցանկ: Այդ ցանկը կարիք ունի վերանայման՝ համապատասխանեցնելով տնտեսության պահանջարկին: Սակայն մյուս կողմից՝ հարցին պետք է մոտենալ զգուշավորությամբ. չվնասել արհեստներն ու արդեն ձևավորված ավանդույթները: Գուցե այսօր շատ քիչ մարդիկ են զբաղվում, օրինակ, դարբնությամբ, բայց որպես ազգային նկարագրի խնդիր, անհրաժեշտ է այն պահպանել: Մասնագիտությունների թարմացման գործընթացը կտրուկ քայլեր չպետք է ենթադրի: Հարկ է հասկանալ, թե որն է երկրի համար ազգային դիմագծի պահպանման հետ առնչվում, որն է այսօրվա տնտեսական զարգացումների հիմքը, և ինչն է, որ պետք է ապահովի սահուն անցում՝ նոր մարտահրավերների հաղթահարման ճանապարհին:

Ինչպիսի՞ քայլեր են արվել ՄԿՈՒ համակարգի զարգացման ուղղությամբ:

Եվրամիության «Աջակցություն Հայաստանի մասնագիտական կրթության և ուսուցման միասնական համակարգի զարգացմանը» ծրագրի հովանավորությամբ ՀՀ բոլոր մարզերում, այդ թվում՝ Երևանում ընտրվել են 12 բազմագործառութային քոլեջներ, որոնք վերանորոգվել ու վերազինվել են՝ իրենց առջև դրված խնդիրները հաղթահարելու համար: Սրանք այն կենտրոններն են, որոնք տարբեր մասնագիտություններով կրթություն կազմակերպելուց բացի, համարվելու են տվյալ տարածաշրջանի ուսումնամեթոդական կենտրոնը, բարեփոխումների և առաջընթացի փորձարկման միջավայրը: Հետևաբար, այդ հաստատություններում ներդրվող միջոցները պետք է կարողանանք համատեղ ջանքերով արդարացնել, քանի որ վերջիններիս հաջողություններով կպայմանավորվեն մեր հաջորդ գործողությունները, ինչպես նաև կստեղծվեն փորձարկված ուսումնամեթոդական բազաներ՝ մյուս հաստատությունների առավել զարգացման համար:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՐԳՈՒՄ

Հայաստանի Հանրապետության նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգում իրականացվող բարեփոխումների, համակարգի զարգացման և արդիականացման գործընթացում էական նշանակություն ունի միջազգային մի շարք կազմակերպությունների, երկրների և մեր պետության սերտ համագործակցությունը և նրանց աջակցությունը:

Այս համարում անդրադարձ է կատարվել ՄԿՈՒ համակարգում՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության և Եվրամիության համատեղ գործակցության արդյունքում արձանագրված ձեռքբերումներին:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակությունը ապահովում է երկկողմ հարաբերություններ քաղաքական, տնտեսական, առևտրային և համագործակցության ոլորտներում:

Բարեփոխումները Հայաստանի նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բնագավառում սկսվել են դեռևս 1990-ական թվականներից: Սակայն դրանք առավել նշանակալից թափ ստացան 2003թ., երբ մեր երկրում սկսվեցին իրականացվել Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող մի շարք նախագծեր: Այդ ծրագրերից հատկանշական է 2003-2004թթ. իրականացված «Աջակցություն մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումների իրականացման ռազմավարության և իրավական դաշտի մշակմանը» նախագիծը, որի արդյունքում ստեղծվեցին մի շարք կարևորագույն փաստաթղթեր՝ «ՀՀ մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարությունը» և «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը:

Եվրամիության համագործակցությամբ 2004-2006թթ. իրականացված մեկ այլ կարևոր ծրագիր է «Աջակցություն Հայաստանում միասնական ՄԿՈՒ համակարգի զարգացմանը» նախագիծը: Այս ծրագրի շրջանակում եվրոպական գործընկերներն աջակցել են ՀՀ կառավարությանը՝ ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարության, պետության տնտեսության կադրային կարիքները բավարարելու նպատակով, զարգացնել ՄԿՈՒ համակարգը՝ այն դարձնելով առավել որակյալ, արդյունավետ և ճկուն:

Ծրագիրն իրականացվեց Երևանում և երկու մարզերում՝ Լոռիում ու Տավուշում, ընդգրկեց 4 պիլոտային, 13 գործընկեր քոլեջ: Դրա շրջանակում Հայաստանում և եվրոպական երկրներում իրականացված վերապատրաստումների միջոցով բարելավվեցին ՄԿՈՒ համակարգի կառավարիչների և հաստատությունների ղեկավարների ու մեծ թվով դասավանդողների կարողությունները, մշակվեցին մի քանի քաղաքական ու ռազմավարական բնույթի փաստաթղթեր: Համագործակցություն հաստատվեց ՄԿՈՒ համակարգի և սոցիալական գործընկերների, մասնավորապես գործատուների հետ: Մի շարք գերակա մասնագիտությունների գծով մշակվեցին կարողությունների ձևավորմանը միտված մոդուլային ուսումնական պլաններ, մոդուլներ, դասավանդման և ուսումնառության նյութեր: Բացի այդ, նախագծում ընդգրկված հաստատություններին տրամադրվեցին զգալի քանակությամբ ժամանակակից տեսալսողական, համակարգչային և լաբորատոր-արհեստանոցային ուսումնական գույք և սարքավորումներ:

Նշված ծրագրի արդյունքները տարածվում են նաև համակարգի այլ ուսումնական հաստատություններում:

2006-2007թթ. իրականացվեց «Աջակցություն Հայաստանում ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնի (ՄԿՈՒԶԱԿ) ստեղծմանը» նախագիծը, որի շրջանակում մշակվեց ՄԿՈՒԶԱԿ-ի ստեղծման և գործարկման հայեցակարգը: Այս կենտրոնը մեթոդական ու փորձագիտական աջակցության մի կարևոր կառույց է, որը նպաստում է համակարգի բարեփոխումների արդյունավետության բարձրացմանը և հետագա կենսունակությանը:

Եվրոպական հանձնաժողովի «Տեխնիկական աջակցության» ծրագրի նպատակն է նպաստել ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ բավարարելու TACIS-ի 2006 և 2007թթ. գործողությունների պլաններով նախատեսված՝ համապատասխանաբար 3 և 15 միլիոն եվրոյի չափով Եվրամիության կողմից Հայաստանին տրամադրվող բյուջետային աջակցության պայմանականությունները:

Տեխնիկական աջակցության տրամադրման ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ բարելավելով ՄԿՈՒ հետագա արդիականացման և նորարարություններ ներդնելու նրա ինստիտուցիոնալ կարողությունները՝ մինչ այժմ կատարած գործողությունների համախմբման և զարգաց-

Հարցազրույց ԵՄ պատվիրակության ղեկավար Ռաուլ դե Լուցենբերգի հետ

Միջազգային կազմակերպությունների կողմից առաջարկվող զարգացման քաղաքականությունը բնորո՞շ է հայաստանյան բիզնես միջավայրին:

Ի տարբերություն զարգացած երկրների՝ հայաստանյան բիզնես միջավայրը դեռ գտնվում է զարգացման փուլում և պետք է էապես կատարելագործվի՝ արձագանքելու երկրի իրական ներուժին:

Իր աջակցության գործիքների միջոցով տրամադրելով եվրոպական լավագույն փորձն ու փորձագիտությունը՝ Եվրոպական միությունն օժանդակում է Հայաստանին՝ ձևավորելու իր զարգացման քաղաքականությունները, որոնք կիրառելի կլինեն ազգային համատեքստում և կհամապատասխանեն կառավարության կողմից որդեգրած քաղաքական ուղղվածությանը: Այս օժանդակության ուղղակի թիրախն է բիզնես միջավայրը, մասնավորապես ՄԿՈՒ ոլորտի զարգացումը:

ՄԿՈՒ համակարգը զարգացնելու ինչպիսի՞ մեխանիզմներ են կիրառվում:

Ներկայումս Հայաստանի ՄԿՈՒ համակարգում ընթացող բարեփոխումների ուղղությամբ տարվող քայլերի հիմնական գործիքը ԵՄ «Ոլորտային աջակցություն» ծրագիրն է (ՈԱԾ): Ծրագրի գլխավոր նպատակն է կատարելագործել ՄԿՈՒ կառավարումը և իրականացումը՝ Հայաստանին տրամադրելով բյուջետային աջակցություն՝ համաձայն մի շարք պայմանականությունների, որոնց նպատակը համակարգի զարգացումն է, ինչպես նաև ՄԿՈՒ ենթակառուցվածքի բարելավումը:

Որքանո՞վ է Հայաստանի նախնական և միջին մասնագիտական կրթական համակարգը բռնել արդիականացման ուղին:

Հայաստանում ՄԿՈՒ համակարգի արդիականացումն սկսվել է վերջին շրջանում և

բարեփոխումների շատ հնարավորություններ դեռևս կան: Այնուամենայնիվ, ձեռքբերումներն ակնհայտ են այնպիսի հատվածներում, ինչպիսիք են ՄԿՈՒ ղեկավարումն ու կառավարումը, կրթության բովանդակությունը, մարդկային ռեսուրսի զարգացումը, սոցիալական գործընկերությունը և այլն: Միևնույն ժամանակ, կառավարությունը պետք է շարունակի հետամուտ լինել բարեփոխումների անհրաժեշտ քայլերին և ցուցաբերի քաղաքական հանձնառություն՝ զարգացնելու համակարգը, որն իր հերթին կերաշխավորի արտաքին աջակցության արդյունավետություն:

Որո՞նք են համակարգին նպաստող դրական միտումները, ձեզ համար այն բացասական գործոնները, որոնք խոչընդոտում են համակարգի կայացմանը:

Կառավարության ավելի ակտիվ մասնակցությունը, ՄԿՈՒ ոլորտի բարեփոխումների գերակայությունների ավելի ճշգրիտ որոշարկումը, ինչպես նաև սոցիալական գործընկերների կողմից ՄԿՈՒ-ին հատկացվող ուշադրության մեծացումը և զարգացած սոցիալական երկխոսությունը ևս կարող են հիշատակվել ոլորտի վերջին դրական միտումների շարքում:

Ինչ վերաբերում է ՄԿՈՒ ոլորտում առկա հիմնախնդիրներին, դրանք նշվել են կառավարության կողմից 2009թ. ընդունված ՄԿՈՒ զարգացման հայեցակարգում և պայմանավորված են հետևյալ գործոններով.

• Երկրի սոցիալտնտեսական վիճակ:

• Գիտության և տեխնոլոգիայի փոփոխություններ ժամանակի արագահոս կյանքում:

• Ազգային ինքնության ձևավորում, կրթության դերն ազգային ինքնության պահպանման և զարգացման գործում:

• Կրթության շարունակական զարգացման համար անհրաժեշտ պայմանների սղություն:

• Կառուցվածքային գործազրկության մեծ ծավալներ:

• Գյուղական շրջանների երիտասարդների

համար կրթության համակարգ մուտք գործելու հնարավորության պակաս:

• Առկա ռեսուրսների անարդյունավետ օգտագործում:

Ի՞նչ արդյունքներ են տվել ԵՄ և միջազգային այլ կազմակերպությունների համագործակցությամբ ՄԿՈՒ ոլորտում իրականացված ծրագրերը: Որքանո՞վ են դրանք արդյունավետ:

2003թ. ի վեր ԵՄ կողմից ֆինանսավորվող մի շարք ծրագրեր են իրականացվել, և ձեռք են բերվել էական արդյունքներ: Մշակվել են ՄԿՈՒ ռազմավարության և ՄԿՈՒ մասին օրենքները, բարելավվել է ՄԿՈՒ ղեկավարման համակարգը: Կարևոր ձեռքբերումներ են նաև սոցիալական գործընկերության ամրապնդումը, կարողություններին միտված ուսումնառության ներմուծումը, քոլեջների նյութատեխնիկական բազաների հագեցումը և արդի սարքավորումների տրամադրումը՝ բարձրացնելու կրթության որակը և դրա համապատասխանությունն աշխատաշուկայի կարիքներին ու պահանջներին:

ԵՄ-ն համագործակցում է Հայաստանի ՄԿՈՒ համակարգում ներդրումներ կատարող դոնոր այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսիք են՝ ՄԱԶԾ-ն, GTZ-ը, DVV international-ը և այլն՝ ապահովելու համար գործողությունների սիներգիա և փոխլրացում ծրագրի նպատակների և արդյունքների մակարդակում:

Ըստ Ձեզ՝ ինչպիսի՞ն կլինի ՀՀ ՄԿՈՒ համակարգի զարգացման հեռանկարը:

ՄԿՈՒ համակարգը պետք է դառնա ընտրության գրավիչ տարբերակ երիտասարդների և մեծահասակների համար՝ աշխատաշուկայում մրցակցելու նպատակով անհրաժեշտ կարողություններ ձեռք բերելու և երկրի տնտեսական զարգացմանն օժանդակելու առումով: ՄԿՈՒ համակարգը պետք է մատչելի լինի բոլորի համար և ապահովի բարձրորակ կրթություն և ուսուցում՝ ուսումնառության արդյունքներով, որոնք կճանաչվեն նաև Հայաստանի սահմաններից դուրս:

Կարծում ենք, որ ՄԿՈՒ-ն կշահի Հայաստանի տնտեսական հետագա զարգացումից, քանի որ ավելի շատ և լավ աշխատատեղեր կստեղծվեն: Կրթության համակարգի և զբաղվածության ոլորտի միջև փոխվստահության միջավայրը պետք է ձևավորվի սոցիալական գործընկերության միջոցով: ՄԿՈՒ-ն ոչ միայն չպետք է դիտարկվի որպես երկրորդ հնարավորություն կրթության համար, այլև այն պետք է լինի աղքատության նվազեցման գերակա գործիք: Այս ոլորտի բոլոր նորարարությունները պետք է հավասարապես տեղ գտնեն և՛ մայրաքաղաքում, և՛ ՀՀ մարզերում:

Այնուհանդերձ, միայն դոնոր կազմակերպությունների օժանդակ տեղական նախաձեռնությունները չեն կարող երաշխավորել ՄԿՈՒ համակարգի շարունակական զարգացում, եթե կառավարությունը չդառնա բարեփոխումների լիարժեք սեփականատերը և երաշխավորի դրանց կայունությունը:

Սովորելը սոսկ ճշտումն է այն ամենի, ինչն արդեն գիտես:
Արարքը՝ ցուցադրելն է, որ գիտես:
Ուսուցանելը՝ հիշեցնել մյուսներին, որ նրանք ամեն ինչ նույնքան լավ գիտեն, որքան դու:

Ռիչարդ Բախ

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԴԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երբեմնի հզոր Դանիական կայսրության իրավահաջորդ Դանիայի Թագավորությունը սահմանադրական միապետություն է Հյուսիսային Եվրոպայում: Զբաղեցնում է մոտ 43 հազար քառ. կմ մակերես՝ առանց Ֆարերյան կղզիների և Գրենլանդիա կղզու (2,17 մլն քառ.կմ): Տեղաբաշխված է Յուտլանդիա թերակղզու հյուսիսում և Դանիական կղզիախմբի մանր ու միջին 49 կղզում, որոնցից առավել խոշորներն ու խիտ բնակեցվածներն են Զելանդիան, Ֆյունը, Լոլանդը և այլն:

Դանիան անդամակցում է ՆԱՏՕ-ին, որպես հիմնադիր կազմի պետություն ու Եվրամիությանը (1973թ.), թեև առայժմ խուսափում է եվրոպական միացյալ փոխարժեքի՝ եվրոյի գոտի մտնելուց:

Բնակչության թվաքանակը 5,5 մլն է (2009թ.), որի 49%-ը տղամարդիկ են, կյանքի 76 տարի միջին տևողությամբ, այն դեպքում, երբ կանանց (բնակչության ընդհանուր թվաքանակի 51%-ը) կյանքի միջին տևողությունը 83 տարի է:

Ըստ պաշտոնական վիճակագրության, Դանիայում հաշվվում է մոտ 2 մլն ընտանիք, որոնցից յուրաքանչյուր երկրորդում կա գոնե մեկ աշակերտ կամ ուսանող: Ի դեպ, «ժողովրդագրական ճգնաժամի» պատճառով (ազգաբնակչությունը տարեկան նվազում է 0,03%-ով) Դանիայում իրականացվում է ակտիվ ժողովրդագրական քաղաքականություն, մասնավորապես, պարզեցվում են ներգաղթի օրինականացման հիմքերը և հստակեցվում ներգաղթողների իրավական պարտավորությունները: Դանիայում ազգաբնակչության 6%-ից ավելին կամ շուրջ 340 հազար մարդ ունի գաղթականի կարգավիճակ: Դանիայում բնակվող հայերի թիվը հասնում է 2000-ի, որոնց 3/4-ը հաստատվել է վերջին 20 տարում:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Սորյոյի միջնակարգ դպրոցը՝ հիմնադրված 114 թին ի սկզբանե նախատեսված է եղել հարուստների երեխաների համար:

Դանիայի ժամանակակից կրթական համակարգը գործում է 1994թ. ընդունված «Կրթության մասին» նոր օրենքի շրջանակում: Թեև վերջինս 7-16 տարեկանների համար սահմանում է պարտադիր 9-ամյա կրթություն, սակայն չի նախատեսում դպրոցի ամենօրյա պարտադիր հաճախում: Ընտանիքներում ծնողներն ազատ են իրենց զավակների դպրոցական հաճախումների պարբերականության և ծանրաբեռնվածության ընտրության հարցում: Սկանդինավյան այս երկրում պարտադիր (հատուկ) կրթությունն անվճար է, եթե այն իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների (քաղաքապետարանների) անմիջական ենթակայության տակ գտնվող ուսումնական որևէ հաստատությունում: Զուգահեռաբար գործում են նաև մասնավոր, ոչ պետական մանկապարտեզներ, դպրոցներ, գիմնազիաներ ու քոլեջներ:

Ազգաբնակչության կենսամակարդակը բավականաչափ բարձր է (մեկ բնակչի հաշվով ՀՆԱ-ի մասնաբաժինը կազմում է 360 000 ԱՄՆ դոլար), հետևաբար, մասնավոր դպրոցների ուսման վարձավճարները Եվրոպայում ամենաբարձրն են (ամսական վարձը տատանվում է 150-250 եվրո սահմաններում, տարվա կտրվածքով՝ 1500-2500 եվրո), իսկ աշխարհում զիջում են միայն ԱՄՆ-ին ու Ճապոնիային: Թերևս այդ է պատճառը, որ մասնավոր հատվածի ծառայություններից այսօր օգտվում են հանրակրթական դպրոցներ հաճախողների 12%-ը և գիմնազիաներում ընդգրկված աշակերտների 4,5%-ը:

Կրթական գործընթացներն իրականացվում են նախադպրոցական, հանրակրթական, արհեստագործական, տեխնիկատեխնոլոգիական և համալսարանական ուսումնական հաստատություններում: Դանիան Եվրոպայի միակ պետությունն է, որտեղ օրենքով արգելված է մասնավոր համալսարանական կրթությունը, սակայն դա ամենևին էլ չի խանգարում, որպեսզի դանիական կրթական համակարգը լինի գրավիչ ու մատչելի:

Ավելացնենք նաև, որ Դանիան աշխարհում առաջինն է ՀՆԱ-ի ընդհանուր կառուցվածքից կրթության ոլորտին հատկացվող 8% ֆինանսական միջոցների ծավալով:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Դանիայի կրթական համակարգի ստորին մակարդակը՝ նախադպրոցական կրթությունը, որպես այդպիսին, դեռևս լիարժեք ձևավորված չէ: Բանն այն է, որ դանիացիների մեծամասնությունը նախընտրում է 2-6 տարեկան երեխաների համար վարձել մասնավոր հիմունքներով աշխատող տնային դայակներ, որոնք նախապես պետք է գրանցված լինեն քաղաքապետարանների ենթակայությամբ գործող սոցիալական սպասարկումների ու ծառայությունների վարչության որևէ բաժան-

Սորյո քաղաքում է գտնվում Եվրոպայում մինչ օրս պահպանված ամենահին միջնակարգ դպրոցը

մունքում, ունենան համապատասխան կրթություն, տեղեկանք առողջության մասին և բնակվեն պատվիրատուի բնակատեղիից առավելագույնը մինչև 5 կմ հեռավորության գոտում: Դայակների աշխատանքային օրը տևում է առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան ժամը 20-ը:

Դանիայի նախադպրոցական համակարգում գործում է 352 մանկապարտեզ, որից 244-ը՝ ոչ պետական: Բոլոր մանկապարտեզները (պետական և ոչ պետական) ֆինանսավորվում են քաղաքային բյուջեից, հետևաբար, յուրաքանչյուր նախադպրոցական տարիքի երեխայի համար պետությունն ապահովում է մանկապարտեզում տեղ ունենալու հավասար հնարավորություն:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Դանիայի հանրակրթական (միջնակարգ կրթական) համակարգը հենվում է 1726 պետական և 452 ոչ պետական (մասնավոր) միջնակարգ դպրոցների գործունեության վրա: Ի տարբերություն եվրոպական մյուս պետությունների, դանիական հանրակրթական ուսումնական հաստատություններում չկան տարրական (նախնական), միջին և ավագ դասարաններ: Այսինքն՝ ողջ հանրակրթությունը գործում է որպես մեկ միասնական ու շարունակական ամբողջություն՝ ներառելով պարտադիր 9-ամյա (1-9 դասարաններ) կրթություն բոլոր 7-16 տարեկանների համար:

Դանիայի կազմում ընդգրկված Զելանդիա կղզու Սորյո քաղաքի համանուն կոմունայում է գտնվում Եվրոպայում մինչ օրս պահպանված ամենահին միջնակարգ դպրոցը, որն այսօր էլ ունի 254 աշակերտ:

Դանիական դպրոցի կառուցվածքն ու աշխատակարգը խիստ առանձնահատուկ են:

Այսպես կոչված ֆոլկեսկոլերը (Fokeskole, միջնակարգ դպրոց) հանդիսանում են ապագայի դպրոցի նախատիպ, որի մասին հատուկ ուսումնասիրություններ է կատարել նախորդ դարի 80-ական թվականների հայտնի գիտնական, մանկավարժության տեսաբան անգլիացի Ռոբերտ Փաուելը: Իր՝ մեծ աղմուկ հանած «Ազատ դպրոցի դանիական ավանդույթը բոլորիս համար որպես ուղենիշ» աշխատությունում անգլիացի մանկավարժը գրել է. «Աշխարհի բոլոր անչափահասներն այնքան իրար նման են, որ գնացք նստելիս, ազատ նստելատեղերի առկայության դեպքում, ոտքերը մեկնում են դիմացի նստելատեղին: Սակայն դանիացի նրանց հասակակիցը տարբերվում է նրանով, որ նախապես հանում է իր մարզակոշիկները»: Ասվածի իմաստն այն է, որ առանց գիտելիքների գնահատման թվանշանային համակարգի, պետական կրթական չափորոշիչների, առարկայական հայտորոշիչների ու ծրագրերի, դասասենյակային միջավայրի և պետականորեն երաշխավորված դասագրքերի գործող ֆոլկեսկոլը նախապատրաստում է շատ ավելի առողջ ու բարեկեցիկ, մտածող և ստեղծագործող սերունդ, քան աշխարհի որևէ մեկ

այլ երկրի հանրակրթական համակարգը:

Այս ամենի հիմքում ընկած է ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների դանիական տարբերակը, որտեղ ուսուցիչը ոչ թե դասավանդող է, գնահատող, սաստող, պատժող կամ վերահսկող, այլ ընդամենը խորհրդատու է, կազմակերպիչ, ավագ գործընկեր, անվիճարկելի հեղինակություն, օգնական և համախոհ:

Ուսուցչի առաքելությունը ոչ թե աշակերտներին հնարավորինս շատ գիտելիքներ, փաստեր, անուններ, կանոններ և սահմանումներ հաղորդելն է, այլ սովորեցնել հաղորդակցվել, սովորել, վերլուծել և կողմնորոշվել: Ֆոլկեսկոլերի համար անընդունելի են ցանկացած չափորոշիչ կամ կրթական ծրագիր, քանի որ յուրաքանչյուր միջնակարգ դպրոց ունի իր առանձնահատկությունը: Վերջին 15-20 տարում կառուցված դպրոցներում չկան դասասենյակներ և աշակերտական նստարան-աթոռների զուգահեռ դասավորություն:

Ժամանակակից դանիական դպրոցի մասնաշենք Օդենսե քաղաքում

Դպրոցում չկան դասասենյակներ, և դրանց փոխարինում են հատուկ առանձնացված դասապատրաստման անկյուններ, որտեղ աշակերտները չեն կաշկանդվում սեղանաթոռների անհարմարությունից:

թյամբ շարքեր: Դանիայի կրթության (լուսավորության) նախարարի հավաստմամբ, դպրոցը պետք է լինի աշակերտներին զբաղեցնելու, հետաքրքիր առօրյա անցկացնելու, հետևաբար, տարբեր ընդունակություններով օժտված անհատականություններին տարբերակված ուսումնառության հնարավորություններ տրամադրելու համար:

Առանձնացվում են ֆոլկեսկոլի ընդհանուր կառուցվածքում գործող երեք հանրակրթական ենթամակարդակներ.

1.լրիվ միջնակարգ՝ նախապատրաստական դասարան (6 տարեկանների համար) + պարտադիր 9-ամյա միջնակարգ դպրոց (7-16 տարեկանների համար) + լրացուցիչ 10-րդ դասարան (17 տարեկանների համար),

2.թերի միջնակարգ՝ նախապատրաստական դասարան (6 տարեկանների համար) + 8-ամյա միջնակարգ դպրոց (7-16 տարեկանների համար),

3.հավաքական միջնակարգ՝ նախատեսված եռամյա կամ քառամյա կրթության համար, երբ



աշակերտները 1-4 դասարաններում սովորում են մի մասնաշենքում, 5-7 դասարաններում՝ մեկ ուրիշ մասնաշենքում, իսկ 8-10 դասարաններում՝ բոլորովին այլ մասնաշենքում:

Ի տարբերություն պետական ֆոլկեսկուլի՝ մասնավոր դպրոցների շարքում առանձնացվում են.

1. գյուղական միջավայրում գործող անկախ դպրոցներ կամ գրունտվիգաներ (Grundtvigien, փոքրիկ),

2.եկեղեցական (կաթոլիկ, լյութերական դավանանքի, մահմեդական և այլն) դպրոցներ,

3.առաջանցիկ ազատ դպրոցներ,

4.մասնագիտացված (լեզուների, արվեստի, հումանիտար, բնագիտամաթեմատիկական) դպրոցներ,

5.գերմաներենի խորացված ուսուցմամբ դպրոցներ,

6. ազգային փոքրամասնությունների համար նախատեսված դպրոցներ:

Հետաքրքիր է նկատել, որ միջնակարգ դպրոցների աշակերտության 25%-ն ուսումը թողնում է անավարտ, սակայն նրանց հնարավորություն է տրվում հետագայում մեկամյա դասընթացների միջոցով լրացնել ուսումնառության բացը:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ (ՄԿՈՒ) ՀԱՄԱԿԱՐԳԸ

Դանիայի Թագավորության մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի հիմքը կազմում են մասնագիտական ուսումնարանները և մասնագիտացված քոլեջները:

Մասնագիտական ուսումնարանները տրամադրում են երկամյա նեղ մասնագիտական ուսումնառություն՝ ձեռնարկատիրության (բիզնեսի), տեղեկատվական և արտադրական տեխնոլոգիաների, առևտրի ու հյուրանոցային ենթակառուցվածքների սպասարկման բնագավառներում: Տեսական և գործնական պարապմունքներով համակցված ուսումնառությունը ենթադրում է լսարանային դասընթացների ու արտադրական աշխատանքների 2/3 հարաբերակցություն, իսկ ավարտական վկայականի շնորհումը նախատեսում է հետազոտական նախագծի հաջողված պաշտպանություն, որի մշակմանը հատկացվում է երեք ամիս:

Մասնագիտացված քոլեջներում ուսումնաարտադրական ծրագրերը կազմված են 3-4 տարվա կտրվածքով՝ առավել մեծ ուշադրություն հրավիրելով տնտեսության ոչ արտադրական (սպասարկման) ոլորտի ճյուղերին (ձեռնարկատիրություն, ապահովագրական և բանկային գործ, կրթության կառավարում, զբոսաշրջություն): Տեսական և գործնական պարապմունքները բաշխվում են 3/2 հարաբերակցությամբ, իսկ ավարտական դիպլոմի ու բակալավրի աստիճանի շնորհումը ենթադրում են հետազոտական դիպլոմային նախագծի կամ նորարարական ծրագրային առաջարկի հաջողված պաշտպանություն, որի մշակմանը տրամադրվում է 6-8 ամիս:

Մասնագիտական ուսումնարաններում դասավանդվող, այսպես կոչված «AP» ուսումնաարտադրական ծրագրերը մշակվում են ուսումնարանների մանկավարժական անձնակազմի և ապագա աշխատանքային կադրերով շահագրգռված գործատուների ու արդյունաբերողների ակտիվ մասնակցությամբ: Տեսական

պարապմունքների հիմնական ծանրաբեռնվածությունը (մինչև 80%-ը) իրականացնում են ուսումնարանների հաստիքային մանկավարժդասախոսները, մինչդեռ արտադրական պրակտիկաները և գործնական պարապմունքներն ամբողջությամբ ընթանում են գործատուների կողմից ձևավորված մասնագիտական կոմունաների (հանձնախմբերի) անմիջական մասնակցությամբ, ուղղորդմամբ ու վերահսկողությամբ:

Դանիական ուսումնարաններում դասավանդումը կրում է նեղ մասնագիտական բնույթ, որոնցում պատրաստվում են մասնագիտական խիստ որոշակի որակավորմամբ մասնագետներ, ինչպես ասենք՝ բեռնատարի ավտոմեքենայի մեխանիկ, մարդատար ավտոբուսի մեխանիկ, ուղևորատար ավտոմոբիլի մեխանիկ, ավտոշարժիչի մեխանիկ, կամ ասենք՝ քարտուղար-գործավար, գանձապահ-գործավար, հաշվետար-գործավար, կառավարիչ-գործավար, ցրիչ-գործավար, ծրագրավորող-գործավար և այլն:

Դասավանդումն ընթանում է 5-8 հոգուց բաղկացած խմբերով՝ ապահովելով գիտելիքների այնպիսի մակարդակ, ինչը հնարավորություն է տալիս հետագայում, առանց էական դժվարությունների, ուսումը շարունակել ցանկացած դանիական համալսարանում:

Դանիայի Թագավորության միջին մասնագիտական (քոլեջային) համակարգը ներառում է 114 քոլեջ (48-ը՝ ձեռնարկատիրական, 37-ը՝ տեխնիկական, 10-ը՝ տեխնիկատեղեկատվական, 19-ը՝ գյուղատնտեսական) և 65 մասնագիտացված կենտրոն (ռեստորանային, ճաշարանային, խոհանոցա-հրուշակագործական, վարսավիրական, ապահովագրական և այլն):

Դանիայի ամենամեծ քոլեջում սովորում է 6779 ուսանող, իսկ ամենափոքրում՝ 38: Թեև դանիական քոլեջները չունեն մեկ միասնական (կենտրոնացված) ենթակայություն, սակայն դրանք բոլորն էլ խմբավորվում են՝ ըստ ոլորտային կառավարման խորհուրդների: Այդպիսիք ութն են.

1. տեխնոլոգիա և հաղորդակցություն (կապ),
2. շինարարություն և նախագծում,
3. արհեստագործություն և ինժեներական նախագծում,
4. ֆերմերային տնտեսություն և մթերում,
5. հասարակական սնունդ և առաքում,
6. մեխանիկա, տրանսպորտ և բեռնափոխադրում,
7. առևտուր, հաճախորդների սպասարկում և ապահովագրություն,
8. գործավարություն և ֆինանսավարկային գործունեություն:

Ի դեպ, դանիական քոլեջների շրջանավարտներին տրվում է երկու վկայական, մեկը՝ տեղական, մյուսը՝ Եվրամիության աշխատաշուկայի պահանջների համակողմանի հաշվառմամբ, որը հնարավորություն է տալիս հեշտությամբ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՄԿՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Խորհրդային հասարակարգի փլուզումից հետո ինչպես ԱՊՀ բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում տնտեսության վերակազմավորման և բոլոր ոլորտներում բարեփոխումների նոր ժամանակաշրջան սկսվեց: Կենտրոնացված պլանային տնտեսությունից անցում կատարվեց մասնավորեցման, առևտրային նոր հարաբերությունների հաստատման: Ազատ շուկայական տնտեսության պայմաններում կարևոր խնդիր դարձավ մասնագիտական կրթության համապատասխանեցումը աշխատաշուկայի պահանջարկին:

Սոցիալական տարբեր ոլորտների լայնածավալ բարեփոխումների հիմքում դրվեց մասնակցային գործընթացների զարգացման և երկխոսության միջոցով սոցիալական գործընկերության համակարգի գործարկումը:

Սոցիալական գործընկերությունը արտադրական գործընթացի մասնակիցների, գործատուների և աշխատակիցների (աշխատավորների) միջև համաձայնեցման մեխանիզմերի համակարգ է: Սոցիալական գործընկերության զարգացումը ժամանակակից շուկայական տնտեսության սոցիալական ուղղվածության ուժեղացման հիմնարար մասն է: Այստեղ աշխատավորների շահերը, որպես կանոն, ներկայացնում են արհեստակցական միությունները, իսկ գործատուներինը՝ գործատուների միությունները: Շահերի համաձայնեցման գործընթացի եռակողմ տարբերակում երրորդ անմիջական մասնակից է հանդես գալիս պետությունը, որը միաժամանակ նաև ընդունված համաձայնությունների երաշխավորողն է: Շահերի համաձայնեցման կողմերը հասնում են բանակցությունների միջոցով, որի ընթացքում նրանք համաձայնության են գալիս աշխատանքի պայմանների և վարձատրության, աշխատավորների սոցիալական երաշխիքների և նմանատիպ այլ հարցերի շուրջ:

Ընդհանուր առմամբ, սոցիալական գործընկերության համակարգի զարգացումը համագործակցության, փոխզիջման, համաձայնության և հաշտեցման միջոցով հնարավորություն է տալիս հասնել գործատուների և աշխատավորների հետաքրքրությունների համեմատական հավասարակշռության, բերում է սոցիալական համերաշխության:

Եռակողմ պրիզմայից բացի, սոցիալական գործընկերության առավել լայն շրջանակների ներգրավումը քաղաքացիական հասարակության, ժողովրդավարության սկզբունքի ձևավորման լավագույն տարբերակներից է: Շուկայամետ երկրներում արդյունավետ համագործակցության այս մեխանիզմի կիրառումը բերում է բնակչության կյանքի մակարդակի բարձրացմանը, սոցիալական և արտադրական ենթակառուցվածքների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի կատարելագործմանը և անհատի ազատությանը:

Այս համատեքստում դիտարկելով կրթությունը որպես հասարակության առավել լայն խմբերի հետաքրքրության ոլորտ՝ սոցիալական գործընկերության համակարգի ներդրումը դառնում է անհրաժեշտ պայման՝ շահագրգիռ բոլոր կողմերի արդյունավետ համագործակցության և շոշափելի արդյունքներ ստանալու համար:

Ինչպես անցումային շատ երկրներում, Հայաստանում ևս մասնագիտական կրթության համակարգում սոցիալական գործընկերության հաստատումն ու զարգացումը կարող են շատ հարցերի լուծում տալ: Ուստի վերջին տարիներին իրականացվող, հատկապես, միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) համակարգի բարեփոխումների շրջանակներում հանրապետական, տեղական և ճյուղային մակարդակներում գործարար/գործատուների ներգրավման համար ստեղծվեցին լայն հնարավորություններ:

Այսօր Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթության և գործարարության՝ բիզնեսի միջև անհրաժեշտ է զարգացնել գիտելիքի շրջանառությունը, որը նախապայման կդառնա՝ մի կողմից մասնագիտական կրթության որակի բարձրացմանն ու գործարարության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը, մյուս կողմից՝ աշխատուժի ձևավորմանը: Գիտելիքի շրջանառությունը կարող է նաև բիզնեսին հաղորդել հստակ առավելություններ՝ նորարարական նախաձեռնությունների ներդրման միջոցով: Այս սկզբունքը կենսագործելի է, եթե կրթությունը և բիզնեսն աշխատեն միասին, ինչպես որ ցույց է տալիս աշխարհի առաջավոր փորձը:

Սոցիալական գործընկերությունը Հայաստանի ՄԿՈՒ ոլորտում

Հայաստանի կառավարությունն իր ռազմավարական ծրագրերում ներառում է սոցիալական գործընկերությունը՝ որպես գերակայություն:

ՀՀ կրթության և գիտության նախարարության Կրթության ազգային ինստիտուտի Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի (ՄԿՈՒԶԱԿ) կողմից՝ Եվրոպական կրթական հիմնադրամի օժանդակությամբ մշակվեց «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում սոցիալական գործընկերության հայեցակարգ», որը ներկայացնում է այդ ոլորտում սոցիալական գործընկերության կայացմանը վերաբերող ռազմավարական խնդիրներ, և առաջարկում է բոլոր կողմերի շահերից բխող լուծումներ, իսկ 2009թ. ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ այն հաստատվեց:

Սոցիալական գործընկերության ձևավորման ու հետագա զարգացման համար կարևոր նախապայմաններ են.

- «Հայաստանի նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնա գիտական կրթության և ուսուցման ռազմավարությունը»,
- «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որտեղ ՄԿՈՒ ոլորտի զարգացման համար կարևորվում է սոցիալական գործընկերության սկզբունքը:

Հայաստանի ՄԿՈՒ ոլորտում սոցիալական գործընկերության սկզբունքներն ու մակարդակները

Հայաստանի Հանրապետության ՄԿՈՒ ոլորտում սոցիալական գործընկերության խնդիրների և հիմնական սկզբունքների սահմանման համար հիմք են ընդունվում.

- համապատասխան միջազգային փորձը,
- Հայաստանի Հանրապետության առկա պայմաններն ու ավանդույթները,
- ոլորտին վերաբերող իրավական ակտերը, հայեցակարգային փաստաթղթերը, զարգացման ծրագրերը:

Հայաստանում մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում սոցիալական գործընկերության հիմնական սկզբունքներ են ընդունվում՝

- կողմերի իրավահավասարությունը.
- կոլեկտիվ բանակցությունների ազատությունը.
- կողմերի շահերը հաշվի առնելը և հարգալից վերաբերմունք դրսևորելը.
- կողմերի ներկայացուցիչների լիազորվածությունը.
- քննարկման առաջարկվող՝ աշխատանքի վերաբերյալ հարցերի ընտրության ազատությունը.
- պարտավորություններ ստանձնելու կամավորությունը.
- ընդունվող պարտավորությունների իրատեսական լինելը.
- կողմերի և նրանց ներկայացուցիչների կողմից աշխատանքային օրենսդրության և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները պահպանելը:

Սոցիալական գործընկերության կողմեր են՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը.
2. Գործատուներին/գործարարներին ներկայացնող կազմակերպությունները.
3. Արհեստակցական միությունները.

Սահմանվում է սոցիալական գործընկերության 4 մակարդակ՝

- ազգային.
- տեղական (հաստատութենական)
- ճյուղային.
- տարածքային:

Սոցիալական գործընկերների դերերը և ինստիտուցիոնալ կազմը

Ազգային մակարդակով սոցիալական գործընկերությունը ձևավորելու նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ ստեղծվել է Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային խորհուրդ (ՄԿՈՒԶԱԽ):

ՄԿՈՒԶԱԽ-ը եռակողմ խորհրդակցական մարմին է, ներառում է 21 անդամ, հավասար թվաքանակով ընդգրկվում են սոցիալական գործընկեր ճանաչված կողմերի առաջադրած անդամներ:

ՄԿՈՒԶԱԽ-ի հիմնական նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության ՄԿՈՒ զարգացման վերաբերյալ խորհրդատվություն տրամադրել այդ ոլորտի լիազորված պետական կառավարման մարմնին:

ՄԿՈՒԶԱԽ-ի հիմնական գործառույթներն են՝

- քննարկել և առաջարկություններ ներկայացնել ՀՀ մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարությանը, և զարգացման ծրագրերի, ոլորտի քաղաքականությանը վերաբերող այլ փաստաթղթերի և իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ.
- քննարկել և ներկայացնել առաջարկություններ ՀՀ տնտեսության համար նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության պլանավորման և բովանդակության նկատմամբ պահանջների, մասնագետներին ու դրանց պատրաստմանը

ներկայացվող պահանջների և պայմանների վերաբերյալ.
- քննարկել և ներկայացնել այլ առաջարկություններ Հայաստանի Հանրապետության ՄԿՈՒ ոլորտի բարելավման ուղղությամբ:

Տեղական մակարդակով սոցիալական գործընկերությունն ապահովելու նպատակով ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում ձևավորվում են կոլեգիալ կառավարման մարմիններ՝ Խորհուրդներ (ՄԿՈՒՀԽ):

ՄԿՈՒՀԽ-ները, որոնց անհատական կազմերը հաստատում է պետական կառավարման համապատասխան լիազորված մարմինը, ներառում են մինչև 20 անդամ.

- Դասախոս՝ 1-4 անդամ,
- ուսանող՝ 1-4 անդամ,
- կառավարություն՝ 1-4 անդամ,
- գործատուներ՝ 1-4 անդամ,
- արհեստակցական միություններ՝ 1-4 անդամ:

ՄԿՈՒՀԽ-ի ներկայիս հիմնական գործառույթներն են.

- առաջարկություններ է ներկայացնում մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատության գործունեության հիմնական ուղղությունների բարելավման վերաբերյալ,
- հիմնադրի սահմանած կարգով որոշում է մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատության շահույթի տնօրինման ուղղությունները,

• քննարկում և հաստատում է տնօրենի հաշվետվությունները,

• քննարկում է մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատության հաշվապահական և այլ հաշվետվությունները, տարեկան ծախսերի նախահաշիվը,

• կազմակերպում և անցկացնում է մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատության տնօրենի ընտրությունը,

• քննարկում է մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատության զարգացման ծրագրերը,

• քննարկում և հիմնադրի հաստատմանն է ներկայացնում ուսումնական հաստատության կանոնադրության նախագիծը, դրանում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին առաջարկությունները:

Միաժամանակ ՄԿՈՒՀԽ-ի խնդիրների մեջ են մտնում՝

• տեղական աշխատաշուկայի իրավիճակի և հետագա միտումների ներկայացումը,

• ուսումնական հաստատությունում ուսուցանվող մասնագիտությունների և որակավորումների ցանկերը աշխատաշուկային համապատասխանեցնելու ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը,

• ուսումնական հաստատության զարգացման ծրագրերի հիմնավորման համար տվյալների ներկայացումը,

• ուսանողների և աշխատողների սոցիալական և աշխատանքային պայմանների բարելավման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,

• մասնագիտական կրթության բնագավառում իրականացվող քաղաքականությունից բխող խնդիրների առաջադրումը,

• աջակցությունն ուսանողների գործնական ուսուցման կազմակերպմանը և կարիերայի զարգացմանը,

• մասնակցությունը ուսումնական հաստատության զարգացման պլանների մշակմանը և այլն:

Ճյուղային և տարածքային մակարդակներ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության համեմատաբար փոքր տարածքը և ռեսուրսների սահմանափակությունը՝ ճյուղային և տարածքային մակարդակներում սոցիալական գործընկերության կառույցներ (ժամանակավոր կամ մշտական ճյուղային (տարածքային) խորհուրդներ կամ հանձնաժողովներ) ստեղծվում են միայն տնտեսության տվյալ ճյուղի կամ տարածաշրջանի (Հայաստանի Հանրապետության մարզի) համար առանձնահատուկ խնդիրների լուծման նպատակով՝ սոցիալական գործընկերների միջև համագործակցության հաստատման անհրաժեշտության առաջացման դեպքում՝ ՄԿՈՒԶԱԽ-ի առաջարկությամբ:

ՄԿՈՒ համակարգում սոցիալական գործընկերության հաստատումն ու զարգացումը կարող է շատ հարցերի լուծում տալ: Ներկայումս հանրապետությունում իրականացվող ՄԿՈՒ համակարգի բարեփոխումները փորձում են արձագանքել բոլոր խնդիրներին: Որպես առաջընթաց քայլ, պետք է փաստել հանրապետական, տեղական և ճյուղային մակարդակներում գործատուների ներգրավման համար պետության կողմից հնարավորությունների ստեղծումը:

«Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում սոցիալական գործընկերության հայեցակարգի» մշակմանը անմիջական մասնակցություն է ունեցել ՀՀ առևտրա արդյունաբերական պալատը (ՀՀ ԱԱՊ): ՀՀ ԱԱՊ-ն որդեգրել է մի քաղաքականություն, որն ուղղված է մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում կայուն գործընկերային հարաբերությունների հաստատմանն ու զարգացմանը, պետական կառավարման համակարգի դերակատարների հետ սոցիալական երկխոսության կայացմանը: Այս ուղղությամբ արդյունքներն այսօր արդեն նկատելի են. ՀՀ ԱԱՊ-ն իր մասնակցությունն ունի 2008թ. ՀՀ վարչապետի որոշմամբ

ստեղծված ՄԿՈՒ զարգացման ազգային խորհրդում՝ երեք ներկայացուցչի ներգրավմամբ, քոլեջների կառավարման խորհուրդներում և մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների մշակման աշխատանքներում, ոլորտային հանձնաժողովներում: Որպես սոցիալական գործընկերության տրամաբանական շարունակություն՝ 2009 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի և Հայաստանի գործատուների հանրապետական միության միջև ստորագրվեց մասնագիտական կրթության ոլորտում համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիրը՝ սահմանելով այն հիմնական խնդիրներն ու գործառույթները, որոնց շուրջ կողմերը պատրաստակամություն հայտնեցին առավել ակտիվ համագործակցել:

ՄԿՈՒ համակարգի բարեփոխումները վերջին երեք տարվա ընթացքում թևակոխել են գործարկման լուրջ մի ժամանակաշրջան, որին իր մասնակցությունն է բերում ՀՀ ԱԱՊ-ն: Կարևոր քայլն այն է, որ այս ոլորտում ռազմավարական մոտեցումների ձևավորումը և քաղաքականության մշակումն արդեն իրողություն է. անհրաժեշտ է հետևողական և շարունակական աշխատանք տանել՝ ցանկալի արդյունք ստանալու համար:

Սոցիալական գործընկերության ձևավորումը նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում համընդհանուր խնդիր է և ընդգրկում է հասարակության տարբեր շերտերի շահերը, որը կնպաստի այդ ոլորտում տեղի ունեցող բարեփոխումներին հավասար իրավունքներով մասնակից և պատասխանատու դարձնելուն:

Նախատեսվում է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական համակարգի հեղինակության, ուսումնական հաստատությունների շրջանավարտների մրցունակության բարձրացում և շահերի պաշտպանություն աշխատաշուկայում, որն իր հերթին կհանգեցնի աղքատության հաղթահարմանն ու երկրի սոցիալտնտեսական զարգացմանը:

Սոցիալական գործընկերության նպատակներից է ՄԿՈՒ համակարգի և աշխատաշուկայի միջև կապեր հաստատելու և համագործակցության ապահովումը, քանի որ ՄԿՈՒ համակարգի շրջանավարտները չեն բավարարում աշխատաշուկայի պահանջներին և մրցունակ չեն: Նրանց կրթական որակական չափանիշները և գործատուների պահանջները չեն համապատասխանում միմյանց, այն դեպքում երբ զարգացող տնտեսության պայմաններում առկա է որակյալ աշխատուժի աճող պահանջարկ: Սոցիալական համագործակցությունը կհանգեցնի գործատուներին հմուտ և որակյալ մասնագետների տրամադրման՝ ի պատասխան ապահովելով նրանց համապատասխան աշխատանքով, տալով նրանց նյութական բարեկեցություն:

Համալրելով ուսումնական հաստատությունները բարձորակ մասնագետներով, ընդլայնելով ուսանողների արտադրական փորձի հնարավորությունները, ուսումնասիրելով գործատուների պահանջարկը՝ կարելի է նպաստել ՄԿՈՒ համակարգի և աշխատաշուկայի պահանջարկի միջև անհամապատասխանությունների նվազեցմանը:

Սոցիալական երկխոսության արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ է ՄԿՈՒ ոլորտում միասնական քաղաքականության մշակում և իրականացում, առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործմամբ:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀՀ ԱՌԵՎՏՐԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԱՐՏԻՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԵՏ

Շուկայամետ երկրներում տնտեսության զարգացման կարևոր նախապայմաններից մեկը՝ սոցիալական գործընկերության սկզբունքով քաղաքականությունների վարումն է: Մեր երկրում այդ մասին առավել հաճախ խոսում ենք վերջին տասնամյակում: Ինչ դերակատարություն ունի ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը (ԱԱՊ) Հայաստանի Հանրապետությունում սոցիալական գործընկերության հաստատման գործում:

Ինչպես ազատ տնտեսական հարաբերություններ ունեցող ցանկացած երկիր, այնպես էլ Հայաստանն անկախացումից հետո կարևոր քայլ կատարեց երկրի սոցիալ-տնտեսական քաղաքականության մեջ՝ կիրառելով սոցիալական գործընկերության սկզբունքը: ՀՀ ԱԱՊն լինելով Հայաստանի գործարարներին միավորող ամենախոշոր կառույցներից մեկը՝ իր մասնակցությունը բերեց այդ գործընթացում: Հատկապես մասնագիտական կրթության ոլորտում ՀՀ ԱԱՊ-ն մեծ անելիքներ ունի՝ ելնելով մի կողմից գործարարության շահերից, մյուս կողմից՝ հասարակության և պետության: Այսօր գործարարը կարիք ունի որակյալ աշխատուժի, որի պատրաստման գործում կարևոր դեր ունեն միջին մասնագիտական և արհեստագործական ուսումնական հաստատությունները: Իսկ վերջիններս մեծ մասամբ չունեն աշխատաշուկային միտված կրթական ծրագրեր և համապատասխան պայմաններ, բավարար հիմքերի վրա չէ գործակցությունը գործարարների հետ: Այս պայմաններում ստեղծվում է ակնհայտ անհավասարակշռություն աշխատաշուկայի և կրթության միջև: Այս խնդիրներին անտարբեր չի կարող անցնել ՀՀ ԱԱՊ-ն: Մասնավորապես առևտրի և արդյունաբերության ոլորտի մասնագետների պատրաստման գործընթացում այն պետք է հանդես գա որպես լուրջ սոցիալական գործընկեր:

Որպես առաջընթաց քայլ, պետք է փաստել մի շարք գործընթացներում՝ հանրապետական, տեղական և ճյուղային մակարդակներում գործարարների ներգրավման համար հնարա-

վորությունների ստեղծումը: Մասնավորապես, 2008թ. ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված ՄԿՈՒ զարգացման ազգային խորհրդում ՀՀ ԱԱՊ-ն, որպես սոցիալական գործընկեր, ներգրավվեց իր ներկայացուցիչներով: ՀՀ ԱԱՊ ներկայացմամբ գործարարներն ընդգրկվեցին քոլեջների կառավարման խորհուրդներում և մասնագիտության պետական կրթական չափորոշիչների մշակման աշխատանքներում: Նրանց մասնակցությամբ ստեղծվեցին ոլորտային հանձնաժողովներ: 2009թ. ՀՀ ԱԱՊ-ն մասնակցեց նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից մշակվող «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում սոցիալական գործընկերության հայեցակարգի» աշխատանքներին: Փաստաթուղթը հաստատվեց ՀՀ կառավարության կողմից՝ նպատակ ունենալով նպաստել ՄԿՈՒ ոլորտում սոցիալական գործընկերության ինստիտուցիոնալացմանը:

2009-ի ձեռքբերումների շարքում առանձնակի ուշադրության է արժանի նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի և Հայաստանի գործատուների հանրապետական միության միջև ստորագրված մասնագիտական կրթության ոլորտում համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիրը, որով կայուն հիմքեր ստեղծվեցին ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ:

Այսպիսով, ՄԿՈՒ ոլորտում ՀՀ ԱԱՊ մասնակցությամբ սոցիալական գործընկերության ռազմավարական մոտեցումների ձևավորումը և քաղաքականության մշակումն արդեն հաստատված է. անհրաժեշտ է հետևողական և շարունակական աշխատանք տանել՝ ցանկալի արդյունք ստանալու համար:

Բացի այս ոլորտից, ՀՀ ԱԱՊ-ն առաջին քայլերն է կատարում կարիերայի ուղղորդման և մասնագիտական կողմնորոշման համակարգում սոցիալական կայուն գործընկերություն հաստատելու ուղղությամբ: Սակայն դա դեռ նախաձեռնությունների փուլում է:

Մասնագիտական կրթության կայացումը ՀՀ ԱԱՊ գերակայություններից է համարվում: Ի՞նչ քայլեր են փարվել այս ուղղությամբ:

ՄԿՈՒի զարգացումը կարևոր նախադրյալ է գործարարության առաջխաղացման համար: Այն կարող է աջակցել բիզնեսին ինովացիոն կարողունակությունների զարգացման գործում ամուր հիմքեր ապահովելու, նորագույն տեխնոլոգիաների ներդրման, մրցունակ աշխատուժի ձևավորման և փոխկապակցված այլ խնդիրների լուծման համար: Ուստի ՀՀ ԱԱՊ-ն իր տարեկան ծրագրերում որպես առանձին ուղղություն է նախանշում մասնագիտական կրթությունը: Կարևորելով ՄԿՈՒ

համակարգը՝ որպես ԱԱՊ ոլորտային շրջանակներն ընդգրկող հիմնական մասնագիտական ուղղություն, առանձնակի ուշադրություն է դարձվում այս խնդրին և գործընկեր՝ պետական, հասարակական ու միջազգային մի շարք կառույցների հետ համատեղ պարբերաբար կազմակերպվում են սեմինարներ, կլորսեղաններ, քննարկումներ: Այս համատեքստում առավել կարևորվում է տեղեկատվության փոխանակումը: Խոսքը վերաբերում է աշխատաշուկայի ներկա նկարագրին, կանխատեսվող զարգացումներին, մասնագիտությունների և զբաղմունքների նկատմամբ ներկայացվող պահանջներին և դրանց փոփոխմանը: Որակյալ կադրերի պատրաստման գործում, ի թիվս այլ գործընթացների, մեր մասնակցությունը պայմանավորված է նաև կրթական չափորոշիչների մշակմամբ, պրակտիկաների անցկացմամբ, կրթօջախների կառավարման խորհուրդներում գործարարների մասնակցության ապահովմամբ: Այս ուղղությամբ առաջնային ենք համարում նաև հանրային իրազեկումը: Դրանով փորձում ենք փոփոխել հասարակական կարծրատիպերը՝ կապված ՄԿՈՒ ոլորտի հետ, բացատրել հանրության լայն շրջանակներին, հատկապես՝ ծնողներին ու ապագա ուսանողներին, որ ՄԿՈՒ ոլորտը մեծ դեր ունի և ՄԿՈՒ շրջանավարտները բավականին պահանջարկված են այսօրվա աշխատաշուկայում:

Փաստորեն, ՀՀ ԱԱՊ-ն ակտիվ ներգրավվածություն ունեն ՄԿՈՒ համակարգի քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում: Նկատելի՞ են արդյոք, հաջողությունները, և ի՞նչ արդյունքներ են գրանցվել:

Այո, բավականին լայն ներգրավվածություն ունեն: Դեռևս վաղ է գլոբալ արդյունքների մասին խոսել, ինչպես օրինակ՝ քոլեջների կողմից աշխատաշուկայի համար մրցունակ կադրերի պատրաստումը, կամ մասնագիտական ուսումնական հաստատություններում գործարարների լիակատար ներգրավումը,

սակայն հաջողություններն ակնհայտ են: Ինչպես, օրինակ, այն, որ գործատուները մասնակցելով քոլեջի կառավարմանը, պատրաստ են անշահախնդիր ներդրումներ կատարել. կարող են ապահովել գույքտեխնիկայով, անհրաժեշտ մասնագիտական գործիքներով: Կամ՝ հաջողություն է նաև այն, որ ուսանողներն իրենց արտադրական պրակտիկան անցկացնում են ոչ թե «փողոցներում», այլ իրենց քոլեջի կառավարման խորհրդի անդամգործարարի ձեռնարկությունում և ապագայում հնարավորություն են ստանում նաև աշխատելու: Այս ուղղությամբ առանձնակի փաստեր կան արդեն: Գիտեք, կարևորը գործարարների ներգրավվածության բարձր մակարդակ և բազմազանություն ապահովելն է: Սա խնդիր է, որի լուծումն իր հետ բերում է հաջողություններ: Սոցիալական գործընկերությամբ աշխատելու գործընթացները դեռ նոր են ակտիվանում, ուստի արդյունքների մասին խոսելու համար ժամանակ է պետք:

Իսկ ինչպիսի՞ն է մասնագիտական կրթության ոլորտում ԱԱՊ-ների ներգրավվածության միջազգային փորձը:

Այս ուղղությամբ մեզ համար շատ ուսանելի է, օրինակ, գերմանական փորձը: Այնտեղ գործում է երկակի կրթական համակարգ, և դպրոցական աշակերտների 2/3-ը մասնագիտական ճանապարհն անցնում է այս համա-

կարգով: Ինչպես է գործում այս համակարգը. ուսումնառության ընթացքում աշակերտը մեկ-երկու օր անցկացնում է դպրոցում և երեք չորս օր ձեռնարկությունում: Սակայն ձեռնարկությունը պետք է ունենա համապատասխան կադրեր, տեխնիկա և հնարավորություններ, ինչը վերահսկվում է առևտրաարդյունաբերական պալատների կողմից: ԱԱՊ-ի կողմից առևտրի և արդյունաբերության ոլորտում ուսուցում անցկացնելու համար տրվում է թույլտվություն: Վերահսկվում են նաև մասնագիտական կրթական ծրագրերը, ուսուցման ընթացքը, անցկացվում են քննությունները, տրվում է որակավորում: Երբ երիտասարդը գտնում է ձեռնարկություն, որտեղ պետք է աշխատի և ուսումը շարունակի, գործատուի, աշակերտի և ծնողների միջև կնքված է երկակի ուսուցման պայմանագիր, որը գրանցվում է ԱԱՊ-ի համապատասխան ռեգիստրում: Մասնագիտական կրթությունն իրականացվում է երեք տարով: Մեկուկես տարի հետո և վերջում աշակերտը ԱԱՊ-ի իրավասու մարմնի կողմից հրավիրվում է քննության և ստանում մասնագիտական որակավորում: Փաստորեն, այս գործընթացներում կարևոր մասնակցություն ունեն ԱԱՊ-ները: Կարծեմ թե այսպիսի համակարգ գործում է նաև Դանիայում:

Կամ, Բրիտանիայում գործարարները ՄԿՈՒ համակարգում ներգրավված են ոլորտային կարողությունների խորհուրդների միջոցով, որոնք ղեկավարվում և գործում են գործատուների կողմից: Դրանք գործարարներին համախմբող կառույցներ են, որոնք ապահովում են կառավարության, մասնավորապես՝ կրթության համակարգի գործընթացներում գործարարության ներգրավվածությունը:

Նման օրինակներ շատ կարելի է թվարկել՝ տարբեր երկրների փորձից: Կարևորն այն է, որ կարողանանք արդյունավետ գործող համակարգերը տեղայնացնել և ներդնել մեր հանրապետությունում:

Այս ուղղությամբ ինչպիսի՞ ապագայում քայլեր եք կարևորում:

Ինչպես ասացի, կան դեռևս չլուծված խնդիրներ, և մասնագիտական կրթության կայացումը կախված է այդ խնդիրների լուծումից: Ուստի ձեռք բերվածով մենք բավարարվել չենք կարող, պետք է մտածենք հեռանկարային ծրագրերի մասին: ՄԿՈՒ զարգացման համար սոցիալական գործընկերության ամրապնդումը կարևոր քայլ եմ համարում: Անհրաժեշտ է շարունակել վերը նշված գործընթացները, ապահովել գործարարների ավելի լայն մասնակցություն, իրազեկվածություն: Մեր պատկերացրած համակարգին հասնելու համար պետք է աջակցենք նաև աշակերտների, երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման խնդիրներին՝ այսօր կերտելով վաղվա ապագան: Շատ եմ կարևորում նաև անձի շարունակական կրթությունը կամ ինչպես ասում են՝ «ցկյանս ուսումնառությունը», քանի որ տնտեսությունը զարգացում է ապրում փոփոխություններով, որոնց արտացոլումը պետք է անպայման գտնի կրթության մեջ: Այստեղ ասելիքները շատ են՝ վերապատրաստումների, ոչ ֆորմալ ուսուցման, որակավորումների կազմակերպում և անցկացում: ՀՀ ԱԱՊ-ն պետք է աշխատանք տանի նաև այս ուղղություններով: Սրանք նախաձեռնություններ են, որոնց կատարումը տեսնում ենք մոտ ապագայում:

Մարդկանց իմաստությունը համեմատական է ոչ թե նրանց փորձին, այլ այն ձեռք բերելու նրանց ընդունակությանը:

Բեռնարդ Շոու

ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ

Լոռու մարզը ՀՀ երրորդ մարզն է իր տարածքի մեծությամբ՝ 3789կմ^2 (զբաղեցնում է ՀՀ տարածքի 12.7%-ը), իսկ 283.9 հազ. մարդ բնակչության թվաքանակով՝ երկրորդը (ք.Երևանից հետո):

Մարզի տնտեսության առաջատարներն են գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը: Գյուղատնտեսության ոլորտում առանձնանում են հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնապահական մթերքի արտադրությունները: Մարզի արդյունաբերության հիմնական ուղղությունը մետաղագործական արդյունաբերության և սննդամթերքի արտադրության ճյուղերն են:

Լոռու մարզում նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացվում է 1 տարածաշրջանային բազմագործառութային քոլեջում, 7 միջին և 3 նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններում (ՈՒՀ):

Քաղաք	Տարածաշրջանային բազմագործառութային քոլեջ	Միջին մասնագիտական ՈՒՀ	Նախնական մասնագիտական ՈՒՀ
Վանաձոր	1	4	1
Սպիտակ	-	2	-
Ալավերդի	-	1	1
Ստեփանավան	-	-	1

ՎԱՆԱՁՈՐ

Քաղաքում են կենտրոնացված մարզի ինչպես տնտեսական, կրթական, այնպես էլ մշակութային կենտրոնները: Մինչև ԽՍՀՄ փլուզումը Կիրովականը մեկ շնչին ընկնող ձեռնարկությունների թվով առաջինն էր Հայաստանում: Այժմ դրանցից շատ քչերն են պահպանվել. Վանաձորի «խորհրդանիշ» դարձած քիմիական գործարանը, օրինակ, հազիվ է դիմակայում շուկայական հարաբերություններին: Այնուամենայնիվ, կան փոքր և միջին մեծության ընկերություններ, որոնք զբաղվում են սննդամթերքի և կենցաղային իրերի արտադրությամբ:

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ

1936թ. հիմնվել է մանկաբարձական դպրոցը, որը 1947թ. վերանվանվեց բուժքույրական տեխնիկում: 1972թ. հիմնադրվեց Կիրովականի բժշկական ուսումնարանը, որն էլ 2004թ. դարձավ Վանաձորի պետական բժշկական քոլեջ: Այժմ քոլեջն ունի 750 ուսանող, իսկ շրջանավարտների թիվն այս տարի կազմել է 377 մասնագետ:

Քոլեջում ուսուցանվում են հետևյալ մասնագիտությունները՝

- Քույրական գործ,
- Մանկաբարձական գործ,
- Դեղագործություն,
- Ատամնատեխնիկական գործ,
- Բուժական կոսմետոլոգիա:

ՎԱՆԱՁՈՐԻ Մ. ԹԱՎՐԻԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ

1951թ. հիմնվեց Վանաձորում առաջին երաժշտական ուսումնարանը, իսկ 1971թ. կառուցվեց արվեստի ապագա քոլեջի համար նախատեսված մասնագիտական շենքը: 2005թ. ուսումնարանը վերանվանվեց Վանաձորի Մ. Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջ: Այժմ քոլեջում սովորում է 118 ուսանող: Այն տարեկան մոտ 20 շրջանավարտ է տալիս, որոնց 2009թ. սկսած տրվեց հնարավորություն քոլեջին կից նորաբաց երաժշտական դպրոցում անցկացնել պրակտիկա: Փորձը հաջողվեց, և դպրոցն արդեն ունի 70 աշակերտ:

Քոլեջում ուսուցանվում են հետևյալ մասնագիտությունները՝

- Երգեցողություն,
- Գործիքային կատարողական արվեստ (ըստ գործիքների տեսակների),
- Երգչախմբավարություն,
- Երաժշտության տեսություն,
- Գեղանկարչություն:

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ

Գյուղատնտեսական դպրոցը հիմնվել է դեռևս 1925թ.: 1932թ. նրան են միավորվել Իջևանի, Օձունի տեխնիկումները և Կիրովականի անտառ դպրոցը, իսկ 1970թ.՝ դարձել Սովխոզ տեխնիկում: 2001թ. միավորվել են գյուղատնտեսական և գյուղատնտեսաշինարարական տեխնիկումները, և հիմնվել է Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ: Այժմ քոլեջն ունի 254 ուսանող: Վերջին տարիներին քոլեջն ունենում է տարեկան մոտ 100 շրջանավարտ:

Քոլեջում ուսուցանվում են հետևյալ մասնագիտությունները՝

- Իրավագիտություն,
- Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (ըստ ճյուղերի),
- Մենեջմենթ (կառավարում) (ըստ ճյուղերի),
- Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների),
- Անտառային և անտառապուրակային տնտեսություն:

ՎԱՆԱՁՈՐԻ Ս. ԹԵՎՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ

Քոլեջը հիմնադրվել է 1965թ. որպես քիմիատեխնոլոգիական տեխնիկում: Այնուհետև 1986թ. վերանվանվել է Ս.Թևոսյանի անվան պոլիտեխնիկական քոլեջ: 2000թ. մարտի 3-ից նրան է միացել Վանաձորի թիվ 47 ուսումնարանը և երկու տարի անց վերանվանվել է Վանաձորի Ս. Թևոսյանի անվան պետական պոլիտեխնիկական քոլեջ: Այժմ քոլեջում սովորում է 300-ից ավել ուսանող: Ուսումնական հաստատության տարեկան շրջանավարտների թիվը կազմում է 100-120 մասնագետ:

Քոլեջում ուսուցանվում են հետևյալ մասնագիտությունները՝

- Թարգմանություն և գործավարություն,
- Օտար լեզվի դասավանդում,
- Դասավանդում տարրական դասարաններում,
- Նախադպրոցական կրթություն,
- Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (ըստ ճյուղերի),
- Զարդային կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ:

ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Ուսումնարանը գործում է ընդամենը 2 տարի: Այն ստեղծվել է Վանաձորի թիվ 3 գիշերօթիկ դպրոցի հիման վրա: Այժմ այստեղ սովորում է 127 ուսանող, իսկ շրջանավարտների թիվն անցնում է 20-ը:

Ուսումնարանում դասավանդվում են հետևյալ մասնագիտությունները՝

- Դիզայն (ըստ ճյուղերի),
- Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա,
- Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների),
- Կամուրջների շինարարություն,
- Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ,
- Հասարակական սնունդ:

ՍՊԻՏԱԿ

Քաղաքի պատմությունը կարելի է բաժանել երկու հատվածների՝ մինչև 1988թ. երկրաշարժը և դրանից հետո: Մինչև 1988թ. այն հանրապետության արդյունաբերական կենտրոններից էր: Քաղաքում գործում էին շաքարի, ինչպես նաև վերելակաշինական գործարանները, որոնք միակն էին հանրապետությունում:

Ներկայումս քաղաքում կան փոքր ու միջին արտադրական մի քանի կազմակերպություններ, բայց բնակչության հիմնական մասի զբաղվածության ոլորտը գյուղատնտեսությունն է:

ՍՊԻՏԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ

Քոլեջը հիմնադրվել է 1994թ.: 2003թ., երբ ուսումնարանը վերածվել է քոլեջի, բաժինների թիվն ավելացել, երեքից հասել է վեցի: Դրանցից չորսը միջին մասնագիտական են, իսկ երկուսը՝ նախնական: Այժմ քոլեջում սովորում է 188 ուսանող, որոնցից տարեկան ավարտում են 25-30-ը:

Քոլեջում ուսուցանվում են հետևյալ մասնագիտությունները՝

- Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (ըստ ճյուղերի),
- Հայոց լեզվի դասավանդում,
- Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում,
- Ֆիզիկական կուլտուրա և սպորտ,
- Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում,
- Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների):

ՍՊԻՏԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ

Այս քոլեջը համեմատաբար նորաստեղծ է: Այն հիմնվել է 2000թ.՝ որպես Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջի մասնաճյուղ և ունեցել է հեռակա բաժիններում սովորող 30 ուսանող: 2008թ. այն ստացավ իր այժմյան անվանումը: Այժմ քոլեջի առկա բաժիններում սովորում է 120 ուսանող, իսկ տարեկան քոլեջն ունենում է մոտ 30 շրջանավարտ:

Քոլեջում ուսուցանվում են հետևյալ մասնագիտությունները՝

- Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (ագրարային ճյուղում),
- Մենեջմենթ (կառավարում, ագրարային ճյուղում),
- Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների),
- Գյուղատնտեսագիտություն,
- Անասնաբուժություն:

ԱԼԱՎԵՐԴԻ

Քաղաքը ձևավորվել է պղնձաձուլական գործարանի կառուցումից հետո, որը գործում է մինչև այսօր: Նրա արտադրանքը կազմել է ՀՀ Լոռու մարզի տնտեսական ցուցանիշների գերակշիռ մասը:

Ալավերդիում գործում է մեկ միջին մասնագիտական և մեկ նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություն:

ԱԼԱՎԵՐԴՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ

1966թ. հիմնվել է ինդուստրիալ տեխնոլոգիական տեխնիկումը, որը 1999թ. վերանվանվել է Ալավերդու պետական քոլեջ:

Այժմ քոլեջն ունի 120 ուսանող, իսկ շրջանավարտների թիվը 40-50 է:

Քոլեջում ուսուցանվում են հետևյալ մասնագիտությունները՝

- Դասավանդում տարրական դասարաններում,
- էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (ըստ ճյուղերի),
- Սև և գունավոր մետաղների ձուլման արտադրություն,
- Թարգմանություն և գործավարություն,
- Բանկային գործ:

ԱԼԱՎԵՐԴՈՒ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Ալավերդում արհեստագործների ակադեմիան՝ «Ալավերդու պրոֆտեխուսումնարանը» ստեղծվել է 1957թ: Նորաբաց ուսումնարանում առաջին ուստարում 8 մասնագիտությունների գծով սովորել է 250 ուսանող: Հետագայում այդ թիվը հասել է մինչև 500-600-ի և կրկին նվազել: 2000թ. դադարել է ուսումնարանի գործունեությունը, և խմբերն անցել են Ալավերդու պետական քոլեջի ենթակայության տակ:

2006թ. այն կրկին վերաբացվել է: Վերջին երեք տարիներին ուսումնարանը 6 մասնագիտությունների գծով տվել է 297 շրջանավարտ: Այսօր ուսումնարանում գործող 10 խմբերում սովորում է 187 ուսանող:

Ուսումնարանում դասավանդվում են հետևյալ մասնագիտությունները՝

- Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա,
- Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում,
- Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում,
- Զարդակիրառական արվեստ,
- Փաստաթղթավարություն, տեղեկատվական և կազմակերպչական սպասարկում,
- Օգտակար հանածոների հարստացում:

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ

Քաղաքով է անցնում Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության ճանապարհը, որը հնարավորություն է տալիս զարգացնել տուրիզմը: Քաղաքում գործում են արտադրական մանր ու միջին կազմակերպություններ, որոնք զբաղվում են սննդի, կահույքի և էլեկտրասարքերի արտադրությամբ:

ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՊՐՈՖ. Ա. ՔԱԼԱՆԹԱՐԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ

Ստեփանավանի միակ քոլեջը 80 տարվա պատմություն ունի: 1929թ. հիմնվեց Ստեփանավանի գյուղատնտեսական տեխնիկումը: Այն 70-ականներին վերանվանվեց Ջոովետ-Սովխոզ տեխնիկում, իսկ արդեն 1991թ. Ստեփանավանի պետական տնտեսություն տեխնիկում: 1995թ. տեխնիկումն ստացավ իր այժմյան անվանումը: Քոլեջում այժմ սովորում է 284 ուսանող, իսկ շրջանավարտների թիվը տարեկան կազմում է 60-70 մասնագետ:

Քոլեջում ուսուցանվում են հետևյալ մասնագիտությունները՝

- Մենեջմենթ (կառավարում), (ըստ ճյուղերի),
- Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի),
- Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների),
- Անասնաբուժություն,
- Անտառային և անտառապուրակային տնտեսություն:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԱԶՄԱԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՔՈԼԵՋՆԵՐ

Մեր երկրում նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգում վերջին տարիներին տեղի ունեցող բարեփոխումների համատեքստում առանձնակի կարևորություն ունեն Հայաստանի Հանրապետությունում գործող 12 բազմագործառութային տարածաշրջանային կենտրոններ, որոնք, ըստ էության, կոչված են դառնալու համակարգի «առաջամարտիկները»:

Այդ քոլեջների գերակա խնդիրն է բարձրացնել մասնագիտական կրթության որակը, նպաստել համակարգի արդյունավետ գործունեությանը և քաղաքացիների համար, իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան, կրթություն ստանալու հավասար մատչելիության ապահովմանը:

Բազմագործառութային տարածաշրջանային կենտրոնների՝ քոլեջների գործունեության խնդիրներն են՝

• ապահովել որակյալ մասնագետների պատրաստումը և նպաստել որակի ապահովման մեխանիզմների արդիականացմանը,

• պլանավորել և իրականացնել տարածաշրջանային աշխատաշուկային և երկրի տնտեսական զարգացման ընթացիկ և ռազմավարական կարիքներին համապատասխան կրթական գործունեություն,

• նպաստել կրթական արդյունքների բարելավմանը և ծախսերի արդյունավետության բարձրացմանը,

• նպաստել ժամանակակից անհատների և քաղաքացիների ձևավորմանը,

• հնարավորություն ընձեռել անձին՝ ամբողջ կյանքի ընթացքում ուսուցում ստանալու համար՝ լրացուցիչ կրթության կազմակերպման տարբեր ձևերի (վերապատրաստում, մասնագիտական ուսուցում, մեծահասակների կրթություն, վերաորակավորում և այլն) միջոցով:

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՔՈԼԵՋ

Լոռու մարզում բազմագործառութային տարածաշրջանային կենտրոնի դերը ստանձնել է Վանաձորի պետական տեխնոլոգիական քոլեջը: Քոլեջը հիմնադրվել է 1970թ.՝ որպես Սովետական առևտրի Երևանի տեխնիկումի Կիրովականի մասնաճյուղ: Այնուհետև մասնաճյուղի բազայի վրա կազմակերպվել է Կիրովականի առևտրա-տնտեսագիտական տեխնիկումը, որն այնուհետև՝ 1987թ., վերանվանվել է Կիրովականի տեխնոլոգիական տեխնիկում: 2002թ. այն վերակազմակերպվել է որպես «Վանաձորի պետական տեխնոլոգիական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

Քոլեջում ուսուցանվում են հետևյալ մասնագիտությունները՝

- **Հագուստի մոդելավորում և նախագծում,**
- **Հագուստի պատրաստման տեխնոլոգիա,**
- **Մենեջմենթ (կառավարում), (ըստ ճյուղերի),**
- **Շուկայաբանություն (ըստ ճյուղերի),**
- **Առևտուր (ըստ ճյուղերի):**

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵԽՆՈԼԱԳԻԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՏՆՕՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ՀԵՏ

Վերջին տարիներին ինչպիսի՞ բարեփոխումներ են կատարվել ուսումնական հաստատությունում:

Բարեփոխումների սկիզբ կարելի է նշել 2005 թվականը, քանի որ այդ ուսումնական տարվա սկզբից քոլեջում «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա», այնուհետև «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտությունների գծով ուսուցումն սկսեց իրականացվել կարողություններին միտված մոդուլային ծրագրերով:

2005-2010թթ. ընթացքում քոլեջի նյութա-տեխնիկական բազան համալրվեց ուսումնական կարիքների համար անհրաժեշտ ժամանակակից տեխնիկայով: 2009-2010թթ. ընթացքում կատարվեց ուսումնական մասնաշենքի հիմնանորոգում, գործարկվեց քոլեջի ջեռուցման համակարգը:

Քոլեջում «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա», «Հագուստի մոդելավորում և նախագծում» և «Շուկայաբանություն» մասնագիտությունների գծով մշակվել են ուսումնական նյութերի փաթեթներ բոլոր մասնագիտական մոդուլների համար, և արդյունքում բարձրացել է ուսուցման արդյունավետությունը:

Որպես տարածաշրջանային բազմագործառութային քոլեջ՝ ո՞րն է Վանաձորի պետական տեխնոլոգիական քոլեջի առաքելությունը:

Մեր ուսումնական հաստատությունը լուրջ անելիքներ ունի մասնագիտական կրթության բնագավառում իրականացվող բարեփոխումների շրջանում՝ մարզի մյուս ուսումնական

հաստատություններին ինչպես մեթոդական, այնպես էլ կազմակերպչական հարցերում օգնելու առումով: Այդ նպատակով քոլեջում կազմակերպվել են այլ ուսումնական հաստատությունների աշխատակիցների վերապատրաստումներ: Ի դեպ, ուսումնական տարվա մեկնարկից ի վեր մեզ մոտ այլ հաստատությունների ներկայացուցիչներին տրամադրվել է մասնագիտական խորհրդատվություն: Ես, որպես տնօրեն, հակված եմ այն կարծիքին, որ բազմագործառութային քոլեջը պետք է մատուցի ամբողջական մասնագիտական կրթության ծառայություններ: Այսինքն՝ հնարավորություն տրվի քոլեջին իրականացնելու տարբեր բնույթի կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներ, որոնց շնորհիվ ոչ միայն էապես կբարձրանա հաստատության դերն ու նշանակությունը, այլև կապահովվեն լրացուցիչ ֆինանսական մուտքեր: Արդյունքում կլուծվեն հրատապ խնդիրներ:

Կարճաժամկետ վերապատրաստման ինչպիսի՞ ծրագրեր են իրականացվել քոլեջում:

Քոլեջում իրականացվել են «Համակարգչային օպերատորություն», «Ծեփագործություն և ներկագործություն» (USAID), «Դերձակ» (ՀՀ ԱՍԱՆ) կարճաժամկետ վերապատրաստման դասընթացները:

Որո՞նք են հաստատության առաջնային խնդիրներն այսօր:

Թեպետ մեզ վերջին տարիներին հաջողվել է արձանագրել մի շարք ձեռքբերումներ, սակայն այսօր էլ կան լուծման կարիք ունեցող խնդիրներ, ինչպես օրինակ, մասնաշենքերի կապիտալ վերանորոգումը, բացօթյա մարզահրապարակի բարեկարգումը: Ոչ պակաս կարևոր է հաստատությունը հանրակացարանով ապահովելու խնդիրը:

Համագործակցության ինչպիսի՞ եզրեր կան սոցիալական գործընկերների հետ:

Տարեցտարի ակտիվանում են հարաբերությունները սոցիալական գործընկերների հետ: Արդյունքում մեր ուսանողները մասնակցում են հանրապետական և մարզային տարաբնույթ փառատոների և մրցույթների, ներկայացնում են իրենց աշխատանքները: Այդ թվում 2008թ. մայիսին մասնակցել ենք Ֆրանսիայում կայացած Համաեվրոպական ուսանողական փառատոնին: Քոլեջը պայմանագրային հարաբերություններ ունի Վանաձորի ավելի քան 25 արտադրական և առևտրային կազմակերպությունների հետ, որտեղ էլ կազմակերպվում են ուսանողների պրակտիկաները:

Ի՞նչ նոր մասնագիտություններ եք նախատեսում ներդնել:

Քոլեջում նախատեսում ենք ներդնել «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում» մասնագիտությունը: Ներդրման պատճառն այն է, որ Հայաստանի հյուսիսային հատվածում այս մասնագիտության դասավանդում չի իրականացվում, և աշխատաշուկայի ուսումնասիրության արդյունքում գործատուների կողմից պահանջարկ էր ներկայացվել այս մասնագիտության գծով:

	2005	2010
Ընդունվածների թիվը	115	209
Ուսանողների թիվը	236	387
Ամենաշատ պահանջարկ ունեցող մասնագիտությունը	0602 «Մենեջմենթ»	0602 «Մենեջմենթ»
Վերապատրաստված դասախոսների թիվը	25 մարդ, որից 5-ը արտասահմանում	31 մարդ
Սոցիալական գործընկերները	• Վանաձորի և հարակից բնակավայրերի թեթև արդյունաբերության կազմակերպություններ, • մանրածախ առևտրի կազմակերպություններ, • «Զբաղվածության ծառայության գործակալության» Վանաձորի մարզային զբաղվածության կենտրոն, • Լոռու մարզի «Առևտրաարդյունաբերական պալատ», • Վանաձորի մանկատուն:	• Վանաձորի և հարակից բնակավայրերի թեթև արդյունաբերության կազմակերպություններ, մանրածախ առևտրի կազմակերպություններ, • «Զբաղվածության ծառայության գործակալության» Վանաձորի մարզային զբաղվածության կենտրոն, • Լոռու մարզի «Առևտրաարդյունաբերական պալատ», • Վանաձորի մանկատուն, • «ՍԻՄ» տպագրատուն, • «Արմինֆո» ՍՊԸ:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ

ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿ ԵՎ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Ազատ շուկայական հարաբերությունները սկզբունքորեն փոխել են աշխատանքի բովանդակությունն ու գործատուների կողմից աշխատատեղերի համար ներկայացվող պահանջները (Խորհրդային ժամանակաշրջանում պետությունը ինքն էր ներկայացնում մասնագետների նկատմամբ պահանջներ): Ուստի անհրաժեշտություն է առաջանում ուշադրություն դարձնել երիտասարդների և դպրոցականների շրջանում մասնագիտական կողմնորոշման նպատակաուղղված աշխատանքների անցկացմանը:

Մասնագիտական կողմնորոշման նպատակն է տրամադրել համակարգված տեղեկատվություն աշխատաշուկայի առկա իրավիճակի և զարգացման միտումների, կրթական համակարգի ընձեռած հնարավորությունների, մասնագիտությունների, ինչպես նաև հենց մարդու անձնային որակների և հակումների վերաբերյալ՝ նրան հնարավորություն ընձեռելով կայացնել գիտակցված և արդյունավետ որոշում:

Այսօր Հայաստանի Հանրապետությունում ակնհայտ է աշխատաշուկայի և մասնագիտական կրթության միջև անհավասարակշռությունը, քանի որ տնտեսության զարգացումները դեռ լիարժեք արտացոլում չեն գտել մասնագիտական կրթության համակարգի վրա: Դեռահասներն ընտրում են մասնագիտություն՝ անկախ աշխատաշուկայի պահանջարկից: Արդյունքում վերջին տարիներին գործազրկության մակարդակն առավել բարձր է երիտասարդների շրջանում՝ կրկնակի անգամ գերազանցելով հանրապետությունում գործազրկության միջին մակարդակը:

Դրան ի հակադրություն, աշխատաշուկայում բարձրացել է որակյալ աշխատուժի նկատմամբ պահանջարկը, մի շարք ոլորտներում արձանագրվել է մասնագետների «ծերացում»: Ներքին և արտաքին արտագաղթի պատճառները ևս բխում են մասնագիտական կողմնորոշման համակարգի բացակայությունից:

ՀՀ-ում մասնագիտական կողմնորոշման դերը կարևորվում է նաև նրանով, որ պետք է լուծի կրթություն-գործատու հարաբերություններում առկա բացթողումները, ինչը միտված է կրթության որակի և արդյունավետության բարձրացմանը, որն էլ իր հերթին կնպաստի աշխատաշուկայում երիտասարդների մրցունակության բարձրացմանը: Աշխատաշուկան ինդիկատոր է մասնագիտական կողմնորոշման արդյունավետ աշխատանքների իրականացման և երիտասարդների զբաղվածության ապահովության հարցում: Սա նշանակում է, որ աշխատաշուկայի առաջարկի և պահանջարկի միջև անհավասարակշռությունը հնարավորինս նվազագույն սանդղակին կարող է հասնել, եթե համակարգված գործի մասնագիտական կողմնորոշման համակարգը:

Յուրաքանչյուր համարում կանդրադառնանք ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդվող մի մասնագիտության, դրա առանձնահատկություններին և պահանջներին:

ԳԻՆԵԳՈՐԾ – ՏԵԽՆԻԿ

Գինին մարդկությանը հայտնի է անհիշելի ժամանակներից, իսկ դրա պատրաստելը համարվել է բարդ և բովանդակալից արվեստ: Հայաստանն ու Հայկական լեռնաշխարհը համարվում են գինեգործական և սեղանի խաղողի մշակման հնագույն օջախներից մեկն աշխարհում:

Ավանդությունն ասում է. «*Երբ Նոյն իջավ Արարատ սարից ու տնկեց խաղողի վազը, առաջինն այցի եկավ ծիծեռնակը և այն ջրեց...: Բույսն աճեց, ապա կանաչեց...: Այցի եկան առյուծը, հետո խոզը...: Նրանք նույնպես ջրեցին....:*

Երբ խաղողը հասունացավ , և նրանից գինի ստացան, առաջին գավաթից մարդու տրամադրությունը բարձրացավ ու սկսեց երգել ծիծեռնակի պես, երկրորդ գավաթից հետո նա դարձավ առույգ և ուժեղ՝ ինչպես առյուծը, բայց ահա երրորդ գավաթից հարբեց ու սկսեց խռմփացնել խոզի պես»:

Այս իմաստուն ավանդությունը վկայում է խաղողի և գինու վաղեմության մասին: Այն յուրատեսակ խրատ է նաև գինու օգտագործումը չարաշահողներին:

Գինեգործ-տեխնիկն ապահովում և իրականացնում է գինու արտադրության ողջ տեխնիկական գործընթացը՝ սկսած խաղողի մթերումից մինչև շշալցումը:

Նա պետք է կարողանա.

- կազմակերպել և հսկել խաղողի մթերման ու վերամշակման տեխնիկական գործընթացը,
- կատարել խաղողի և պտղահատապտղային հումքի տեսակավորում,
- որոշել գինեհումքի մեջ շաքարի, թթվի և այլ բաղադրամասերի պարունակությունը,
- ստանալ հյութ, քաղցրահյութ և չեչ,
- պատրաստել գինու և խտանյութերի խմորիչներ ու դրանց համապատասխան բաշխակայանքներ,

♦ նախապատրաստել արտադրամասի սարքավորումները, տարաները և շշալցման հոսքային գծերը՝ միաժամանակ հսկելով շշալցման ողջ գործընթացը,

♦ կատարել պարզ վերանորոգման աշխատանքներ,

♦ ապահովել խաղացող գինիների պատրաստման գործընթացը և իրականացնել կոնյակի գինենյութի պատրաստումը, թորումն ու սպիրտի հասունացումը,

♦ ղեկավարել գինեգործ-վարպետի ու օժանդակ բանվորների աշխատանքը, հսկել արտադրամասի ջերմաստիճանային վարքը և գինեգործական բաղադրատոմսերի պահանջների պահպանումը:

Գինեգործ-տեխնիկի աշխատանքը պահանջում է ստեղծագործ մոտեցում, քանի որ նա պարտավոր է ապահովել անջատված քաղցուի պարզեցման տեխնիկական բոլոր հնարավորությունները, մասնավորապես, կարմիր գինենյութի պատրաստման դեպքում ապահովել ստացված փլուշի, առանց քաղցուի անջատման՝ համապատասխան տարողությունների թրմեցման ու մասնակի (կամ լրիվ) խմորման տեխնիկական գործընթացի արդյունավետ իրականացումը:

Գինեգործ-տեխնիկը յուրաքանչյուր գործողությունից հետո հսկում է օգտագործված

Գինեգործ-տեխնիկի պարտադիր չափանիշներ

• Մասնագիտական ուսուցում խմորման արտադրությունների տեխնոլոգիայի ոլորտում՝ միջին մասնագիտական կրթության վկայական,
•Սարքերի, սարքավորումների հետ վարվելու, դրանց անսարքությունները վերացնելու հմտություն,
• Արտադրական գործիքների, սարքերի, սարքավորումների, ինչպես նաև ավտոմատ կառավարման ժամանակակից համակարգերի հետ աշխատելու և վերանորոգելու կարողություն
• Քիմիա և բիոքիմիա,
• Մաթեմատիկա,
• Մանրէակենսաբանություն,
• Էթիկայի կանոններ:

արտադրամիջոցների մաքրման և ախտահանման աշխատանքների կատարումը: Դա պահանջում է, որպեսզի նա օժտված լինի շփվելու և հաղորդակցվելու կարողությամբ, կարողանա ծագած խնդիրներին տալ ճիշտ լուծումներ, ցուցաբերել առաջին բուժօգնություն և այլն:

Եթե որոշել ես դառնալ գինեգործ-տեխնիկ, ապա պետք է հիշես, որ քեզանից կպահանջվի գործի լծվել ամբողջ հոգով ու մարմնով՝ բառի ամենալայն իմաստով, քանի որ աշխատանքային գործընթացում պարտադիր պայման է՝ բոլոր զգայական օրգանների, հատկապես, համահոտային և տեսալսողական զգայարանների փոխհամաձայնեցված ու ներդաշնակ գործունեությունը: Ճիշտ է՝ գինեգործ-տեխնիկ չեն ծնվում, այլ դառնում են, սակայն դրա համար պետք է ունենալ անհատական բարձր հատկանիշներ, մասնավորապես, լինել.

- նպատակասլաց,
- ուշադիր,
- վերլուծող,
- կոկիկ,
- մաքրասեր:

Ի դեպ, հավելենք, որ սկսնակ գինեգործ-տեխնիկի ամսական աշխատավարձն արևմտաեվրոպական մի շարք երկրներում (Ֆրանսիա, Իսպանիա, Պորտուգալիա, Գերմանիա և այլն) կազմում է 800-1000 եվրո, Ռուսաստանում՝ 400-450 եվրո, իսկ Հայաստանում՝ մինչև 120-150 եվրո: Մասնագիտական որակավորման բարձրացմանը զուգընթաց, մոտավորապես ավագ տեխնոլոգի կարգավիճակով, կարելի է ամսական վաստակել. Արևմտյան Եվրոպայում՝ 2500-3000 եվրո, Ռուսաստանում՝ 1000-1200 եվրո, իսկ Հայաստանում՝ 250-350 եվրո:

Գինեգործ-տեխնիկի մասնագիտությունն ընտրած յուրաքանչյուր երիտասարդ պետք է հիշի, որ իր ապագան կապում է այնպիսի զբաղմունքի հետ, որի մասին դեռևս XI-XII դարերի մեծանուն պարսիկ բանաստեղծ, մաթեմատիկոս, աստղագետ և փիլիսոփա Օմար Խայամն ասել է. «Ստեղծելով գինի՝ դու ստեղծում ես սիրահարների թևեր»:

**«ՍՏԵՂԾԵԼՈՎ ԳԻՆԻ՝
ԴՈՒ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՍ ՍԻՐԱՀԱՐՆԵՐԻ ԹԵՎԵՐ»:**

Հաճախ կարելի է կարդալ ուսանողական կյանքի մասին հոդվածներ, որոնք, ցավոք, ներառում են միայն բուհերի կյանքը: Դա գալիս է նաև նրանից, որ ուսանող ասելով մեր երկրում հիմնականում ընկալում են այն երիտասարդներին, որոնք սովորում են բուհերում: Այնինչ, Հայաստանում գոյություն ունի նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող երիտասարդների, ուսանողների մի ստվար զանգված, որը, թեև ապրում է այն նույն կյանքով, ինչ բուհական ուսանողությունը, սակայն ունի իրեն բնորոշ՝ ուրույն հոգսեր, խնդիրներ, նախասիրություններ ու հետաքրքրություններ:

Ինչպիսի՞ն է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական հաստատությունների ուսանողների առօրյան: Ինչո՞վ է այն տարբերվում կամ նմանվում բուհական կյանքին, ի՞նչ խնդիրներ ու հոգսեր ունի, ի՞նչ նախասիրություններ ու հետաքրքրություններ. այս հարցերին պատասխանում են հենց իրենք՝ ուսանողները:

«Այստեղ ստանում ենք մասնագիտական գիտելիքներ»

Սուսաննա Հակոբյան

Այս համարի հյուրերն են Երևանի պետական ճարտարագիտական քոլեջի «Դերասանական արվեստ» բաժնի 2-րդ կուրսի ուսանողները, որոնք, լինելով ուսանողական խորհրդի անդամ, բավական հագեցած են անցկացնում իրենց առօրյան՝ ուսանողական բազմապիսի միջոցառումներ, մրցույթներ, այցելություններ տարբեր մշակութային օջախներ:

Անգամ հարցազրույցից անմիջապես հետո նրանք շտապում էին Պատանի հանդիսատեսի թատրոն, որտեղ դիտելու էին Վարդգես Պետրոսյանի «Վերջին ուսուցիչը» ներկայացումը:

Հիմնական զրուցակիցս 17-ամյա Սուսաննա Հակոբյանն էր:

Ո՞րն է քոլեջի և բուհի տարբերությունը: Ինչո՞ւ են մարդիկ ցգտում դեպի բուհը:

Սուսաննա– Կարելի է ասել, որ քոլեջը բուհից տարբերվում է միայն դիպլոմով: Ուսանողից է կախված. լավ ուսանողը, որտեղ էլ լինի, կսովորի: Քանի որ միշտ էլ ավելին կարող ես իմանալ: Այն, ինչ այստեղ ենք ստանում, բնականաբար, ավելի շատ և ավելի խորացված ձեռք կբերենք բուհում: Քոլեջից հետո ես պետք է թատերական ինստիտուտում սովորեմ. շատ եմ ուզում:

Տարբերություններ կան նաև այլ բնագավառներում. հասարակ մի օրինակ, մեր ուսանողական քարտով մենք կարող ենք անվճար ընդամենը մի քանի թատրոնում ներկայացում նայել, իսկ թատերականի ուսանողին հնարավորություն է տրված հաճախելու գրեթե բոլոր թատրոնները:

Այդ դեպքում, ի՞նչ առավելություններ ունի միջին մասնագիտական ուսուցումը:

Այստեղ աղջիկները, մեկը մյուսին հերթ չտալով, ասացին ամենագլխավոր առավելությունը:

Դպրոցի համեմատությամբ մենք այստեղ ստանում ենք բազային գիտելիքներ մեր մասնագիտության վերաբերյալ. բեմական արվեստ ենք արդեն ուսումնասիրում, ինքներս ենք բեմադրում. այն, ինչ հնարավոր չէր անել դպրոցում:

Ինչպե՞ս որոշվեց ուսումը շարունակել հենց քոլեջում:

Սուսաննա– Ես չէի էլ մտածել քոլեջի մասին: Կարծում էի, որ կավարտեմ դպրոցը ու կգնամ բուհ: Սակայն ծնողներս էին համոզում, որ չկորցնեմ այդ տարիները և միանգամից ընդունվեմ քոլեջ: Իսկ երբ եկա այստեղ, արդեն ամեն ինչ փոխվեց: Ի դեպ, մեծ դեր խաղաց նաև ավագ դպրոցների ներմուծումը:

Լուսինե Ավետիսյան, 16տ., «Դերասանական արվեստ», 2-րդ կուրս – Ես ինքնուրույն եմ որոշել. քանի որ արդեն ընտրել էի ինձ հարազատ մասնագիտությունը, չէի ցանկանում տարի կորցնել:

Հռիփսիմե Եսայան, 20տ., «Դերասանական արվեստ», 2-րդ կուրս –Ես դպրոցն ավարտելուց հետո եմ եկել այստեղ, որ ավելի շատ բան իմանամ, մինչ թատերական ինստիտուտ գնալը: Ինձ համար ավելի հեշտ կլինի սովորել այնտեղ:

Ինչպե՞ս են վերաբերվում ձեր ընկերներն այս ընտրությանը:

Սուսաննա– Ընկերներս դեռ դպրոցում են սովորում, և պետք է ասեմ, որ մի քանիսը ևս մեկ տարի սովորելուց հետո գնացել է քոլեջ: Եթե անգամ ծնողներն են ստիպողաբար բերում այստեղ, ապա մի որոշ ժամանակ անց նրանք համոզվում են, որ ընտրությունը արդարացված է:

Մասնագիտական ինչպիսի՞ գիտելիք եք ստանում քոլեջում:

Սուսաննա– Մենք այժմ անցնում ենք թատերական ինստիտուտի առաջին կուրսի ծրագիրը: Քոլեջի տնօրինության շնորհիվ ունենում ենք նաև պրակտիկ աշխատանքներ. ես արդեն խաղացել եմ Պատանի հանդիսատեսի թատրոնի մի ներկայացմանը:

Մարիամ Հարությունյան 14տ., «Դերասանական արվեստ», 1-ին կուրս –Առաջին կուրսում միայն դպրոցի դասերն են, երկրորդ կուրսից են սկսում մասնագիտական դասընթացները, բայց այժմ շաբաթը մեկ անգամ ունենում ենք մասնագիտական ժամ:

Ուսանող-դասախոս հարաբերություններում, արդյոք, պահպանվա՞ծ են ուսանողների շահերը և իրավունքները:

Սուսաննա– Դասախոսների ընկերական և պահանջկոտ մոտեցումը մեզ մոտ պատասխանատվության զգացում է ձևավորում, և անգամ ամենածույլ ուսանողը ներկայանում է դասերին և ուժերի ներածին չափով կատարում է հանձնարարվածը: Այնուամենայնիվ, դասախոսները թեև խստապահանջ են, սակայն հաշվի են

առնում յուրաքանչյուրի իրավունքները: Ուսումնառության ընթացքում դեռ չեմ հանդիպել մի ուսանողի, որի իրավունքները ոտնահարվել են:

Որքանո՞վ է այսօր հագեցած ընդհանրապես ուսանողի առօրյան:

Սուսաննա– Ընդհանրապես այսօր ուսանողին, երիտասարդին տրված է հնարավորություն՝ առօրյան հագեցած կազմակերպելու համար: Սակայն ժամանցային թանկարժեք վայրերը հասու չեն բոլորին: Այլ հարց է, ասենք, այցելությունները պատմության և մշակութային վայրեր, թանգարաններ, թատրոն, կինոթատրոն, բացօթյա համերգ-միջոցառումներ. նման վայրեր գնալու հնարավորություն միշտ կա:

Ինչպիսի՞ն է ուսանողի ազատ ժամանցը:

Սուսաննա–Ինչ վերաբերում է Ճարտարագիտական քոլեջի ուսանողական առօրյային, ապա այն բավականին հագեցած է. դասավանդման գործընթացից բացի՝ մեզ մոտ հաճախակի կազմակերպվում են միջոցառումներ, մրցույթներ, այցելություններ և բազմապիսի այլ հետաքրքրական ծրագրեր: Մենք այցելում ենք բազմաթիվ մշակութային վայրեր՝ թատրոններ, կինոթատրոններ, ցուցահանդեսներ, էքսկուրսիաներ: Հատկապես տպավորիչ էին Համազգային թատրոնի ներկայացումները՝ «44 աստիճանի վրա» և «Շխոնց Միհրան»:

Ի՞նչ կասեք ինտերնետի մասին. երիտասարդությունն այն հիմնականում օգտագործում է սոցիալական կայքեր այցելելու համար:

Սուսաննա–Համակարգիչն ինչպես ժամանցի, այնպես էլ տեղեկատվության աղբյուր է, և երիտասարդն է որոշում, թե ինչ ընտրել: Ինձ համար ինտերնետն առաջին հերթին գիտելիքի աղբյուր է, սակայն օգտագործում եմ նաև ընկերներիս հետ շփվելու համար:

Աշխատանքի մասին նրանք դեռ չեն շտապում մտածել, թեև նրանցից տարիքով ամենամեծը՝ Հռիփսիմեն, աշխատում է մանկական սրճարանում որպես հաղորդավար՝ կազմակերպելով այնտեղ մանկական միջոցառումներ: Իսկ մյուս աղջիկները մտածում են ուսումը շարունակելու մասին. նրանց դեռ սպասում է գիտելիքի հրաշք աշխարհը:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՃԱՎԻ ՍԵՐԸ

Սուսաննա Մեհրաբյան
Թարգմանություն և գործավարություն

Ձյուն է գալիս փաթիլ-փաթիլ,
Հոգուս վրա մեղսավոր
Սիրո ճամփան սառել է շատ՝
Դեպի սիրտս մենավոր:

Մի տղա կա՝ ինձ սիրահար,
Հարազատ եմ ես նրան,
Բայց ինքն ինձ խորթ, իմ մեջ օտար
Տառապում է ամեն օր:

Ես ինչ անեմ, ճարս՝ անճար,
Հոգիս ցավով է հանճար,
Կուզենայի, կկամենայի
Ինքն ինձ դառնար մինուճար:

Բայց երևի ուշ է հիմա,
Ցավին խոնարհ եմ ես շատ,
Վախենում եմ, թե պայքարեմ՝
Մոլագարվի ավելի շատ:

Ձյուն է գալիս, ձմեռ է ցուրտ,
Ցավն իր ցավով է տարվել,
Սիրելն ինձնից հեռու վանել
Ցավը՝ իր սիրուն է տրվել:

ՍԻՐՈ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարիամ Դավթյան
Դերասանական արվեստ, I կուրս

Սեր… Այդ եթերային զգացմունքը մի թռչուն է, որ բույն է հյուսում սրտերում՝ առանց տիրոջ կամքը հարցնելու, և երբեմն էլ թեթև հողմից բույնն ավերակ է դառնում, և թռչունը չվում է:

Ահա այդ ժամանակ է, որ այս մեկ բառը փոխում է իմ ամբողջ աշխարհը: Պատուհանից տեսնելով բնության հրաշալի տեսարանը՝ նորից ու նորից խորհում եմ, թե ինչպես ընդամենը մի քանի օր առաջ դողում էի յուրաքանչյուր րոպեի համար, իսկ այժմ ժամանակը թշնամիս է դարձել: Մեր կառուցած հեքիաթային աշխարհը հիմքից փլվել է, և իզուր են պայքարելու փորձերս:

Այժմ եկել է այն պահը, որ պետք է գրեմ մի այնպիսի աներևույթ հասկացության մասին, որն իրականում անհնար է անգամ բացատրել: Չէ՞ որ ոչ ոք չի կարող արտահայտել այն, ինչ զգում է իր ներսում, այսինքն՝ արտահայտել այն սրբազան զգացմունքը, որը կոչվում է սեր: Սիրո մասին կարելի է գրել հարյուր թերթ, բայց միևնույն է, չես կարող արտահայտել այն, ինչ զգում ես իրականում:

Մութ սենյակում մենակ եմ: Հոգիս անձրևում է, ու զարմանում եմ՝ ինչու չեմ կարողանում մոռանալ քեզ, անգամ այն բանից հետո, երբ անցել եմ քո ստեղծած դժոխքի միջով. դեռ կարոտում եմ քեզ…

Ես չգիտեմ, թե ինչպես սկսեմ իմ խոստովանությունը, քանի որ երբեք առիթ չեմ ունեցել զգալ սրտի այսպիսի տրոփյուն և պատկերացում անգամ չեմ ունեցել, որ կարող եմ անկեղծ խոստովանել, սակայն կփորձեմ: Ասում են՝ կյանքում ամեն ինչ փոխադարձ է: Հիմա ես քեզ գրել եմ մի նամակ, որը կարդալով, հուսով եմ, ինձ կհասկանաս: Կհասկանաս այն, որ ես փորձում եմ բացատրել ընդամենը մի թղթի միջոցով, որը մաշվում և հնանում է:

Բայց ես գիտեմ, որ սերը ո՛չ մաշվում է, ո՛չ էլ հնանում: Մարդն իրոք սիրում է այն ժամանակ, երբ կարողանում է ինքն իրեն, միայն ինքն իրեն խոստովանել, որ ինչոր մեկին սիրում է առավել, քան ինքն իրեն:

Ես չգիտեմ՝ դու ինձ սիրու՞մ ես, կսիրե՞ս, թե՞ ոչ: Բայց և այնպես հոգուս խորքում դեռ փափագում եմ երազանքն այն մասին, որ իմ սերն էլ, ինչպես ամեն ինչ աշխարհում, գուցե փոխադարձ կլինի…

ՄԿՈՒ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ

Միջին մասնագիտական կրթությունը, լինելով հանրակրթական և բարձրագույն մասնագիտական կրթությունների միջև, ապահովում է կրթության մակարդակների հաջորդական զարգացումը՝ խթանելով հասարակության բոլոր շերտերի զարգացվածությանը:

Բարձրագույն մասնագիտական կրթության փոխարեն միջին մասնագիտական կրթություն ընտրելը շատ դեպքերում ավելի հեռանկարային որոշում է: ՄԿՈՒ հաստատություններում, զարգացնելով իր հմտությունները և ընդլայնելով գիտելիքները՝ անհատն ընտրում է իր հնարավորություններին և կարողություններին համապատասխան մասնագիտություն, որը շահավետ է թե՛ գործատուի, թե՛ միջին մասնագիտական կրթությամբ մասնագետի համար: Գործատուն, համագործակցելով միջին մասնագիտական կրթության հաստատությունների հետ, ներդրումներ է կատարում անհրաժեշտ մասնագետների պատրաստման նպատակով: Դա ոչ միայն ապահովում է շրջանավարտին աշխատանքով, այլ նաև ուսման ընթացքում հնարավորություն է տալիս նախապես ծանոթանալ աշխատանքին և ձեռք բերել պրակտիկա: Արդյունքում գործատուն ստանում է իրեն անհրաժեշտ նեղ մասնագիտացմամբ արդեն պատրաստի կադր:

Ուսումնական հաստատություններում տարեցտարի ավելացող դիմորդների թիվը վկայում է հասարակության շրջանում միջին մասնագիտական կրթական հաստատությունների նկատմամբ աճող վստահության մասին, ինչպես նաև շրջանավարտների՝ աշխատանքային շուկայում պահանջարկի մասին:

Միջին մասնագիտական կրթական հաստատություններ շրջանավարտները աշխատանքային շուկայում պատրաստի, մրցունակ մասնագետներ են: Նրանք որակավորված մասնագետներ են, որոնք իրացնում են իրենց գիտելիքներն ու հմտությունները:

Ներկայիս աշխատանքային շուկայում

մրցունակ մնալու, աշխատանքում որակ ապահովելու և սեփական մասնագիտությունը զարգացնելու համար մարդն իր կյանքի ընթացքում պետք է անընդհատ զարգացման մեջ լինի: Պետք է գիտելիքներն ու հմտություններն աճեն և ժամանակին համապատասխան նորացվեն՝ հասնելով մի նոր աստիճանի: Միջին մասնագիտական կրթական համակարգը կրթության շղթայական զարգացման կարևոր օղակներից է: Շրջանավարտները հնարավորություն ունեն իրենց կրթությունը շարունակելու բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Բարձրագույն կրթությունը հայ ընտանիքների համար դարձել է անհրաժեշտություն. «բա երեխեն մի ինստիտուտ էլ չավարտի՞»: Ոմանք դա կապում են շուկայի պահանջների հետ, որ հիմա դժվար է աշխատանք գտնել առանց բարձրագույն կրթության դիպլոմի, ոմանք պարզապես շուկայական անառողջ հարաբերությունների: Եվ այսպես ամեն տարի աշխատանքի շուկա են դուրս գալիս հարյուրավոր նորավարտ տնտեսագետներ, իրավաբաններ... Մինչդեռ կան մասնագիտություններ, որոնց պահանջարկը կա, սակայն դրանք հետ են մնում ուսուցանողների թվով:

Բարեբախտաբար, միջին մասնագիտական կրթական հաստատություններում տարեցտարի ավելացող դիմորդների թիվը վկայում է, որ հասարակությունում կարծես թե կոտրվում են կարծրատիպերը:

«Միջին մասնագիտական կրթությամբ մասնագետները եթե ոչ առանցքային, ապա կարևոր դիրք ունեն աշխատաշուկայում»

22-ամյա Արա Այդինյանը որպես մենեջեր աշխատում է հայաստանյան շինարարական կազմակերպություններից մեկում՝ «Գաջ» ՓԲԸ-ում: Երեք տարի առաջ նա ավարտել է Ն. Աճեմյանի անվան առևտրի և սպասարկման պետական քոլեջի «Հանրային տեսչություն և մենեջմենթ» բաժինը:

«Մասնագիտությունն ընտրել եմ անձամբ, որովհետև սիրել եմ այս ոլորտը»,– պատմում է Արա Այդինյանը: Իսկ քոլեջի ընտրությունը կատարվել է ծնողների խորհրդով:

Ի դեպ, Արան, աշխատելուն զուգընթաց, այժմ սովորում է Տեռնոպլի ազգային տնտեսագիտական համալսարանում և արդեն «Մաքսային գործ» բաժնի 4-րդ կուրսի ուսանող է:

Առևտրի և սպասարկման պետական քոլեջում ձեռք բերված գիտելիքը, ըստ Արայի, եղել է այն հիմնարար նախադրյալը, որի արդյունքում հաջողվել է անցնել աշխատանքի.

«Եթե սովորելու ցանկություն ունես, ապա քոլեջում կարող ես անհրաժեշտ գիտելիքներ ստանալ, բանիմաց դասախոսական կազմը բարձր արդյունք է երաշխավորում, և եթե գիտելիքին զուգահեռ հավելենք արտադրական պրակտիկաների միջոցով ձեռք բերվող կարողությունները, ապա կարծում եմ՝ ամեն ինչ առավել պատկերավոր կդառնա»:

Ինչ վերաբերում է այսօրվա աշխատաշուկայում միջին մասնագիտական կրթություն ունեցող կադրերի դիրքին, Արան կարծում է, որ կարևորը որակյալ մասնագետն է. «Աշխատանքային դաշտը բազմաշերտ է՝ ամեն շերտում կան համապատասխան կրթությամբ մասնագետներ, հետևաբար և մասնագետների կարիք: Միջին մասնագիտական կրթությամբ մասնագետները համալրում են այդ դաշտը և, եթե չասենք առանցքային, ապա կարևոր դիրք ունեն այստեղ»:

Ինչպես Արա Այդինյանն է ասում, զգացել է նաև, որ վերջին տարիներին ՄԿՈՒ հաստատությունների նկատմամբ մեծացել է ինչպես դիմորդների, այնպես էլ գործատուների կողմից ցուցաբերվող հետաքրքրությունը. «Դրան, ինչ խոսք, նպաստում է ՀՀ կառավարության կողմից ինչպես նախնական և միջին մասնագիտական կրթությանը, այնպես էլ տնտեսության զարգացմանը միտված քայլերը, նոր աշխատատեղերի հետ ստեղծվում է նաև բանիմաց և հմուտ մասնագետի կարիք»:

Իմաստուն է նա, ով գիտի ոչ թե շատը, այլ անհրաժեշտը...

Էսքիլես

«Տարեցտարի ավելի նկատելի է դառնում գործատուների պահանջը բանիմաց կադրերի նկատմամբ»

21-ամյա Հասմիկ Դուրգարյանը մեկն է Երևանի պետական հումանիտար քոլեջի (ԵՊՀՔ) այն հազարավոր շրջանավարտներց, որոնք, ստանալով միջին մասնագիտական կրթություն, այսօր կարողանում են աշխատել մասնագիտությամբ:

Հասմիկը 2005 թվականին ընդունվել է Երևանի պետական հումանիտար քոլեջի «Կերպարվեստ, համակարգչային դիզայն և մոդելավորում» ֆակուլտետ: Միջին մասնագիտական կրթություն ստանալուց հետո Հասմիկն արդեն մեկուկես տարի է, աշխատում է «ՎԿՍ Արմենիա» ՍՊԸ կարի ձեռնարկությունում, որպես մոդելավորող:

«Թեպետ ունեցել եմ այլ նախասիրություններ՝ թատրոն, երաժշտություն և երգ, սակայն ավելի հարազատ է նկարչությունը և կերպարվեստը, դրա համար նախապատվությունը տվել եմ այս մասնագիտությանը»,– ասում է Հասմիկը և հավելում, որ քոլեջի ընտրությունը ստացվել է պատահական, և չի ափոսոսում. տարիներ անց էլ, երբ հետադարձ հայացք է գցում, տեսնում է, որ ուսումնական հաստատության ընտրությունը ճիշտ էր կատարված:

Հասմիկն ընտրել է միջին մասնագիտական կրթությունը՝ մտածելով, որ հարկավոր է նախ ստանալ նախնական գիտելիքներ, իսկ հետագայում ուսումը կշարունակի բուհում. «Սովորելու և զարգանալու տեղ միշտ էլ կա: Քոլեջը տալիս է հիմնական գիտելիքներ, որը պետք է զարգացնել: Ես բարձր եմ գնահատում Գեղարվեստի ակադեմիան, թերևս հետագայում հենց այնտեղ շարունակեմ ուսումս»:

Իրոք, քոլեջի ուսումնական գործընթացում պրակտիկ դասընթացներին բավականին մեծ դեր է հատկացվում: Եռամյա կրթության ընթացքում գեղանկարչություն, բատիկա, գոբելեն, գորգագործություն և այլ պրակտիկ պարապմունքների միջոցով, կարելի է ասել, որ Հասմիկին հաջողվել էր գիտելիքները փորձի վերածել:

«Երբ աշխատանքի ես անցնում և զգում ես, որ գիտես, ունակ ես լուծելու գործատուի կողմից դրված պահանջները, հենց դա էլ կարելի է համարել որակյալ կրթություն,– ուրախությամբ նշում է Հասմիկը: –Պետք է ասել, որ մեր ուսումնական հաստատությունը տվել է այն անհրաժեշտ գիտելիքները և ստեղծել պայմաններ, որպեսզի մենք՝ ուսանողներս, գիտելիքները վերածենք կարողությունների, ապա հմտությունների, և այսօր ունենալով մասնագիտական ձիրք, գործարար դաշտում զբաղեցնենք որոշակի դիրք: Այժմ ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքների շնորհիվ, ես աշխատում եմ իմ մասնագիտությամբ և կարողանում եմ վաստակել»:

Հուրախություն Հասմիկի՝ այժմ «ՎԿՍ Արմենիա» գործարանը և ԵՊՀՔ-ն սոցիալական գործընկերներ են. և քոլեջի ուսանողներից շատերն ինչպես ընթացիկ, այնպես ավարտական պրակտիկաներն անց են կացնում այստեղ: Պետք է նշել, որ ուսանողներից շատերը պրակտիկայից հետո ընդունվել են աշխատանքի:

«Տարեցտարի ավելի նկատելի է դառնում գործատուների պահանջը բանիմաց կադրերի նկատմամբ: Ավելին, որոշ գործատուներ համագործակցության եզրեր են ստեղծում ուսումնական հաստատությունների հետ՝ որակյալ մասնագետներ ունենալու ակնկալիքով»,– համոզված է երիտասարդ մասնագետը:

Աշխատանքի հետ միասին նա չի մոռանում իր մասնագիտության գեղագիտական կողմը: Դեռ քոլեջում պրակտիկ պարապմունքներից բացի ուսումնական գործընթացը հագեցած էր նաև բազմապիսի այցելություններով՝ թանգարաններ, պատկերասրահներ, անհատական ցուցահանդեսներ, անմիջական շփում հեղինակ-ստեղծագործողների հետ և այլն: Հասմիկը գիտի. «Արվեստի հետ շփումը նաև հոգեպես է կրթում: Բացի այդ՝ ազատություն է տալիս, դու կարողանում ես երբեմն արտահայտել քո ներաշխարհը, պատկերացումներն ու զգացումները»:

«ԱՄԵՆ ԻՆՉ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԷԼ ՍԻՐՈ ՄԵՋ է, ՊԵՏՔ է ՍԻՐԵՍ»

Մեր կողքին ապրում են կենսական նշանակություն ունեցող մասնագիտության տեր մարդիկ, որոնց առկայությունն զգում ենք այն ժամանակ, երբ հարկավոր է լինում, ասենք, հագուստը ձևափոխել, որևէ գեղեցիկ զարդ պատրաստել, կենցաղային ինչ-որ անսարք իր կամ դետալ պատրաստել...

...Փականագործ, եռակցող, խառատ, դարբին, դերձակ, բրուտագործ...

«Վարպետաց անկյունում» իրենց տեղն են գտել այն վարպետները, որոնք տասնյակ տարիներ, մի ամբողջ կյանք են ներդրել իրենց արհեստին: Բոլոր ժամանակներում՝ անկախ հասարակարգերի փոփոխության, պահպանել են իրենց կոչումն ու փեշակը՝ մնալով վարպետ և ուստա:

Դեռևս տասներեք տարեկանից է սկսել աշխատել այժմ արդեն 57-ամյա գյումրեցի խառատ Սիմոն Այվազյանը: Ուսում այդպես էլ չի ստացել. միայն աշակերտել է Գյումրիում հայտնի վարպետ Սենիկի մոտ, ով էլ խորհուրդ է տվել ընտրել խառատագործությունը: «Մշակում ես մետաղը ու ստանում դետալ...»,– այսպես պարզ ու հասարակ բացատրում է իր քառասուն տարվա գործը վարպետ Սիմոնը՝ նայելով իր՝ մետաղից սևացած մատներին:

–Ամեն ինչ էլ պատրաստում եմ. այդպիսի գործ չի եղել, որ ցանկանան, ես չկարողանամ անել,– ասում է վարպետ Սիմոնը: Նա վերջերս է Գյումրիից տեղափոխվել Երևան և այժմ աշխատում է իր արհեստանոցում:

Այստեղ իր «պատվավոր» տեղն ունի խորհրդային տարիներին արտադրված խառատագործության հաստոցը, որ վարպետն օգտագործում է ավելի քան քսան տարի. դեռևս թիվ 2 ճանշին տրեստում աշխատելու տարիներին է այս հաստոցը եղել

նրա հավատարիմ «գործընկերը»: ԽՍՀՄ փլուզումից հետո տրեստի տնօրենի շնորհիվ այս հաստոցը որպես նվեր բաժին է հասել հենց իրեն:

«Սովետի տարիներին ֆաբրիկա կար, աշխատում էինք... Իսկ հիմա դու քեզնով ես ստեղծում այդ ֆաբրիկան: Ամբողջն ինձ վրա է»,– համեմատում է վարպետը:

Սեփական «ֆաբրիկան» սկսել է գործարկել 90-ականներից, օր կա՝ պատվերները շատ են, օր կա՝ պատվեր չի լինում: Մի խոսքով, ինչպես ժողովուրդն է ասում. «Վարպետի սովը մինչև օրվա կեսն է»:

Դետալի բարդությունից կախված՝ աշխատանքը տևում է մի քանի րոպեից մինչև մի քանի ժամ: Այսպես կոչված գնային քաղաքականությունը որոշվում է տեղում. հաշվարկվում են հումքի և հարակից ծախսերը:

«Հիմա ժողովրդի վիճակը լավացել է: 90-ականների համեմատությամբ տարբերությունը մեծ է. ժողովուրդն աշխատանք ունի, կարողանում է նաև դետալ պատրաստելու համար գումար վճարել: Միայն ինձնով հո չի՞. ժողովուրդը որ լավ լինի, իմ գործն էլ լավ կլինի», –համոզված է վարպետը Սիմոնը:

Ցավով խոստովանում է, որ խառատները այժմ հիմնականում մեծահասակ են, երիտասարդներ չեն երևում, համարյա չկան: «Խառատի գործն այնպիսին է, որ տուն կպահի: Պետք է ուսումնարաններում զարգացնեն այս բաժինը, որ երիտասարդները գնան, սովորեն,–խորհուրդ է տալիս, բայց հետո էլ ավելացնում է. –երիտասարդները պետք է իրենք ընտրեն, ստիպելով չէ: Ես հաստոցի մոտ կանգնած նայել եմ ու սովորել: Ինձ ոչ ոք չի ստիպել»:

Շատ աշակերտներ է ունեցել վարպետ Սիմոնը, որոնք սովորել են խառատությունը, մասնագիտացել. ոմանք այժմ աշխատում են Հայաստանում, մի մասն էլ՝ արտերկրում: Իր խորհուրդն է տալիս. «Վարպետը աչքաբաց պետք է լինի: Արհեստագործի աշխատանքն այնպիսինն է, որ պետք է ուշադիր լինես, որ սովորես բոլոր նրբությունները»:

Որդին՝ 28-ամյա Հակոբը, շարունակում է հոր գործը: Երբ Սիմոնը տուն բերեց հաստոցը, նա սկսեց հետևել հոր աշխատանքին և արդեն տիրապետում է խառատի մասնագիտությանը:

«Լավ վարպետ եղար, գործդ հավանեցին՝ էլի կգան,– համոզված ասում է վարպետ Սիմոնը,– սիրում եմ իմ մասնագիտությունը: Ամեն ինչ սիրո մեջ է, աշխատանքն էլ պետք է սիրես»:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆ ԱՎԵԼԱՑԵԼ Է 10 ՏՈԿՈՍՈՎ

2010-11 ուսումնական տարվա նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրով ընդունելության քննությունների դիմորդներից շուրջ 13000 հաջողվել է ուսումը շարունակելու հնարավորություն ստանալ, որից մոտ 2000-ին՝ նախնական (արհեստագործական), իսկ 11000-ին՝ միջին մասնագիտական կրթական ծրագրով:

Այս տարի բավականին մեծ է եղել դիմորդների հետաքրքրությունը մասնագիտական կրթության նկատմամբ: Դա, ըստ ոլորտի պատասխանատուների, պայմանավորված է նաև կրթության համակարգում տեղի ունեցող բարեփոխումներով՝ հիմնական և շարունակական կրթական ծրագրերի դասակարգման արդյունքում:

Ընդհանուր կրթության հիմքով (9-րդ դասարանի բազա) դիմորդների թիվն անցած տարվա համեմատությամբ ավելացել է 10%-ով, մինչդեռ նվազել է դպրոցի շրջանավարտներից դիմորդների թիվը:

«Կան 9-րդ դասարանն ավարտողներ, որոնք գերադասում են ընդունվել ուսումնարան և ոչ թե ավագ դպրոց, քանի որ ուսումնարանն ավարտելուց հետո արդեն ձեռք են բերում մասնագիտություն, ինչպես նաև բարձր առաջադիմություն ապահովելու դեպքում հնարավորություն ստանում ուսումը շարունակելու բուհի երկրորդ-երրորդ կուրսում»,– նկատում է ՀՀ կրթության և գիտության նախարարության մասնագիտական կրթության և ուսուցման բաժնի գլխավոր մասնագետ Կարեն Մանուկյանը:

Ամենամեծ պահանջարկը դիմորդների թվով եղել է «Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» բաժիններում: Այս տարի նկատվում է նաև դիմորդների ակտիվություն «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջություն» մանագիտության նկատմամբ, որն ըստ Կարեն Մանուկյանի, պայմանավորված է մեր երկրում այս ոլորտի զարգացման դինամիկայով:

«Սյունիքի մարզի Տաթև համալիրում զբոսաշրջության զարգացման նպատակով մարզի ուսումնարաններում բացվել են համապատասխան մասնագիտությամբ բաժիններ: Կարելի է ասել, որ փորձը հաջողություն ունեցավ. նորաբաց բաժիններում բավականին դիմորդներ են եղել»,– հայտնեց Կարեն Մանուկյանը:

Կան բաժիններ՝ «Իրավագիտություն», «Դասավանդում տարրական դասարաններում» և այլն, որոնցում նկատվում է դիմորդների թվի նվազում: Ինչպես փաստում է Կարեն Մանուկյանը, կրթության և գիտության նախարարությունը մեծ ուշադրություն է դարձնում նաև այնպիսի մասնագիտություններին, որոնց նկատմամբ հետաքրքրությունը համեմատաբար քիչ է, նախարարությունն այս մասնագիտությունների գծով նախընտրել է հավելյալ պետպատվեր տեղերով ապահովելու մարտավարությունը. «Ձեռնարկվում են հետևողական քայլեր, որպեսզի չկորչեն այս մասնագիտացումները»– ասում է Կարեն Մանուկյանը:

Կան մասնագիտություններ, որոնք սերտորեն առնչվում են երկրի տնտեսության զարգացման հետ և բնականաբար պետության կողմից ավելի մեծ ուշադրության են արժանանում, օրինակ՝ «Սև և գունավոր մետաղների ձուլման արտադրություն» մասնագիտությունը, որն ուսուցանվում է միայն Ալավերդու պետական քոլեջում: Ըստ Կարեն Մանուկյանի՝ այս մասնագիտությամբ ուսում ստանալու համար ՀՀ կրթության և գիտության նախարարությունը պետպատվերի շրջանակում հատկացրել է 17 տեղ:

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

Ի՞ՆՉ Է ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ, ԵՎ Ի՞ՆՉ Է ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ: Ի՞ՆՉ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՊԵՏՔ ԴՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Չափորոշիչները սահմանում են պայմաններ նախնական և միջին մասնագիտական կրթության արդյունքում շրջանավարտների մոտ անձի և աշխատուշուկայի պահանջներին համապատասխան կարողությունների ձևավորման նկատմամբ:

Մինչ այս պահը մենք ունեցել ենք ներդրումային կրթություն, բայց այժմ արդեն պետք է իրականացվի արդյունքային կրթություն: Չափորոշիչը պետք է միտված լինի կրթական արդյունքներին, ոչ թե ներդրումներին: Այսինքն՝ պետք է ավելի շատ խոսվի, թե շրջանավարտի համար ինչ կարողություններ են ձևակերպվում, քան ինչ գիտելիք հաղորդվեց նրան: Չափորոշիչը պետք է լինի այնքան ճկուն, որ ապահովի կարողություն, ոչ թե պարզապես իմացություն: Կրթական չափորոշիչը ուսումնական գործընթացից ակնկալվող արդյունքների ամբողջությունն է: Չափորոշիչը կադրի պատվերն է՝ տվյալ ուսումնական հաստատություններին:

Մասնագիտական կրթության և որակավորման չափորոշիչների տարբերությունն այն է, որ երկրորդն ավելի նեղ ոլորտներին է վերաբերում: Ասենք՝ կա սպասարկումների մենեջերի չափորոշիչ, սակայն այն կարող է լինել և՛ զբոսաշրջության սպասարկման, և՛ սննդի սպասարկման և այլն: Սակայն նման տարանջատումն արդեն հետագայի խնդիր է: Իսկ հիմա, քանի որ չենք տարանջատում, միջին մասնագիտական կրթության ժամանակ ասում ենք մասնագիտական կրթության չափորոշիչ, իսկ նախնական մասնագիտական կրթության ժամանակ՝ որակավորման չափորոշիչ:

Ո՞ՐՆ Է ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ, Ի՞ՆՉ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ Է ԿԱԶՄՎՈՒՄ ՄՈԴՈՒԼԸ

Եթե չափորոշիչը փաստաթուղթն է, ապա մոդուլը բովանդակային իրագործման ծրագիրն է, որ պետք է իրականացվի չափորոշչին հասնելու համար: Չափորոշիչը սահմանում է, թե ինչքան ժամանակ պետք է կրթություն տրվի, ովքեր կարող են սովորել, թե մասնագետն ինչ իրավունքներ և պարտականություններ ունի:

Իսկ թե ինչպես հասնել այդ ամենին, ապա դա արդեն արվում է մոդուլի միջոցով:

Ի տարբերություն առարկայական ուսուցման, որը լայն գիտական մոտեցում է, մոդուլների դեպքում կարելի է միավորել մի քանի առարկայի կարևոր հատվածները, որպեսզի լուծենք մեր առջև դրված կոնկրետ խնդիրը: Որպես օրինակ կարող ենք վերցնել հաղորդակցությունը, նախկինում այն կարող էր լինել փիլիսոփայություն, հոգեբանություն, տրամաբանություն և այլն: Իսկ այժմ կոնկրետ մի մոդուլի՝ հաղորդակցության ներքո ներառվում է այդ բոլոր առարկաներից ծաղկաքաղ արված այն հատվածները, որոնք պետք կգան կոնկրետ տվյալ մասնագիտության ժամանակ:

Հիմա պետք չէ ուսումնասիրել շատ բաներ և հետո օգտագործել դրանց միայն 10 տոկոսը, հենց սկզբից արդեն ընտրվում է այդ 10%-ը և տրվում սովորողին:

Մոդուլը պետք է ապահովի արդյունք, ոչ թե գիտելիք: Մարդը պետք է տիրապետի գիտելիքին այնպես, որ կարողանա կատարել կոնկրետ գործողություն: Իմանալը պետք է լինի գործիք, ոչ թե արդյունք:

ԻՆՉՊԻՍԻ՞ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ ԿԱՆ ՄԿՈՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Միջին և նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունները կարող են իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1. միջին մասնագիտական, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության, հանրակրթության, լրացուցիչ կրթության կազմակերպում.
2. արտադպրոցական դաստիարակության կազմակերպում.
3. նախապատրաստական դասընթացների կազմակերպում.
4. մասնագիտական ուսուցման և այլ դասընթացների կազմակերպում.
5. կադրերի վերապատրաստում, վերաորակավորում և որակավորման բարձրացում.
6. ստեղծագործական, հետազոտական, փորձարարական, փորձագիտական և խորհրդատվական գործունեության իրականացում.
7. ուսումնաարտադրական, արտադրական գործունեություն և սպասարկման ծառայությունների իրականացում.
8. ուսումնամեթոդական նյութերի, ձեռնարկների մշակում.
9. կրթական, մշակութային, սոցիալական, մարզական և այլ բնույթի միջոցառումների կազմակերպում և սպասարկում.
1. հրատարակչական գործունեություն.
11. սովորողների հանրային սննդի կազմակերպում.
12. հանրակացարանային ծառայությունների կազմակերպում.
13. սովորողների և աշխատողների հանգստի կազմակերպում.
14. մշակութային գործունեության իրականացում:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ձեռնարկատիրական գործունեության հիմնական տեսակը լրացուցիչ կրթության կազմակերպումն է:

Եթե անձն արդեն ստացել է իր հիմնական կրթությունը, սակայն ժամանակի ընթացքում նորամուծություններ են կատարվել իր մասնագիտական դաշտում, ապա նա կարող է լրացուցիչ կրթության՝ կարճաժամկետ դասընթացների միջոցով ինքնազարգանալ: Դրանք շատ հարմար են, քանի որ կյանքը շատ արագ է փոփոխվում: Դրա հետևանքով շատ արագ են փոփոխվում կարիքները:

Այդ դասընթացներին մասնակցելու համար ամենահարմար տեղը նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններն են, քանի որ ունեն կարճաժամկետ ծրագրերի իրականացման հնարավորություն, ինչպես նաև նման հնարավորություն տալիս է մոդուլային ուսուցումը:

Թեև դա նոր է ներառվել, սակայն քոլեջներում արդեն կային մի քանի լավ նախադրյալներ, երբ գործատուն դիմում է ուսումնական հաստատություն՝ առաջարկելով որևէ մասնագիտության գծով կոնկրետ վերապատրաստման դասընթացներ կազմակերպել իր աշխատակիցների համար:

2008-2010 ԹԹ. ՄՇԱԿՎԱԾ ԵՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՆԱԽՆԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՑԱՆԿԸ

(2008-2010թթ. մշակվել և հաստատվել են 80 պետական կրթական չափորոշիչներ)

Նախնական (արհեստագործական) մասնագիտական	
0515	Զարդակիրառական արվեստ, ոսկերիչ
0605	Փաստաթղթավարություն, տեղեկատվական և կազմակերպչական սպասարկում, գործավար
1210	Մետաղների մեխանիկական մշակում հաստոցների և գծերի վրա, խառատ
2014	Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում, ռադիոհեռուստատեսային սարքավորումներ սպասարկող և նորոգող ռադիոմեխանիկ
2203	Համակարգիչների շահագործում, համակարգչային օպերատոր
2304	Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում, վարսահարդար
2311	Հասարակական սնունդ, խոհարար
2401	Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում, ավտոմեքենայի վարորդ
2401	Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում, ավտոմեքենաների նորոգման փականագործ
2704	Գինեգործություն և հյութերի արտադրություն, գինեգործ
2809	Կարի արտադրության տեխնոլոգիա, դերձակ
3112	Գյուղացիական տնտեսության կազմակերպում, ֆերմեր, գյուղատնտես
0601	Հաշվետարություն, հաշվետար

0904	Օգտակար հանածոների հարստացում, հարստացնող
1002	էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում, էլեկտրասարքավորումների նորոգման և սպասարկման էլեկտրամոնտաժող
1003	Մեքենաների և մեխանիզմների էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում, էլեկտրասարքավորումների նորոգման փականագործ-էլեկտրիկ
1007	էլեկտրալուսավորման և ուժային սարքավորումների էլեկտրամոնտաժում, էլեկտրասարքավորումների, ուժային և լուսավորող ցանցերի էլեկտրամոնտաժող
1105	Մետաղների մշակման տեխնոլոգիա՝ ճնշմամբ, դարբին-դրոշմող
2402	Ավտոմատիկան, հեռուստամեխանիկան և կապը երկաթուղային տրանսպորտում, ազդանշանային, կենտրոնացման, արգելափական սարքերի սպասարկման և նորոգման էլեկտրամոնտաժող
2901	Վերամբարձ-տրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործում, ավտոկռունկավար
2908	Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում, երեսապատող-սալիկապատող
2912	Շենքերի և կառույցների սանիտարատեխնիկական սարքավորումներ, փականագործ-սանտեխնիկ
0515	Զարդակիրառական արվեստ /դերձակ-մոդելավորող/
0604	Բանկային գործ /գանձապահ/
2009	Կապի սարքավորումների մոնտաժում և շահագործում /էլեկտրակապի և լարային հաղորդումների գծային կառույցներ էլեկտրամոնտաժող/
2204	էլեկտրոնային հաշվողական մեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգում /էլեկտրոնային հաշվողական մեքենաներ սպասարկող և նորոգող էլեկտրամեխանիկ/
2512	Քիմիական արտադրության տեխնոլոգիա /լայն պրոֆիլի ապարատավար/
2802	Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա /ենթավարպետ/
2907	Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքեր /հյուսն, ատաղձագործ/
3404	Լաբորատոր հետազոտություններ և չափումներ արտադրությունում (ըստ ուղղությունների) /քիմիական անալիզի լաբորանտ/

Միջին մասնագիտական	
0601	Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (ըստ ճյուղերի), հաշվապահ
0602	Մենեջմենթ (կառավարում), (ըստ ճյուղերի), կառավարիչ (մենեջեր)
2201	Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և ցանցեր, տեխնիկ
2203	Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում, տեխնիկ
2301	Սպասարկման կազմակերպում, մենեջեր
2307	Զբոսաշրջություն, զբոսաշրջության ծառայությունների մասնագետ
2311	Հասարակական սննդի սպասարկման կազմակերպում, մենեջեր
3103	Անասնաբուծություն, անասնաբույծ
3104	Անասնաբուժություն, անասնաբույժ
3112	Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում, ֆերմեր
0201	Իրավագիտություն, իրավագետ
0207	Թարգմանություն և գործավարություն, թարգմանիչ-գործավար
0208	Թարգմանություն և մաքսավարություն, թարգմանիչ-մաքսավար
0209	Թարգմանություն և արխիվավարություն, թարգմանիչ-արխիվավար
0210	Թարգմանություն և սպասարկման կազմակերպում, թարգմանիչ-սպասարկման մենեջեր
0301	Հայոց և օտար լեզուների դասավանդում, հայոց և օտար լեզուների ուսուցիչ
0302	Հայոց լեզվի դասավանդում, հայոց լեզվի ուսուցիչ

0303	Ռուսաց լեզվի դասավանդում, ռուսաց լեզվի ուսուցիչ
0304	Օտար լեզվի դասավանդում, օտար լեզվի ուսուցիչ
0307	Ֆիզիկական կուլտուրա և սպորտ, ֆիզկուլտուրայի ուսուցիչ (մարզիչ)
0312	Դասավանդում տարրական դասարաններում, տարրական դասարանների ուսուցիչ (դասվար)
0313	Նախադպրոցական կրթություն, նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակ
0603	Ֆինանսներ (ըստ ճյուղերի), ֆինանսիստ
0604	Բանկային գործ, բանկային գործի մասնագետ
0607	Շուկայաբանություն (ըստ ճյուղերի), շուկայագետ
0902	Բաց լեռնային աշխատանքներ, լեռնային տեխնիկ-տեխնոլոգ
2014	Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի), տեխնիկ
2401	Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների), տեխնիկ
3101	Հողաշինարարություն, տեխնիկ
3102	Գյուղատնտեսագիտություն, գյուղատնտես
1705	Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում, տեխնիկ
1801	Էլեկտրական մեքենաներ և ապարատներ, տեխնիկ
2004	Կապի ցանցեր և հաղորդակցման համակարգեր, տեխնիկ
2702	Հացաթխման, մակարոնեղենի և հրուշակեղենի տեխնոլոգիա, տեխնիկ
**1103	Սև և գունավոր մետաղների ձուլման արտադրություն տեխնիկ

**1706	Վերամբարձ-տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սար-քավորումների շահագործում (ըստ ճյուղերի), տեխնիկ
**1707	Երկաթուղային շարժակազմի տեխնիկական շահագործում, տեխնիկ
**2913	Արդյունաբերական և քաղաքացիական շենքերի էլեկտրական սարքավորումների տեղակայում, կարգավորում և շահագործում, տեխնիկ
**3114	Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում և նորոգում, տեխնիկ
*0205	Սոցիալական աշխատանք, սոցիալական աշխատանքի մասնագետ
*2206	Մեխատրոնիկա, տեխնիկ-մեխատրոնիկ
*0612	Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի), ապրանքագետ
*1001	Էլեկտրական կայաններ, ցանցեր և համակարգեր, տեխնիկ
*1723	Երկաթուղային էլեկտրաքարշի տեխնիկական շահագործում, էլեկտրատեխնիկ-մեխանիկ
*1715	Բժշկական տեխնիկայի տեղակայում, տեխնիկական սպասարկում և նորոգում, տեխնիկ
*2204	Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում, տեխնիկ
*2312	Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ, կոսմետիկական ծառայությունների և դիմահարդարման տեխնոլոգ-գեղագետ
*2704	Խմորման արտադրությունների տեխնոլոգիա և գինեգործություն, տեխնիկ
*2814	Պոլիգրաֆիական արտադրություն, տեխնիկ
*2915	Գազամատակարարման սարքավորումների և համակարգերի հավաքակցում և շահագործում, տեխնիկ

Վերը ներկայացված պետական կրթական չափորոշիչներից 75-ի մշակումը կազմակերպվել է ՄԿՈՒՀԱԿ-ի կողմից, 2008-2009թթ., և հաստատվել են ՀՀ ԿԳ նախարարի հրամանով՝ 2009թ. դեկտեմբերին:

* Այս չափորոշիչների մշակումը կազմակերպվել է ՄԿՈՒՀԱԿ-ի կողմից 2010թ. և հաստատվել են ՀՀ ԿԳ նախարարի հրամանով՝ 2010թ. հոկտեմբերին:

** Այս չափորոշիչների մշակումը կազմակերպվել է ՄԱՀԾ-ի կողմից, և հաստատվել են ՀՀ ԿԳ նախարարի հրամանով՝ 2009թ. դեկտեմբերին:

ETF Working together Learning for life

ԹՈՒՐԻՆԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ 2010

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԻԶՆԵՍ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

Միլենա Կորադինի: Թուրին, սեպտեմբեր 2010

Երկրի Բնութագիրը

Մայրաքաղաքը՝ Երևան

Բնակչությունը՝ 3,077,087 (2008թ.)

ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով, գնողունակության պարիտետը՝ 6,070.088 ԱՄՆ դոլար (2008թ.)

Զբաղվածության մակարդակը, 15+ տարեկան անձանց շրջանում՝ 52.8% (Ի 42%) (2008թ.)

Գործազրկության մակարդակը, 15+ տարեկան անձանց շրջանում՝ 29.4% (Ի 36.4%) (2008թ.)

Կրթության տևողությունը՝ 11.93 (Ա 11.44 - Ի 12.44) (2007)

Ընդհանուր ընդգրկվածությունը միջնակարգ կրթության մեջ (ISCED 2 և 3)՝ 88.13 (2005) (Ա 86.21 - Ի 90.19)

Ընդհանուր ընդգրկվածությունը բարձրագույն կրթության մեջ (ISCED 5 և 6)՝ 34.21 (Ա 31.06 - Ի 37.34) (2007թ.)

Ընդգրկվածությունը ՄԿՈՒ-ում (միջնակարգի մակարդակում) (ISCED 3)՝ 3.3% (2008)

ՆԱԽԱԲԱՆ

Աշխարհի շատ երկրներ հզորացնում են իրենց կրթական համակարգերի կարողունակությունը գլոբալացման ճնշումներին և գիտելիքահենք հասարակության մարտահրավերներին դիմակայելու համար: Բիզնեսի և կրթության սերտ համագործակցությունը սովորողների աշխատանքի համար նոր հմտություններով և կարողություններով օժտելու գործիքներից է: Կրթության և տնտեսության տարբեր ճյուղերի միջև համագործակցության ներկայիս ձևերի ու եղանակների շրջանակներում ստացվող գիտելիքը, ինչպես նաև տարբեր շահագրգիռ կողմերի դերերն ու իրավասությունները սահմանափակ են և մասնատված:

Եվրոպական հանձնաժողովի կրթության և մշակույթի գլխավոր վարչությունը վստահել է ԵԿՀ-ին՝ իրականացնելու կրթության և բիզնեսի համագործակցության հետազոտություն ԵՄ հարևանության երկրներում և տարածքներում (ներառված ընդլայնման գործընթացում որպես նախամուտքային աջակցության գործիք, Եվրոպական հարևանության գործընկերության գործիքում, կամ Կենտրոնական Ասիայում)՝ նպատակ ունենալով՝

- հետազոտել կրթության և բիզնեսի միջև համագործակցության ներկայիս վիճակը,
- որոշարկել՝ որքանով են ԵՄ մոտեցումներն ու քաղաքականությունները կիրառելի ԵՄ հարևան երկրներում,
- ազգային քաղաքականություն մշակողներին ու դոնորներին տրամադրել

նպատակային տեղեկատվություն՝ հետագա պլանավորման նախաձեռնությունների և կարողությունների բարելավման միջոցառումների իրականացման համար:

Այս հետազոտության համատեքստում «կրթություն» եզրույթը ներառում է ՄԿՈՒ-ն, հետմիջնակարգ ոչ բարձրագույն և բարձրագույն կրթությունը, այդ թվում՝ պետական ու ոչ պետական հաստատություններում իրականացվող: «Բիզնես» եզրույթը ներառում է տնտեսական գործառույթներ իրականացնող ցանկացած սուբյեկտ՝ անկախ նրա իրավական կարգավիճակից: Սա կարող է ներառել միջազգային, պետական կամ մասնավոր ընկերություններ և ՓՄՁ-ներ, միկրո բիզնեսներ և ոչ ֆորմալ սեկտորում գործողների, սոցիալական գործընկերների (գործատուների և աշխատողների կազմակերպություններ), քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և նրանց՝ ուսուցում իրականացնող ստորաբաժանումները, ինչպես նաև պետական, տարածքային և տեղական իշխանություններ: Թեև հետազոտության հիմնական թիրախը համագործակցության՝ քաղաքականությունից կամ ռազմավարությունից բխող մոտեցումներն են, հետազոտությունը կրթության և բիզնեսի համագործակցությունն ընկալում է լայն իմաստով՝ դրա տակ հասկանալով քաղաքականության ցանկացած դրույթ և /կամ կրթություն/ ուսուցում իրականացնողի ու բիզնես կազմակերպության ֆորմալացված կամ ոչ ֆորմալացված ցանկացած հարաբերություն:

Սույն փաստաթուղթը Հայաստանին վերաբերող ներդրումն է: Այն մշակվել է համատեղ ջանքերով ու անցել է հետևյալ փուլերը՝ հետազոտական աշխատանք, տվյալների փոխանակում գործընկեր հաստատությունների հետ և 2010թ. հուլիսին կայացած «վավերացնող» համաժողով:

Խորհրդափոխանակության լարված գործընթացի շրջանակում, որին աջակցել է ԵԿՀ-ն, հիմնական ազգային շահագրգիռ կողմերը (համապատասխան նախարարությունների, սոցիալական գործընկերների, կրթական համակարգի, բիզնեսի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները) քննարկեցին զեկույցը և առաջարկություններ արեցին դրա բարելավման ուղղությամբ: ԵԿՀ-ն թողարկել է այս վերջնական զեկույցը՝ հիմնվելով քննարկումների առանցքային կետերի և ուղերձների վրա:

Սույն փաստաթուղթը կծառայի որպես ներդրում ԵԿՀ՝ Արևելյան Համագործակցությանը համահունչ տարածաշրջանային հետազոտության մեջ, և որպես ԵԿՀ անդրերկրային հետազոտության հիմք (կարտացոլի այն բոլոր երկրներում կատարված բացահայտումները, որոնց հետ ԵԿՀ-ն համագործակցում է): Երկուսն էլ կհրատարակվեն 2011թ. գարնանը:

ԵԿՀ երախտապարտ է բոլոր կարծիքների և դիտողությունների համար, որոնք ստացվել են բոլոր հանդիպումների ժամանակ տեղի ունեցած բուռն քննարկումների ընթացքում:

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Սկսած 1990-աններից Հայաստանի կառավարությունը կովկասյան տարածաշրջանում ամենառեֆորմիստականներից էր, և դա հանգեցրեց արագ տնտեսական զարգացման մինչև 2008թ. վերջը: 2009 թվականին համաշխարհային տնտեսական ճգնաժամը դանդաղեցրեց Հայաստանի տնտեսական աճը և առավել ընդգծեց երկրի մրցունակության բարձրացման անհրաժեշտությունը՝ ներդրողներ գրավելու, զարգացումները նոր ոլորտների վրա տարածելու և արտահանման ծավալները մեծացնելու նպատակով:

Բիզնեսի և կրթության միջև համագործակցության կարևորությունն աճում է, և այն դիտվում է որպես հասարակության և տնտեսության պահանջների համապատասխան մարդկային ռեսուրսների զարգացման անփոխարինելի միջոց:

Բարելավվում է համագործակցությունը համալսարանների և բիզնեսի միջև. արտասահմանյան ներդրողների Մրցունակության հիմնադրամի միջոցով կաջակցեն ընկերությունների հետ համատեղ ինովացիոն տեխնոլոգիական պարկի ստեղծման գործին:

Սոցիալական գործընկերների մասնակցությունը նախանշված է մասնագիտական կրթության և ուսուցման հեռանկարները որոշարկող մի շարք քաղաքական փաստաթղթերում: Առկա են որոշակի օրինակներ, որոնք կարող են կիրառվել որպես հետագա ընդօրինակման մոդելներ: Շատ հաճախ այս օրինակները հիմնված են կոնկրետ համալսարանի/քոլեջի կամ դրանց ռեկտորների/տնօրենների անձնական նախաձեռնությունների վրա և պայմանավորված են աշխարհագրական դիրքով. շատ ավելի բարդ է համագործակցություն հաստատել հեռավոր գյուղական տարածքներում, որտեղ տնտեսական զարգացումը անբավարար է: Երբեմն նախաձեռնությունները հիմնված են դոնորների ներդրումների վրա, որոնք միջոցներ են տրամադրում անձնակազմի զարգացման, ուսումնանյութական բազային հարստացման, ուսումնական պլանների և ծրագրերի բարելավման համար, և այսպիսով կրթությունը բիզնեսի համար ավելի գրավիչ է դարձնում:

Թեպետ իշխանությունները քաջատեղյակ են դոնորների օժանդակության մասին և համակարգում են այն, սակայն նրանք բավարար տեղեկացված չեն բիզնեսի ու կրթության համագործակցությանը և պատշաճ ուշադրության չեն դարձնում դրա վրա: Այսպիսով հաջողված փորձը մնում է զուտ լավ օրինակ՝ որպես առանձին նախաձեռնությունների կամ բարի կամքի դրսևորման արգասիք, որի մեթոդաբանությունը կամ արդյունքները չեն նպաստում համակարգի բարելավմանը:

Անհրաժեշտ է տարածել մոտեցումներն ու արդյունքները, և բոլոր շահագրգիռ կողմերը պետք է դասեր քաղեն լավագույն փորձի օրինակներից: Կրթության և գիտության նախարարությունը, մասնավորապես, պետք է ստեղծի նման օրինակների մասին տեղեկատվության հրապարակման, դրանց խթանման ու տարածման հնարավորություններ:

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Խորհրդային ժամանակաշրջանում սոցիալական համակարգը Հայաստանում խիստ կենտրոնացած էր և չափազանց կառավարելի: Սա վերաբերում էր նաև մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտին, ուր պետությունը միակ գործատուն էր և առանց որևէ մեկի օգնության ինքն էր պահանջներ սահմանում մասնագետների նկատմամբ և վերահսկում դրանց կատարումը, ի լրացում, տեղադրելով կարգեր մասնագետների պատրաստման համար: Այնուամենայնիվ, նույնիսկ երկրի ազատ շուկայական հարաբերությունների անցնելուց հետո էլ, ՄԿՈՒ համակարգը շարունակեց լիովին մնալ պետության ենթակայության և վերահսկողության տակ՝ այսպիսով կորցնելով աշխատաշուկայի հետ կապը: Արդյունքում համակարգը «մատնվեց մոռացության» վերջինիս կողմից: Տնտեսության զարգացման հետ մեկտեղ, աշխատաշուկայում բարձրացավ պահանջարկը որակյալ աշխատուժի նկատմամբ, և այսօր բոլորը գիտակցում են, որ բարեփոխումների այս շրջանում անհրաժեշտ է ամրապնդել ՄԿՈՒ-ի և բիզնեսի միջև կապը: Աշխատուժի զարգացման ու հանրությանն արդյունավետ ծառայությունների մատուցման տեսանկյունից կարող է ՄԿՈՒ համակարգի զարգացման նախապայման դառնա:

ՀԱՄԱՏԵՔՍՏ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային Միության փլուզումից հետո անկախացած երկրները ստիպված էին դիմակայել տարբեր մարտահրավերների, որոնցից էր ընդհանուր առմամբ վստահության բացակայությունը զարգացող և կարճաժամկետ տնտեսական գոյատևմանն ուղղված մասնավոր հատվածի և անկում ապրող պետական հատվածի միջև, որը դեռևս նպատակ ուներ վերահսկել և կենտրոնացնել արտադրական գործընթացները, ինչպես նաև սահմանել որակավորված աշխատուժի կարիքները:

Անցումը շուկայական տնտեսության ամբողջովին փոխեց մասնավորապես մարդկային ռեսուրսների զարգացման քաղաքականությունն ու դրա իրականացման համատեքստն ու հետևանքները:

Տնտեսության վերակառուցումը, խոշոր պետական ձեռնարկությունների լուծարումը հանգեցրեց մտահոգիչ ծավալների հասնող գործազրկության, որն էլ իր հերթին առաջացրեց աղքատություն և սոցիալական բացառում: Խոշոր պետական ձեռնարկությունների լուծարման պայմաններում մասնագիտական-տեխնիկական հաստատությունները հասկացան, որ իրենց հիմնական պատվիրատուն անհետանում է շուկայից, և որ իրենք ստիպված են վերանայել իրենց գործունեությունը, մասնավորապես դասախոսական անձնակազմը, ուսումնական ծրագրերը, մանկավարժական մոտեցումները՝ համապատասխանեցնելով դրանք աշխատաշուկայի նոր պահանջներին:

Տարբեր երկրների կառավարություններ փորձեցին բարելավել իրավիճակը հավակնոտ և հաճախ դոնորների կողմից օժանդակվող նախաձեռնությունների, սոցիալական երկխոսության և տնտեսական զարգացման մեջ կրթության մասնակցություն ենթադրող՝ հիմնականում պիլոտային բնույթ կրող նախագծերի իրականացման միջոցով:

Որոշ դեպքերում այս նախագծերը շատ հաջողված են եղել կարճաժամկետ հատվածում դրական արդյունքների ցուցաբերման առումով, սակայն այս նախաձեռնությունները հիմնականում չէին նպաստում համակարգային մակարդակով բարեփոխումների իրականացմանը: Սա նաև ֆինանսական ռեսուրսների սղության պատճառ էր, որը չնայած հավակնոտ համակարգային բարեփոխումներ առաջարկող մի շարք ռազմավարական քաղաքական փաստաթղթերի մշակմանն ու ընդունմանը, թույլ չէր տալիս պիլոտային նախագծերի միջոցով ձեռք բերած փորձը լայնորեն տարածել ողջ համակարգի վրա:

90-ականների դժվարությունները, որոնք ծառացան երկրի առջև, խոչընդոտեցին բիզնեսի և կրթության միջև սերտ համագործակցությունը. մասնավոր հատվածը նոր էր ձևավորվում Խորհրդային Միության փլուզումից և տարածաշրջանային կոնֆլիկտից հետո: Մինչդեռ կրթությունը պետք է բարելավեր իր որակը և ընդլայներ մասնակցությունը՝ չնայած ֆինանսական ռեսուրսների սղությանը: Սա դժվար ժամանակաշրջան էր, սակայն 2000 թվականից նկատվող տնտեսության աճը նպաստեց մտածելակերպի հետզհետե փոփոխությանը, և մեծացավ ուշադրությունը կրթության և բիզնեսի համագործակցության նկատմամբ:

Խորհրդային տարիներից ժառանգված ՄԿՈՒ-ն սակավ գրավիչ էր, քան միջնակարգ և բարձրագույն կրթությունը: ՄԿՈՒ-ն համատարած ընկալում էին որպես կրթության «երկրորդ հնարավորություն» սակավ «արտոնյալ» աշակերտների համար, ովքեր չունեին այլ ընտրություն, քան ընդգրկվել «փակուղի տանող» այս կրթության մեջ, որը հնարավորություն չէր ընձեռում ընդունվել համալսարան կամ գրավիչ աշխատանք գտնել: Տեսականորեն հնարավոր է անցում կատարել նախնական և միջին մասնագիտական կրթությունից բարձրագույն կրթություն, սակայն գործնականում, թեև միջին մասնագիտական կրթությունը մեկ տարի ավելի է պահանջում, քան միջնակարգ կրթությունը: Այնուամենայնիվ, առանց մասնավոր կրկնուսույցների օժանդակության գործնականում անհնար է հանձնել բուհերի ընդունելության քննությունները, և համեստ եկամուտներ ունեցող ընտանիքների երեխաները չեն կարող դա իրենց թույլ տալ:

Բիզնեսի և կրթության միջև համագործակցության ամրապնդման առաջին քայլերը Հայաստանում նախաձեռնվեցին 2004թ. ԵՄ ՏԱՍԻՍ-ի աջակցության նախագծի կողմից և ՄԿՈՒ միջգերատեսչական հանձնաժողովի ձևավորման արդյունքում, որն ընդգրկում էր սոցիալական գործընկերների ներկայացուցիչների:

Այդ ժամանակից կապերը կրթության և տնտեսության/բիզնեսի/աշխատաշուկայի միջև Հայաստանում լուրջ քննարկումների առարկա դարձան, և դրանք հատկապես գործատուների մշտական ուշադրության կենտրոնում են, ովքեր յուրաքանչյուր հարմար առիթով նշում են, որ հմուտ աշխատուժի խիստ պահանջ են զգում ներքին և արտաքին շուկաներում իրենց ընկերությունների մրցունակությունն ապահովելու համար: Գործատուները դժգոհ են թե՛ քոլեջների, թե՛ համալսարանների շրջանավարտների որակից՝ նշելով, որ կրթությունը չափազանց ակադեմիական է, հնացած և ոչ պիտանի ժամանակակից ընկերություններին, որոնք պետք է գոյատևեն գլոբալ շուկայում:

Ստորև բերված են կրթության և բիզնեսի միջև կապերի ստեղծման միջոցով սոցիալական

երկխոսությանը հղում կատարող հիմնական ազգային քաղաքական և ռազմավարական փաստաթղթերը:

- «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացման ռազմավարությունը», որը ներառում է 2009-2011թթ. գործողությունների պլանը: Այն սահմանում է ՄԿՈՒ զարգացման հիմնական նպատակները, ռազմավարական մոտեցումները, գրականություններն ու ծրագրային ուղղությունները:
- «Հայաստանում ցկյանս ուսումնառության հայեցակարգը», որն ընդունվել է 2009թ. հոկտեմբերին: Այն սահմանում է ցկյանս ուսումնառության սկզբունքներն ու հասկացությունները, որոշարկում է հիմնախնդիրները, առաջարկում դրանց հնարավոր լուծումները:
- «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում սոցիալական գործընկերության հայեցակարգը», որն ընդունվել է 2009թ. մայիսին: Այս փաստաթուղթը նախանշում է սոցիալական գործընկերության չորս մակարդակ՝ ազգային, տարածաշրջանային, ճյուղային և տեղական՝ հստակ սահմանված իրավասություններով:
- «ՀՀ կրթության և գիտության նախարարության, Հայաստանի գործատուների հանրապետական միության և ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի միջև նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիրը»: Այն սահմանում է ՄԿՈՒ իրականացման և զարգացման գործում գործատուների միությունների մասնակցության շրջանակները:

Վերը նշված փաստաթղթերը հազվագյուտ են հղումներ կատարում կրթության և բիզնեսի միջև համագործակցության դրական փորձին՝ որպես քաղված դասերի, և գրեթե չեն փորձում առաջարկություններ կատարել՝ ինչպես զարգացնել արդյունքները:

«ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացման հայեցակարգով» սահմանված են Հայաստանի ՄԿՈՒ համակարգի բարեփոխումների հետևյալ գերակայությունները՝

- ՄԿՈՒ ֆինանսավորման օպտիմալացում և կառավարման բարելավում,
- մասնագիտական կրթության և ուսուցման կարողութենամետ չափորոշիչների ներդրում,
- ՄԿՈՒ համակարգի գործունեության արդյունավետության բարձրացում և կրթական արդյունքների բարելավում,
- որակի մոնիթորինգի մեխանիզմների արդիականացում,
- Սոցիալական գործընկերության ամրապնդում և ինստիտուցիոնալացում:

Հայեցակարգում որոշարկված գերակայությունները հիմք են դարձել ԵՄ բյուջետային աջակցության և այլ դոնորների օժանդակության նախագծման համար: Վերը նշված բնագավառներում առկա է զգալի առաջընթաց, մասնավորապես՝ սոցիալական գործընկերների ներգրավվածության հարցում, որոնք ՄԿՈՒ բարեփոխումների ակտիվ գործընկերներն են դարձել:

Այնուամենայնիվ, երկխոսությունը դեռևս առաջին քայլերն է կատարում, և սոցիալական գործընկերները դժգոհություն են արտահայտում, որ գործընթացը դեռևս չափազանց կենտրոնացած է պետական կառույցների ձեռքերում:

Այս կապակցությամբ, 2010թ. հուլիսին ԵԿՀ կողմից կազմակերպած սեմինարի ընթացքում Հայաստանի գործատուների հանրապետական միությունն առաջարկեց ՄԿՈՒ զարգացման ազգային խորհրդի նախագահի ռոտացիա՝ պետական ու ոչ պետական հատվածների հավասար մասնակցություն ապահովելու նպատակով:

Սա հստակ ցուցադրում է, որ երկխոսության կառուցումն ու վստահության հաստատումը ժամանակ են պահանջում, հատկապես այնպիսի երկրում, ինչպիսին է Հայաստանը, ուր պետական հատվածի վարչակազմը քաղաքացիական հասարակության շրջանում մեծ ժողովրդականություն չի վայելում:

ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Կրթության և բիզնեսի համագործակցությանն առնչվող կառավարման, աջակցման և իրականացնող հիմնական կառույցներն են՝

- ՀՀ կառավարությունը ներկայացնող ՀՀ կրթության և գիտության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունները և մի շարք այլ նախարարություններ, որոնք իրենց ենթակայության տակ ունեն ուսումնական հաստատություններ, ինչպես, օրինակ՝ ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ առողջապահության, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների և ՀՀ մշակույթի նախարարությունները քաղաքական մշակման և իրականացման մակարդակով:
- Բազմակողմ մարմինները, ինչպիսիք են՝

- Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային խորհուրդը (ՄԿՈՒԶԱԽ), որը եռակողմ խորհրդակցական մարմին է և հավասար թվաքանակով (7+7+7) ներառում է երեք կողմերի ներկայացուցիչներ (պետության, գործատուներ, արհմիություններ) և ապահովում է ՄԿՈՒ ոլորտում սոցիալական գործընկերության իրականացումը ազգային մակարդակով:

Խորհուրդը նիստեր է գումարում կանոնավոր կերպով:

- Հայաստանի ազգային մրցակցության հիմնադրամը, որն անկախ կառույց է՝ հիմնադրված ՀՀ կառավարության, ինչպես նաև Միացյալ Նահանգների, Ռուսաստանի Դաշնության, Եվրամիության և Միջին Արևելքի մասնավոր սեկտորի մի խումբ առաջատար ներկայացուցիչների միջև համագործակցության միջոցով: Վերջինիս առանցքային գերակայությունն է ուժեղ կրթական համակարգի զարգացումը:
- Պետական գերատեսչությունները/կազմակերպությունները, որոնք բիզնեսի և կրթության ոլորտները կապող միջանկյալ կառույցներ են, ինչպես, օրինակ, «Զբաղվածության պետական ծառայության» գործակալությունը և նրա մարզային և տարածքային զբաղվածության կենտրոնները, Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոնը, Զբաղվածության և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտը, ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնը, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը:
- Սոցիալական գործընկերները, այն է՝ ՀԳՀՄ-ն, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը և վերջինիս տարածքային մասնաճյուղերը, գործատուների/գործարարների ճյուղային միությունները, օրինակ՝ Հայաստանի շինարարների միությունը, ինչպես նաև առանձին ընկերություններ:

- 13 մշտական ոլորտային հանձնաժողովները՝ ստեղծված ըստ տնտեսության և սոցիալական ոլորտների, որոնց նպատակն է կրթական չափորոշիչների նախագծերի փորձաքննությունն ու հավանության արժանացնելը:
- Շուրջ 120 ուսումնական հաստատությունների Կառավարման խորհուրդները (2009թ.):

Մասնագիտական ուսումնական հաստատություններում խորհուրդների ստեղծում: Դրանց կազմում ընդգրկված է 2-3 գործատու, իսկ խորհուրդների նախագահների մեծ մասն ընտրվել են հենց նրանց թվից:

- Կազմակերպություններ, որոնք առաջարկում են կրթություն և ուսուցում, ինչպես օրինակ պետական և մասնավոր կրթական հաստատությունները /համալսարաններ, քոլեջներ/, առևտրային և ոչ առևտրային հիմունքով կրթական ծառայություններ մատուցողները:
- Միջազգային կազմակերպություններ, որոնք տարբեր ծրագրերի և նախագծերի միջոցով, ինչպես, օրինակ՝ UNDP (ՄԱԿ-ի զարգացման ծրագիր), EU(Եվրամիություն), ETF (Եվրոպական կրթական Հիմնադրամ/, ILO(Աշխատանքի միջազգային կազմակերպություն), USAID (Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն), dvv international (Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միություն) և WB (Համաշխարհային Բանկ):
- համաձայն «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի՝ 2006թ. օգոստոսին ստեղծվել են հանրապետական և տարածքային համաձայնեցման կոմիտեներ: Համաձայնեցման կոմիտեի խնդիրն է՝ բնակչության զբաղվածության պետական ծրագրերի մշակման և իրականացման ընթացքում սոցիալական գործընկերների մասնակցության ապահովումը: Հանրապետական համաձայնեցման կոմիտեն քննարկում է բնակչության զբաղվածության հանրապետական ծրագրի նախագիծը և դրա վերաբերյալ եզրակացություն ներկայացնում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, մոնիթորինգի ենթարկում ծրագրի իրականացումը: Ներկայումս գործում է 51 համաձայնեցման կոմիտեներ, որոնք ուղղորդում են զբաղվածության տեղական ու տարածքային կենտրոնների գործունեությունը:
- Արհմիությունների կոնֆեդերացիան ստեղծվել է 1992թ. և ներառում է 24 անդամ արհմիություն: Միություններն ունեն ընդհանուր թվով 300 հազար անդամ: Յուրաքանչյուր ճյուղային միություն ունի իր կանոնադրությունը: Արհմիությունները սերտորեն համագործակցում են պետության հետ և ակտիվորեն մասնակցել են նոր Աշխատանքային օրենսգրքի մշակմանը:

Թեև արհմիությունները պետական գերատեսչությունների և գործատուների կողմից ընկալվում են որպես ոչ բավարար ազդեցիկ ու բավական պասիվ մարդկային ռեսուրսների զարգացման գործում, նրանք կառույցներ ունեն ազգային, տարածքային և տեղական մակարդակներում՝ մեծ թվով անդամներով:

Գործատուների համեմատությամբ արհմիություններն ավելի լավ են կազմակերպված, սակայն կարիք ունեն արդիականացնելու և վերահմաստավորելու իրենց դերն աշխատողների իրավունքների պաշտպանության գործում՝ առավել մեծ ակտիվություն դրսևորելով որակավորումների, ուսուցումների և հմտությունների զարգացման հարցերում:

Արհմիությունների կոնֆեդերացիան ունի ուսումնահետազոտական կենտրոն, որը 2006թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացրել է երիտասարդների զբաղվածության հետազոտություն:

Այժմ թե՛ կրթության, թե՛ բիզնեսի ներկայացուցիչները դրական վերաբերմունք են դրսևորում համագործակցության նկատմամբ: Ակնհայտ է փոխադարձ տեղեկացվածությունը և այն խթանելու ցանկությունը: Միաժամանակ դեռևս առկա է որոշակի փոխադարձ անվստահություն, որը խոչընդոտում է մեծածավալ ծրագրերի իրականացումը: Գործատուներն ավելի լավ են տեղեկացված ուսումնական հաստատություններում տիրող իրավիճակին և նրանց դժվարություններին ֆինանսական ռեսուրսների, գույքով և սարքավորումներով, ուսումնամեթոդական նյութերով ապահովվածության տեսանկյունից:

Թեև Խորհուրդներն ստեղծվել են 2008թ., սակայն սկսել են գործել 2009թ. հունվարից:

Բիզնեսը, լինելով ավելի ճկուն, առավել հակված է համագործակցության կրթության ոլորտի հետ, քան վերջինս, որն ավելի պահպանողական է և փոփոխություններն ավելի դժվար ընդունող:

Պետական կրթական չափորոշիչների մշակման գործընթացում գործատուների մասնակցությունը. 2008-2009թթ. ժամանակահատվածում ստեղծվեցին աշխատանքային խմբեր գործատուների և (կամ) վերջիններիս ներկայացուցիչների անդամակցությամբ: Վերջիններս մշակեցին ՄԿՈՒ 61 պետական կրթական չափորոշիչ՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան: 2010 թվականին կմշակվի ևս 19 չափորոշիչ նման աշխատանքային խմբերի կողմից, որոնց անդամների թեկնածությունները պաշտոնապես ներկայացվում են ՀԳՀՄ-ի, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի կողմից՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության պահանջով:

Համագործակցություն Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի (ԵՊՃՇՀ) և Հայաստանի շինարարների միության (ՀՇՄ) միջև

- Միության մասնագետները ներգրավված են ԵՊՃՇՀ-ի Գիտական Խորհրդում:
- ԵՊՃՇՀ-ի ռեկտորը հանդիսանում է ՀՇՄ Խորհրդի անդամ:
- ՀՇՄ մասնագետները ԵՊՃՇՀ-ում հաճախ կարդում են դասախոսություններ և հանդես գալիս ելույթներով տարբեր թեմաների շուրջ:
- ՀՇՄ ներկայացուցիչներն ուսանողներին, երիտասարդ դասախոսներին և մասնագետներին տրամադրում են խորհրդատվություն, ղեկավարում են կուրսային աշխատանքների և գիտական ատենախոսությունների նախագծեր, աջակցում են հետազոտական աշխատանքներին, գիտական հոդվածների մշակմանը և վերջիններիս հրատարակմանը Միության ամսագրում:
- ՀՇՄ-ն օգնում է կազմակերպել ուսումնական պրակտիկաներ (տարեկան 200-300 ուսանողներ)՝ տրամադրելով շինարարական հրապարակներ, շինանյութ և ապահովելով համապատասխան մասնագետների առկայությունը:
- ՀՇՄ-ն տարեկան վճարում է 4-5 լավագույն ուսանողների ուսման վարձերը:

Կրթություն-Բիզնես համագործակցության օրինակ՝ Եղեգնաձորի պետական քոլեջ

- Քոլեջի և տարածաշրջանի գործատուների միջև ստեղծվել է սերտ համագործակցություն, որն իրականացվում է ամբողջ տարվա ընթացքում:
- Գործատուների հարցումների միջոցով ճշտվում են ինչպես պահանջարկ ունեցող մասնագիտությունները, այնպես էլ անհրաժեշտ կադրերի քանակը: Պարբերաբար գրանցվում են քոլեջի շրջանավարտների աշխատանքի տեղավորման վերաբերյալ տվյալները:
- Վերջին 5 տարիների ընթացքում քոլեջի շրջանավարտների շուրջ 74%-ը տեղավորվել է աշխատանքի, որից մասնագիտական աշխատանք են գտել քչերը:
- Պայմանագրեր են կնքվել գործատուների հետ շրջանավարտներին աշխատանքի տեղավորելու նպատակով:
- Գործատուները մասնակցում են ավարտական քննություններին՝ լավագույն մասնագետներ ընտրելու հնարավորություն ունենալով:

Գործատուների մասնակցությունը կրթական հաստատությունների ավարտական գնահատման հանձնաժողովներին. թե՛ համալսարաններում, թե՛ քոլեջներում և ուսումնարաններում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովները, որոնք իրականացնում են շրջանավարտի ամփոփիչ գնահատումը դիպլոմային աշխատանքի կամ ավարտական քննության միջոցով, նախագահում են տնտեսության համապատասխան ոլորտը ներկայացնող գործատուներ: Նրանց պարտականությունների մեջ է մտնում նաև ուսումնական գործընթացը բարելավելու վերաբերյալ առաջարկություններ տրամադրելը:

Գործատուների մասնակցությունը ավարտական քննություններին քաջալերում է շրջանավարտներին ցուցաբերել ավելի բարձր առաջադիմություն, քանի որ ընկերությունների ներկայացուցիչներին դիտարկում են որպես իրենց պոտենցիալ գործատուների:

Անմիջական կապեր ուսումնական հաստատությունների և ընկերությունների միջև. շատ ուսումնական հաստատություններ անմիջական երկարաժամկետ համագործակցություն են հաստատում առանձին ընկերությունների հետ, որոնք ապագայում կարող են աշխատանքով ապահովել իրենց շրջանավարտներին: Այս պարագայում ընկերություններն աջակցում են հաստատություններին բարելավելու նրանց ուսումնանյութական բազան /ուսումնական գույքի և սարքավորումների տրամադրման կամ ուղղակի ֆինանսական օժանդակության միջոցով/ կամ ապահովում գործնական ուսուցման հնարավորություններ և այլն: Նման համագործակցության մի քանի լավ օրինակներ ներկայացված են Հավելված 1-ում:

Հաստատությունների կողմից իրականացվող կարճաժամկետ վերապատրաստումներ. հիմնականում ներառում են «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության կողմից պատվիրված՝ գործազուրկների կարճաժամկետ վերապատրաստումները և ընկերությունների ուղղակի պատվերով իրականացվող վերապատրաստումները, որոնք կարող են ներառել անձնակազմի ընթացիկ վերապատրաստումը կամ ապագա աշխատակիցների վերապատրաստումը:

Այս առումով կարելի է նշել «Կոկա-կոլա» և «Օրանժ Արմենիա» անդրազգային ընկերությունների օրինակը. 2009թ. նրանք դիմել են Երևանի պետական ճարտարագիտական քոլեջին և պատվիրել 15-21 էլեկտրիկների 6-շաբաթյա վերապատրաստում: Ընկերություններն ուղղակիորեն մասնակցել են դասընթացի ծրագրի մշակմանը և վերապատրաստվողների ավարտական քննություններին, որոնք էլ հետագայում անցել են աշխատանքի այդ ընկերություններում:

Ուսանողների արտադրական պրակտիկա. ուսումնական հաստատություններում դասավանդվող տարբեր մասնագիտությունների համար, համաձայն չափորոշիչների և համապատասխան ուսումնական ծրագրերի, յուրաքանչյուր ակադեմիական տարվա համար նախատեսված է միջինը 6-10-շաբաթյա արտադրական պրակտիկա: Նշված պրակտիկան իրականացվում է համապատասխան կազմակերպություններում /ներառյալ մասնավոր ընկերությունները/ և ուսանողների գործունեության ղեկավարումը կատարվում է հաստատության ներկայացուցիչների, ինչպես նաև ընդունող կազմակերպության պատասխանատու մասնագետների կողմից: Այնուամենայնիվ առկա են կազմակերպություններում ուսանողների արտադրական պրակտիկան կազմակերպման խնդիրներ, որոնք են.

- գրեթե բոլոր ոլորտներում ուսանողների քանակն ավելի մեծ է, քան կազմակերպությունը կարող է ընդունել վերջիններիս արտադրական պրակտիկան կազմակերպելու համար.
- ուսանողները բավական թույլ են նախապատրաստված որևէ գործնական աշխատանքի կատարման համար, և այդ պատճառով էլ ընդունող կազմակերպությունները սովորաբար թույլ չեն տալիս վերջիններիս մասնակցել արտադրությանը, և ուսանողները հիմնականում դիտորդի դեր են կատարում
- գործատուները սովորաբար պրակտիկանտներին չեն դիտարկում որպես իրենց ապագա աշխատողներ:

Այնուամենայնիվ, կարելի է նշել հետևյալ լավ օրինակները:

Գործարար ուսումնառություն. 2008թ. ՀԳՀՄ-ը կազմակերպեց «Ձեռներեցության օրեր» հանրակրթական դպրոցներում, քոլեջներում և համալսարաններում: Այդ հաստատությունների շուրջ 1.000 ուսանող և աշխատակից մասնակցեցին այս իրադարձությանը, որը նվիրված էր այնպիսի թեմաների, ինչպիսիք են՝ աշխատաշուկայի հարցերը, գործատուների պահանջները, մասնագիտական կողմնորոշումը, տնտեսության ոլորտի զարգացումը և այլն:

Իրականում ՄԿՈՒ-ն շարունակում է մնալ ոչ այնքան գրավիչ և ընկալում է որպես կրթության «երկրորդ հնարավորություն» սակավ «արտոնյալ» աշակերտների համար, բացակայում է ՄԿՈՒ համար ծառայությունների մատուցման և կողմնորոշման իրական համակարգը: Սրա պատճառներից է նաև այն, որ ՄԿՈՒ ընդունելության տեղերի թվի սահմանումը ՀՀ կրթության և գիտության նախարարության վարչական գործառույթներից է, որն ուղղակի տեղե-կություններ է հավաքում այլ նախարարություններից ու տարածքային մարմիններից՝ առանց վերլուծելու, թե ինչ է իրականում պահանջում աշխատաշուկան:

«Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունն ուղղորդում է գործազուրկներին զբաղվածության տեղական կենտրոնների կողմից մատուցվող ծառայությունների շրջանակ-

ներում: Կարիերայի կենտրոններ ստեղծվել են բոլոր բուհերում, սակայն դրանք արդյունավոր չեն հետևյալ պատճառներով.

- տնտեսության անբավարար զարգացման հետևանքով աշխատանքային թափուր պաշտոնները շատ սահմանափակ են,
- խիստ սահմանափակ են տեղեկությունները աշխատաշուկայի զարգացումների և առկա թափուր տեղերի մասին,
- ո՛չ գործատուն, ո՛չ էլ շրջանավարտը լիովին չեն վստահում կարիերայի կենտրոններին:

Գործատուների կողմից կատարված առանձին դրական քայլեր են՝

Տեղեկատվության փոխանակում. երկկողմ իրազեկությունն ապահովելու համար կիրառվում են տեղեկատվության փոխանակման տարբեր միջոցներ և խորհրդափոխանակություն. պաշտոնական փաստաթղթեր, ամսագրեր, ուղեցույցներ, մասնագիտական կողմնորոշման բրոշյուրներ և տեղեկատվության բուկլետներ: Հեռուստատեսությունը, ինտերնետը և արտաքին գովազդները առավել լայն օգտագործվող միջոցներն են, որոնք հաղորդում են աշխատաշուկային վերաբերող վերջին նորությունները: Գործատուների ու կրթության ոլորտի ներկայացուցիչների մասնակցությամբ հեռուստահաղորդումներն ու բանավեճերը սովորական են դարձել: Ամեն տարի կազմակերպվող կրթություն-աշխատաշուկա ցուցահանդեսները և աշխատանքի տոնավաճառները կարևոր դեր են կատարում կրթության ու բիզնեսի միջև կապերի հզորացման գործում:

Վերջերս տպագրված նյութերի օրինակները ներառում են.

- «Մասնագիտական կրթություն» ամսագիրը, որը հրատարակում է ՀԳՀՄ-ն,
- «Խորհուրդներ ճիշտ կրթություն ընտրելու և աշխատաշուկայում առաջընթացի համար» բրոշյուրը՝ հրատարակված ՀԳՀՄ-ի և Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից /2008թ./, որն ուղեցույց է դպրոցների, քոլեջների, բուհերի ուսանողների, երիտասարդների և դասախոսների համար:
- «Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում գործատուների ներգրավման ուղիները» ձեռնարկը՝ հրատարակված Բրիտանական Խորհրդի և ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից /2010թ./: Ձեռնարկի գլխավոր նպատակն է՝ ներկայացնել ՄԿՈՒ ոլորտում գործատուների ներգրավման հնարավոր ձևերն ու սկզբունքները և այն օգուտները, որ կողմերը կարող են քաղել այս գործընթացից: Ձեռնարկը նախատեսված է քոլեջների և արհեստագործական ուսումնարանների տնօրենների, գործատուների հետ կապեր հաստատելու համար պատասխանատու աշխատողների, ինչպես նաև գործատուների և շահագրգիռ կողմերի ավելի լայն շրջանի ներկայացուցիչների համար:

Անհրաժեշտ է հիշատակել նաև բիզնեսի կողմից իրենց սեփական անձնակազմի և (կամ) այլ ընկերությունների համար իրականացվող կրթությունը/ուսուցումը: Վերջերս ուսուցման կենտրոններ են կազմավորվել մի շարք խոշոր ձեռնարկություններում, որոնք ապահովում են իրենց աշխատակիցների շարունակական ուսուցումը, ինչպես, օրինակ՝

- Հայաստանի շինարարների միության ուսումնական կենտրոնը շինարարական ընկերությունների համար առաջարկում է 6-ամսյա ուսուցում՝ նախատեսված 10 անձի համար /տարեկան միջինը 20 մարդ/ և տալիս վկայականներ:

- Հայաստանի շինարարների միությունը Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում և դրա քոլեջում կամավորական սկզբունքներով կազմակերպում է դասախոսություններ տարբեր թեմաների շուրջ:
- «Բիլայն» ընկերության ուսուցման կենտրոնը դասընթացներ է իրականացնում ոչ միայն իր սեփական անձնակազմի, այլև այլ, մասնավորապես՝ վրաստանյան ընկերությունների համար: Վերը նշված դասընթացների տևողությունը 6 ժամից 2 շաբաթ է: Տարեկան միջինում 2.000 մասնագետ է պատրաստվում և վկայական ստանում:

2008 թվականից մինչև 2010թ. հունիս 250 գործատուների վերապատրաստումներ են իրականացվել ՀԳՀՄ-ի կողմից՝ ՓՄՁԱԿ-ի, World Vision-ի և ԱՄԿ-ի հետ համագործակցությամբ, հետևյալ թեմաներով՝ «Սկսի՛ր քո բիզնեսը», «Բիզնես սկսնակների համար», «Աշխատանքային օրենսդրություն», «Աշխատանքի պաշտպանություն» և այլն:

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Նախորդ բաժիններում ներկայացված ապացույցները հաստատում են, որ վերջին տարիներին արձանագրվել են ՄԿՈՒ համակարգի բարեփոխումների դրական միտումներ և բիզնեսի հետ կապի ամրապնդում: Այնուամենայնիվ, գործընթացը դեռևս շարունակվում է, և հետևյալ խոչընդոտները կարող են բացասական ազդեցություն ունենալ դրա արդյունավետության վրա.

- օրենսդրական դաշտը, որը բարենպաստ չէ հարկային և մաքսային քաղաքականության տեսանկյունից,
- կրթության և բիզնեսի համագործակցության խթանմանն ուղղված քաղաքական փաստաթղթերը հիմնականում մտադրություններ են արտահայտում, սակայն չեն պարունակում՝ ժամկետների և ռեսուրսների աղբյուրների նշումով գործողությունների որևէ պլան: Բացակայում է մոնիթորինգի մեխանիզմը,
- ընկերություններն ունեն այլ գերակայություններ,
- դեռևս առկա է անվստահություն հաստատությունների և ընկերությունների միջև, որը գալիս է պետական և մասնավոր հատվածների միջև նախկին անվստահությունից,
- հաստատությունների դասավանդողների և ղեկավարների հեղինակություն: Ուսումնական հաստատությունների դասախոսների և ղեկավարների մասնագիտական որակավորումը անբավարար է, և, ի լրումն դրան, ցածր աշխատավարձը բացասաբար է ազդում նրանց աշխատելու շահադրդվածության վրա,
- մասնագիտական հաստատությունների թույլ կարիերայի կենտրոնները, որոնք որոշ դեպքերում գրեթե չեն աշխատում և կրթության ու բիզնեսի միջև երկխոսության զարգացման մեջ որևէ ներդրում չեն կատարում,
- աշխատաշուկայի առկա վերլուծությունները բավարար ճշգրիտ չեն, և սոցիալական գործընկերները հաճախ դժգոհում են, որ հաճախ անհրաժեշտ հետազոտական աշխատանքների պակաս է նկատվում,

• որակավորումների պահանջարկը չի գալիս անմիջականորեն գործատուներից, այն կենտրոնացված է և հիմնականում՝ միտված առաջարկին:

Կրթության և բիզնեսի համագործակցության խթանման խոչընդոտ է միկրո ձեռնարկությունների թույլ զարգացածությունը: ՓՄՁ մշակույթն ընդհանրապես դեռևս զարգացած չէ Հայաստանում և չի համապատասխանում զբաղվածության և տնտեսական աճի պահանջներին: Որոշ ընտանեկան ձեռնարկություններ սկսել են գործել հյուրանոցային բիզնեսում, սակայն դրանք միայն առանձին մարզերում են (Իջևան, Վանաձոր, Ծաղկաձոր):

Ինչպես նշվեց վերևում, կրթություն-բիզնես կապի ակտիվացմանը նպաստեցին ար-տաքին օժանդակությունը, փորձի փոխանակումը, արտասահմանյան լավագույն փորձի ներգրավումը: ԵՄ ՈՔԱԾ 2007-ի շրջանակում իրականացվեց Հայաստանում ցկյանս ուսում-նառությունը խթանող ուսուցման հիմնադրամ (ՈՒԱՀ) ստեղծելու նպատակահարմարության հետազոտություն: Վերջինս ցույց տվեց, որ շարունակական ուսուցման առաջարկը բավական սահմանափակ ծավալներ ունի և հիմնականում իրականացվում է զբաղվածության ծառայությունների, ՄԿՈՒ քոլեջների, ՀԿ-ների և խոշոր ընկերությունների կողմից, երբ նրան նոր անձնակազմ են հավաքագրում:

Հետազոտության հիմնական եզրակացություններն են՝

• գրեթե բոլոր շահագրգիռ կողմերը համաձայն էին այն մտքի հետ, որ ՈՒԱՀ-ը պետք է անկախ լինի կառավարությունից,

• Շիրակի, Լոռու և Տավուշի մարզի բոլոր շահագրգիռ կողմերը, չնայած որ դրական վերաբերմունք արտահայտեցին հիմնադրամի ստեղծման վերաբերյալ, սակայն բավա-կանին հոռետեսորեն էին մոտենում այն հարցին, թե գործատուները պատրաստ կամ ի վիճակի կլինեն ներդրումներ կատարելու հիմնադրամի հաշվին ներկայիս անբարե-նպաստ տնտեսական պայմաններում (Տավուշի առևտրաարդյունաբերական պալատը տեղեկացրեց, որ իրենք ստիպված են եղել ժամանակավոր դադարեցնել անդամա-վճարների հավաքագրումը, քանի որ դրանց վճարումը գրեթե անհնարին է դարձել իրենց անդամների համար),

• Շահագրգիռ կողմերի մեծ մասը կարծում է, որ գործատուների համար հիմնադրամին վճարում կատարելու դրդապատճառ կարող է հանդիսանալ միայն այն փաստը, որ հիմնադրամը կարողանա ապացուցել, որ ինքը կարող է բավարարել աշխատաշուկայի կարիքները, և նրա ֆինանսավորումը լինի թափանցիկ,

• Շահագրգիռ կողմերի մի մեծ զանգված կարևոր է համարել հիմնադրամի գործունեության սկզբում միջազգային կառույցների դրամական մասնակցությունը,

• Շահագրգիռ կողմերի մեծ մասը նաև արտահայտել է այն միտքը, որ ՄԿՈՒՁԱԽ-ի կառուցվածքը և կազմը կիրառելի է նաև ՈՒԱՀ-ի համար,

• Շահագրգիռ կողմերի 30%-ը համարում է, որ գործատուները պետք է որոշակի հարկային արտոնություններ ստանան ՈՒԱՀ-ի բյուջեին ներդրումներ կատարելու դեպքում,

• Շահագրգիռ կողմերի 30% գտնում է, որ կառավարության համար դժվար կլինի նման արտոնություններ տրամադրել հիմնադրամ ներդրում կատարողներին:

Ուսումնասիրությունը եզրակացնում է, որ Հայաստանում առկա են հիմնադրամ ստեղծելու

համար անհրաժեշտ պայմանները, և այն կարելի է կազմակերպել հիմնադրամի իրավական-կազմակերպական տեսքով, որը կկառավարվի հավասար իրավասություններով՝ եռակողմ հոգաբարձուների խորհրդի կողմից:

ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առկա դժվարությունների, մարտահրավերների հաղթահարման համար առաջարկվում է՝

1. Աջակցող կառույցներ՝ քաղաքականության մակարդակ.

- կրթության ոլորտը կարգավորող օրենքներում կատարել այնպիսի փոփոխություններ և լրացումներ, որոնք կնպաստեն Սոցիալական գործընկերների մասնակցությանը, հստակ կսահմանեն նրանց խնդիրներն ու իրավասությունները,
- ընդլայնել սոցիալական գործընկերների դերը ՄԿՈՒ՝ որպես զբաղվածության առավել մեծ հնարավորություններ ընձեռող համակարգի գրավչության բարձրացման գործում,
- ֆինանսական արտոնություններ տրամադրել այն գործատուներին, որոնք ցանկություն ունեն ներդրումներ կատարում կրթության ոլորտում,
- կրթություն-բիզնես համագործակցության խթանումը ներառել մասնագիտական կրթություն և ուսուցման արդիականացմանը և աշխատաշուկայի կարիքներին ուղղված՝ մեծահասակների ուսումնառությանը վերաբերող քաղաքական փաստաթղթերի առանցքային գերակայությունների շարքում: Մշակել ժամկետներ, ռեսուրսներ և մոնիթորինգի մեխանիզմներ պարունակող գործողությունների պլան:

2. Աջակցող կառույցներ՝կարողությունների բարելավում

- քոլեջներում ապահովել ուսանողներին անհրաժեշտ տեղեկատվություն և մասնագի-տական կողմնորոշում տրամադրելու հնարավորություններ,
- կազմակերպել սեմինարներ, միջոցառումներ կենտրոնական, մարզային և տեղական մակարդակներում, որտեղ քոլեջներն ու սոցիալական գործընկերները կհրավիրվեն ներկայացնելու իրենց սեփական փորձը,
- ՀՀ ԿԳՆ և ԶՊԾԳ անձնակազմի ներկայացուցիչներին վերապատրաստել սոցիալական գործընկերության հարցերի վերաբերյալ,
- քոլեջների և ուսումնարանների միջև կազմակերպել մրցույթներ կրթություն-բիզնես լավագույն փորձը որոշարկելու նպատակով,
- բարձրացնել դոնորների և ՀՀ կրթության և գիտության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների ակտիվությունը իրականացման և մոնիթորինգի հարցում սոցիալական երկխոսությունը խթանելու գործում,
- Ստեղծել «Բիզնես-կրթություն համագործակցություն» ինտերնետային կայք, որտեղ կտեղադրվեն գործատուների, կրթության ներկայացուցիչների, ուսանողների առաջարկությունները, ինչպես նաև վերջին նորությունները համագործակցության վերաբերյալ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Երևանի առևտրի և սպասարկման պետական քոլեջ

- Քոլեջը պայմանագրային կապեր ունի մեկ տասնյակից ավելի ձեռնարկությունների և կազմակերպությունների հետ, ուր ուսանողներն անցնում են իրենց արտադրական պրակտիկան, իսկ հետագայում անցնում աշխատանքի:
- Քոլեջը սերտորեն համագործակցում է «Գոլդեն Փալաս» հյուրանոցային համալիրի հետ, որի տնօրենը քոլեջի կառավարման խորհրդի անդամ է:
- Քոլեջում պարբերաբար անցկացվում են դասախոսություններ («Գոլդեն Փալաս» հյուրանոցային համալիրի աշխատակազմ), որի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել նոր տեխնոլոգիաներին, հյուրանոցային մենեջմենթի նրբություններին:
- Գործընկեր գործատուների ներկայացուցիչները մասնակցում են պետական որակավորման քննություններին:
- 2010թ. ամռանը քոլեջի 30 ուսանողներ աշխատելու են «Զրաշխարհ» համալիրում համաձայն պայմանավորվածության:
- «Մառանիկ» և «էկլեկտիկա» ՍՊԸ-ներն առևտրի և սպասարկման բնագավառներում ապահովում են ուսանողների պրակտիկ կարողությունների զարգացումը, օգնում են քոլեջին մարզագույքի ձեռքմբերման և շրջանավարտներին աշխատանքի տեղավորման հարցում:
- Քոլեջի վերջին կուրսի ուսանողների մոտ 70%-ը համատեղում է աշխատանքը ուսման հետ (նրանք անցել են ուսման անհատական գրաֆիկի):
- Քոլեջի շրջանավարտների մոտ 50%-ը տեղավորվում է գործատուների մոտ աշ-խատանքի:
- Քոլեջն ի վիճակի է իր դասախոսական կազմով իրականացնել կարճաժամկետ վերա-պատրաստումներ գործատուի պահանջով:
- Գործատուն իջեցրել է պատվեր քոլեջին 4 մասնագետների պատրաստման համար՝ վճարելով նրանց ուսման վարձը:
- Վերապատրաստվել է քոլեջի ամբողջ դասախոսական կազմը, որը վստահություն է ներշնչում գործատուներին:

Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական քոլեջ

- Քոլեջն ակտիվ աշխատանքներ է տանում գործատուների լայն շրջանակի հետ համագործակցություն հաստատելու և զարգացնելու ուղղությամբ:
- Գործատուները մասնակցություն ունեն ուսանողների գործնական կարողությունների զարգացման և հաստատության նյութատեխնիկական բազայի բարելավման գործին:
- Զբոսաշրջության, սպասարկման և հանրային սննդի ոլորտը բարձրակարգ մասնագետներով

ապահովմանն աջակցելու նպատակով «Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամը 2009թ. քոլեջին տրամադրեց ֆինանսական միջոցներ՝ քոլեջի լավագույն ուսանողներին անվանական կրթաթոշակ շնորհելու նպատակով: Հիմնադրամը քոլեջին նվիրաբերեց նաև խոհանոց, մարզական գույք և միկրոավտոբուս:

- Ձեռք է բերվել նաև պայմանավորվածություն հետագա համագործակցության վերաբերյալ, մասնավորապես՝ ուսանողների պրակտիկայի վայրերի ապահովման, շրջանավարտներին դիպլոմների հանդիսավոր հանձնման արարողությունների կազմակերպման վերաբերյալ և այլն:
- Ուսանողների պրակտիկան կազմակերպելու և անցկացնելու նպատակով քոլեջն ակտիվ համագործակցում է մեկ տասնյակ առաջատար ձեռնարկությունների հետ, ինչպես, օրինակ՝ «Շանթ պլյուս» ՍՊԸ, «Երևանի Գարեջուր» ՓԲԸ, «Անի Պլազա» հյուրանոց և այլն («Մասնագիտական կրթության ոլորտում Գործատուների ներգրավման ուղիները», Երևան, Բրիտանական դեսպանատուն, Բրիտանական Խորհուրդ, 2010թ.):

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (ՀՊՃՀ) և «Սինոփսիս -Արմենիա» Փակ համատեղ ձեռնարկության միջև համագործակցություն

ՀՊՃՀ «Միկրոէլեկտրոնային սխեմաներ և համակարգեր» միջդեպարտամենտալ ամբիոնը դարձավ Սինոփսիս Համաշխարհային Համալսարանական Ծրագրի անդամ ՀՊՃՀ և «Սինոփսիս-Արմենիա» ՓԲԸ միջև կնքված համագործակցության համաձայնագրի շնորհիվ:

Սինոփսիսը մասնակից համալսարանների հետ միասին, հենվելով արդյունաբերական համագործակցության վրա, օգտագործում է «Արդյունաբերություն/Համալսարան» մոդելը:

Բակալավրի ծրագրի առաջին տարիներին ուսանողները հիմնական գիտելիքներ են ստանում մաթեմատիկայից, ֆիզիկայից և այլ առարկաներից: ՀՊՃՀ-ում գործող Սինոփսիս-Արմենիա ուսումնական ֆակուլտետում ուսումը շարունակելու նպատակով ընտրվում են այն լավագույն ուսանողները, ովքեր իրենց ուսուցման 4-րդ կամ 5-րդ կիսամյակում արդեն ձեռք են բերել հիմնական գիտելիքներ:

Ուսանողների ընտրությունը կատարվում է Սինոփսիսի առաջատար գիտական փորձագետների և համալսարանի ավագ դասախոսների կողմից: Բակալավրիատում, մագիստրատուրայում և ասպիրանտուրայում ուսուցումն իրականացվում է պատվիրատուի պահանջներին համապատասխանեցված ուսումնական պլաններով, գերմեծ ինտեգրալ սխեմաների և էլեկտրոնային նախագծման ավտոմատացման ոլորտներում: Անհատական պատվերով մշակված ուսումնական պլանները հիմնված են արդյունաբերության և տեղեկատվական տեխնոլոգիաների առաջատար ընկերությունների լավագույն մասնագետների և դասախոսների մասնակցությամբ: Ուսումնառությունն իրականացվում է Սինոփսիսի կողմից նվիրաբերված հատուկ կահավորված լսարաններում (որոնք գտնվում են և՛ «Սինոփսիս Արմենիա»-ում, և՛ համալսարանում), որտեղ յուրաքանչյուր ուսանող ցանցի միջոցով հնարավորություն ունի օգտվելու էլեկտրոնային նախագծման ավտոմատացման համակարգչային

արդիական ծրագրերից: Խմբային նախագծերի, դիպլոմային աշխատանքների, մագիստրական ատենախոսությունների և թեկնածուական թեզերի ղեկավարումն իրականացվում է «Սինոփսիս Արմենիա»-ի արդյունաբերական նախագծերին համապատասխան՝ համալսարանի փորձա-ռու դասախոսների կողմից:

Սինոփսիս Արմենիա ուսումնական ֆակուլտետի ծրագիրն անմիջապես ավարտելուց հետո շրջանավարտները իրավունք են ստանում աշխատելու ինչպես «Սինոփսիս Արմենիա»-ում, այնպես էլ տեղեկատվական տեխնոլոգիաների այլ ընկերություններում:

- Սինոփսիս-Արմենիան տրամադրել է 15.000 ԱՄՆ դոլար՝ տեխնիկական գրադարանը նորագույն մասնագիտական գրականությամբ ապահովելու նպատակով:
- Ծրագրի ձեռքբերումները և գալիք տարիների համար կրթական նախագծերի պլանը քննարկելու նպատակով Խորհուրդը կանոնավոր կերպով կազմակերպում է հանդիպումներ:
- Որպես «Սինոփսիս Արմենիայի» և ՀՊՃՀ-ի համագործակցության արդյունք՝ 249 շրջանավարտ ստացել է բակալավրի աստիճան, որոնցից 201-ը շարունակել են կրթությունը մագիստրատուրայում: Մագիստրոսի կոչում ստացած 107 ուսանողներից 7-ը շարունակել են ուսումն ասպիրանտուրայում:
- «Սինոփսիս Արմենիան» ՀՊՃՀ-ի 83 շրջանավարտների ապահովել է աշխատանքով:
- 2010 թվականի դրությամբ 97 ուսանող սովորում է բակալավրիատում, 94-ը՝ մագիստրատուրայում և 5-ը՝ ասպիրանտուրայում:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Հայաստանում Ֆրանսիական համալսարանի Կարիերայի կենտրոն

- Այս համալսարանի Կարիերայի կենտրոնը կիրառում է տվյալ ոլորտում եվրոպական առաջատար փորձը, այն է՝ ուսումնառության առաջին իսկ տարիներից սկսած ապահովում է ուսանողների ուսուցումը տարբեր կազմակերպություններում:
- Ուսումնական պրակտիկայի ընթացքում ուսանողներն իրականացնում են վերլուծություններ ընդունող և այլ ընկերությունների համար այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ արտադրանքի առաջխաղացումը, աշխատաշուկայի ուսումնասիրությունը, շուկայավարումը և այլն:
- Կարիերայի կենտրոնը, նույնիսկ նախքան ուսումն ավարտելը, աջակցում է ուսանողներին համապատասխան ընկերություններում աշխատանք գտնելու հարցում: Աշխատող ուսանողներն օգտվում են ուսումնառության ճկուն ժամանակացույցի հնարավորություններից:
- Կենտրոնը պարբերաբար հրավիրում է գործատուների՝ ուսանողներին տեղեկացնելու իրենց ընկերությունների, ինչպես նաև վերջիններիս ընթացիկ խնդիրների, դժվարությունների մասին, որից հետո ուսանողները խորապես ուսումնասիրում են այդ խնդիրները և առաջարկում լուծումներ:

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի Կարիերայի կենտրոն

- Կարիերայի կենտրոնը պարբերաբար կազմակերպում է սեմինարներ հետևյալ թեմաներով.

- «Գործատուների հիմնական խնդիրները աշխատակազմի ընտրության ընթացքում» ներկայացված տարբեր գործատուների կողմից,

- «Կարիերայի խորհրդատվական խնդիրները և փուլերը» ՀՊԵՀ ղեկավարության և տեղական զբաղվածության կենտրոնների ներկայացուցիչների մասնակցությամբ,

- «Ուսանողությանը աջակցելու գործունեության խնդիրները տարածաշրջանային կարիքների տեսանկյունից» տարածաշրջանային պաշտոնյաների մասնակցությամբ:

- Կարիերայի կենտրոնն ունի ինտերնետային կայք, որտեղ շրջանավարտները տեղադրում են իրենց կենսագրական տվյալները՝ աշխատանք գտնելու նպատակով,

- Կարիերայի կենտրոնը հրատարակում է պարբերական տեղեկագիր:

Հայաստանի Ամերիկյան Համալսարանի շրջանավարտների և կարիերայի զարգացման կենտրոնը

- Հայաստանի Ամերիկյան Համալսարանի (ՀԱՀ) Շրջանավարտների և կարիերայի զարգացման գրասենյակը նպաստում է իր շրջանավարտների կարիերայի ստեղծմանը և զարգացմանը:

- Այն նպաստում է շրջանավարտների մասնագիտական ճանաչմանը Հայաստանում և արտասահմանում:

- Կենտրոնը ստեղծվել է ՀԱՀ-ի ուսանողների համար կարիերայի և զբաղվածության ոլորտում անընդհատ զարգացում ապահովելու նպատակով:

- Այն ակտիվորեն ներգրավված է նաև շրջանավարտների հետազոտական և վերլուծական գործունեության մեջ:

- Գրասենյակի առաքելությունն է՝

- աջակցել ՀԱՀ-ի շրջանավարտներին՝ իրենց կարիերայի զարգացման գործում,

- մեծացնել ՀԱՀ-ի շրջանավարտների հնարավորությունները զբաղվածության և կարիերայի զարգացման ոլորտում,

- ՀԱՀ-ի շրջանավարտների և գործատուների միջև շոշափելի և ամուր կապեր ստեղծել,

- ՀԱՀ-ի շրջանավարտների միջև համախմբվածություն պահպանել:

- ՀԱՀ-ի Շրջանավարտների և կարիերայի զարգացման գրասենյակի գործունեությունն է՝

- կազմակերպել մասնագիտական դասախոսություններ, սեմինարներ, քննարկումներ և աշխատաժողովներ՝ հարստացնելու ՀԱՀ-ի ուսանողների գիտելիքներն ու պրոֆեսիոնալիզմը,

- գործատուների և ուսանողների միջև հարցազրույցներ կազմակերպել,

- կազմակերպել տարբեր սեմինարներ, հանդիպումներ, նախաձեռնություններ:

Երևանի պետական հումանիտար քոլեջի Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի զարգացման կենտրոնը

• 1999 թվականից Երևանի պետական հումանիտար քոլեջում երիտասարդներին համակարգված ձևով տրամադրվում է մասնագիտական կողմնորոշում: Քոլեջում այդ նպատակով առանձնացված է «Մարդկային ռեսուրսների համակարգող» հաստիքը, սակայն այդ գործում ընդգրկված են անձնակազմի բոլոր շերտերը՝ ավագ, միջին և կրտսեր կառավարչական խմբերը, դասախոսները, ուսանողական խորհուրդը:

• Մասնագիտական կողմնորոշումն իրականացվում է տարբեր եղանակներով՝

- գովազդ՝ քոլեջի մասնագիտությունների և մասնագիտացումների, քոլեջում սովորելու առավելությունների մասին ռադիոյով, հեռուստատեսությամբ, մամուլով, զանազան լրատվական հրատարակություններով՝ Սփյուռ, Արեգ, օրացույցներ և այլն,

- քոլեջի վերաբերյալ լրատվական տարբեր տիպի հրապարակումներ, քոլեջի անձնակազմի ելույթներ, հրապարակումներ քոլեջի առօրյայի՝ միջոցառումների, համերգների, ֆորումների, հանդիպումների, դասախոսական և ուսանողական գիտագործնական համաժողովների և այլնի մասին:

- հանդիպումներ են կազմակերպվում հանրակրթական դպրոցների 9-րդ և 11-րդ դասարանցիների հետ (դպրոցներում կամ քոլեջում), միջոցառումներ է կազմակերպում քոլեջի ուսանողական խորհուրդը, դպրոցականների փոքր խմբերի հետ նրանք կարճ քննարկումներ՝ ներկայացնելու քոլեջի հնարավորությունները, աշխատանք գտնելու նրանց հնարավորությունները, գործում է աշակերտների մասնագիտական կողմնորոշման շուրջտարյա հեռախոսային «թեժ գիծը», և վերջապես՝ աշխատանք ծնողների հետ:

• Քոլեջն անմիջական ու անընդհատ կապի մեջ է տարբեր կազմակերպությունների հետ և ձգտում է ներգրավել նոր գործընկերների: Գործատուների հետ տարվող աշխատանքի արդյունքում՝ քոլեջի շրջանավարտների 40-45%-ն աշխատանքի են տեղավորվում շրջանա-վարտումից հետո վեց ամսվա ընթացքում:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Համառոտ տեղեկություններ Հայաստանի ՄԿՈՒ ոլորտում իրականացված և Բիզնեսի հետ կապի ամրապնդմանը նպաստող Միջազգային աջակցությամբ իրականացված ծրագրերի մասին

1. «Միջին մասնագիտական կրթություն բանկային մասնագիտությունների գծով» ծրագիրը, որը ֆինանսավորվում է գերմանական GTZ կազմակերպության կողմից (1999թ), կրթության և բանկային սեկտորների միջև անմիջական կապ հաստատելու նպատակով: ՀՀ կրթության և գիտության նախարարության, Հայաստանի կենտրոնական բանկի և Հայաստանի բանկերի միության կողմից հիմնադրվեց ֆինանսաբանկային քոլեջը, որը բանկերի պահանջներին համապատասխան և նրանց մասնագետների մասնակցությամբ պատրաստում է բանկային մասնագետներ:

2. 1998 թվականից Հայաստանի ՄԿՈՒ բարեփոխումներին սկսեց աջակցություն ցուցաբերել Եվրոպական կրթական հիմնադրամը (European Training Foundation), որը ֆինանսավորել է մի շարք ոչ մեծ ծրագրեր, դրանցից են «Գործարարությունը կրթության և ուսուցման մեջ», «Անձնակազմի զարգացում», «Ուսուցում աշխատաշուկայի կարիքների համար», «Ուսուցման ռազմավարություններ ուղղված տեղական զարգացմանը», «Աշխատաշուկայի և ՄԿՈՒ համակարգի հեռանկարների ու մարտահրավերների հետազոտություն»: Եվրոպական կրթական հիմնադրամի բոլոր այս ծրագրերը զգալիորեն նպաստեցին համագործակցության հզորացմանը կրթության, զբաղվածության, գործարարության ոլորտներում այնպիսի շահագրգիռ կողմերի միջև, ինչպիսիք են՝ ԿԳՆ, ԱՍՀՆ, ՀԳՀՄ, ԱԱՊ, ՀՇՄ և այլն:

3. 2002-ից Հարավային Կովկասի երկրներում գործում են գերմանական DVV international կազմակերպության մասնաճյուղերը, որոնք նպաստում են ՄԿՈՒ համակարգում մեծահասակների կրթության զարգացմանը: Այս ծրագրի շրջանակում, որը ֆինանսավորվում է Գերմանիայի համագործակցության և զարգացման դաշնային նախարարության կողմից, ՄԿՈՒ պետական ուսումնական հաստատություններին հնարավորություն է ընձեռվել մասնակցել բազմաթիվ ուսումնական գործընթացների, որոնք ուղղված են գործատուների պահանջների բավարարմանը: Ներկայումս Իջևանում, «Մեծահասակների կրթություն և ուսումնառության ողջ կյանքի ընթացքում» հասարակական կազմակերպության և Տավուշի առևտրաարդյունաբերական պալատի հետ համագործակցությամբ, Եվրոպական Միության կողմից ֆինանսավորված ծրագրի շրջանակում DVV international-ի կողմից հիմնվում է Մեծահասակների ուսումնառության կենտրոն:

4. 2004-2006թթ. ԵՄ Tasis-ի կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանում մասնագիտական կրթության ու ուսուցման միասնական համակարգի զարգացմանը» ծրագրի «Զբաղվածություն և աշխատաշուկա» բաղադրիչը նպատակ ուներ մարզային մակարդակով սերտ կապեր և համագործակցություն հաստատել զբաղվածության կենտրոնների, գործարար շրջանակների և ՄԿՈՒ քոլեջների միջև:

5. 2006 թվականից գործում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի «Օժանդակություն Հայաստանի ՄԿՈՒ համակարգի բարեփոխումներին» ծրագիրը (www.vet.am, www.undp.am), որը այլ գործողությունների շարքում օժանդակել է գործատուների հետ համագործակցության ստեղծմանը, որն ուղղված է կարողությունների ձևավորմանը միտված որակավորման չափորոշիչների մշակմանը:

6. 2007 թվականից Հայաստանում Բրիտանական Խորհրդի (British Council) գրասենյակի կողմից իրականացվում է «Աշխատանք և հմտություններ» ծրագիրը, որի նպատակն է՝ Հարավ-արևելյան Եվրոպայի երկրներում Մեծ Բրիտանիայի հետ կապեր հաստատելու միջոցով կրթությունը համապատասխանեցնել աշխատանքի շուկայի և գործարար աշխարհի պահանջներին՝ դրանով իսկ նպաստելով արտադրողականության բարձրացմանը և աշխատաշուկայում աշխատուժի ազատ տեղաշարժին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ, 2006

- EU TACIS-VET Armenia, Final report 31 December 2006
- European Neighbourhood and Partnership Instrument: National Idicative Programme: 2007 – 2010:
- ՀՀ կառավարություն. «Հայաստանում ցկյանս ուսումնառության հայեցակարգ», 2009:
- ՀՀ կառավարություն. «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում սոցիալական գործընկերության հայեցակարգ», 2009:
- ՀՀ կառավարություն. «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացման հայեցակարգ», 2009:
- ՀՀ կառավարություն. «ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարություն», 2004:
- ՀՀ կառավարություն. «Կայուն զարգացման ծրագիր», 2009:
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, «Զբաղվածության պետական ծառայություն». «Գործատուների ընտրանքային հետազոտություն», հոկտեմբեր 2008, Երևան
- World Economic Forum: the 2009 report of Competitiveness of Armenia:
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, «Զբաղվածության պետական ծառայություն». 2008թ. և 2009թ. տարեկան հաշվետվություններ:

ՄԿՈՒ ՈԼՈՐՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ձեզ ենք ներկայացնում նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտի նոր հրատարակությունների, այդ թվում առարկայական ու ուսումնական ծրագրային նյութերի, դասագրքերի և մեթոդական ձեռնարկների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն:

ՄԿՈՒ ոլորտի բարեփոխումների շրջանակում, 2009-2010թթ. Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի (ՄԿՈՒԶԱԿ) կողմից կազմակերպվել է մի շարք դասագրքերի, առարկայական և ուսումնամեթոդական ձեռնարկների մշակում և հրատարակում: Դրանցից մի քանիսը ներկայացնում ենք ստորև:



Ոսկերչական գործ

2009թ. հրատարակվել է Եղիշե Մելիքսեթյանի հեղինակած «Ոսկերչական գործ» ուսումնական ձեռնարկը, որը բաղկացած է ընդհանուր մասնագիտական տեղեկություններ պարունակող առաջաբանից, բազմակողմանի և նեղ մասնագիտական տեղեկություններ պարունակող տասներկու գլխից, երեք հավելվածից և գրականության ցանկից: «Ոսկերչական գործ» ուսումնական ձեռնարկում ներկայացվում է Հայաստանում ոսկերչության դերն ու նշանակությունը՝ սկսած վաղնջական ժամանակներից, տարածաշրջանին բնորոշ մետաղները և դրանց հատկությունները, ինչպես նաև սխեմաների և ցուցանմուշների տեսքով ներկայացնում է զարդերի պատրաստման ընթացքն ու առանձնահատկությունները: Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնը ձեռնարկը հրատարակել և անվճար հատկացրել է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական այն հաստատություններին, որտեղ տվյալ կրթական ծրագրով դասավանդում է իրականացվում: «Ոսկերչական գործ» ուսումնական ձեռնարկը տեղադրված է նաև ՄԿՈՒԶԱԿ-ի պաշտոնական կայքէջում՝ www.mkuzak.am:

Բեռնատար ավտոմոբիլային փոխադրումների տեխնոլոգիա, կազմակերպում եւ կառավարում

Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնը 2009թ. ընթացքում հրատարակել և անվճար հանձնել է համապատասխան ուսումնական հաստատություններին Գագիկ Երիցյանի հեղինակած «Բեռնատար ավտոմոբիլային փոխադրումների տեխնոլոգիա, կազմակերպում և կառավարում» ուսումնական ձեռնարկը: Հեղինակը ներկայացնում է ինչպես բեռնագիտության տեսական հիմունքները, տնտեսության ու տրանսպորտի փոխազդեցությունը, բեռնատար ավտոմոբիլի և ավտոտրանսպորտային ձեռնարկության

հիմնական տեխնիկաշահագործական ցուցանիշները, երթուղիների հաշվարկի մեթոդները, այնպես էլ շարժակազմի երթևեկության կազմակերպման, բեռնարկղային, փաթեթային փոխադրումների, տրանսպորտա-պահեստային և բեռնման-բեռնաթափման աշխատանքների, փոխադրումների կառավարման հետ կապված հարցեր: Սույն ձեռնարկը նույնպես տեղադրված է ՄԿՈՒԶԱԿ-ի պաշտոնական կայքէջում՝ www.mkuzak.am:

Էկոլոգիական դաստիարակության հիմունքներ

Ի թիվս այլ հրատարակությունների՝ 2009թ. ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից պատվիրվել և տպագրվել է «Էկոլոգիական դաստիարակության հիմունքներ» ուսումնական ձեռնարկը, որը նախատեսված է միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների համար: Սույն ձեռնարկը ևս տպագրվել է Կրթության ազգային ինստիտուտի մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի կողմից և անվճար բաժանվել ուսումնական հաստատություններին՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական համակարգի բարեփոխումների քաղաքականության համատեքստում: Ձեռնարկը տեղադրված է նաև ՄԿՈՒԶԱԿ-ի պաշտոնական կայքէջում՝ www.mkuzak.am:

Կրթության եւ ուսուցման վերաբերյալ սոցիալական երկխոսություն Կոպենհագենի գործընթացում

2002թ. եվրոպական 31 երկրների մասնագիտական կրթության և ուսուցման նախարարների կողմից ընդունված Կոպենհագենի հռչակագիրը խթան դարձավ, որպեսզի մասնագիտական կրթության և ուսուցման եվրոպական կողմը ընդհանուր համաձայնության գա նպատակների և այն գերակայությունների վերաբերյալ, որոնք հիմք կհանդիսանան տասնամյակի վերջում եվրոպական ՄԿՈՒ համակարգերի՝ համաշխարհային հենք դառնալու համար: Հետագայում Մաաստրիխտի (2004թ.) և Հելսինկիի կոմյունիկեները (2006թ.) դարձան այն անկյունաքարերը, որոնք ամրապնդում էին ՄԿՈՒ ոլորտում ընդլայնված համագործակցության վերաբերյալ սկզբունքները:

Վերոնշյալ գործընթացի հիմնախնդիրները վերլուծվել են Cedefop-ի սույն հրատարակության մեջ: Զարգացող հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել, թե տարբեր մակարդակներում որքանով են սոցիալական գործընկերները առնչություն ունենում Կոպենհագենի

գործընթացի հետ անմիջական կապ ունեցող գերակայությունների հետ, քանի որ արդյունքները ցույց են տալիս, որ կրթության և ուսուցման ոլորտում սոցիալական երկխոսությունն ունի էական դերակատարություն՝ տարբեր մակարդակներում ՄԿՈՒ քաղաքականությունների զարգացման գործում:

Հմտությունների համապատասխանության մարտահրավեր, դրանց վերլուծությունը

Հմտության անհամապատասխանության մասին խոր պատկերացումը կարող է օգնել քաղաքականություն մշակողներին՝ համապատասխանեցնելու հմտություններն ու աշխատանքները Եվրոպայում: Հմտության անհամապատասխանությունը բարդ երևույթ է, որն ազդում է անհատների, ձեռնարկությունների, տնտեսությունների և հանրության վրա: Սույն զեկույցի նպատակն է՝ հմտության անհամապատասխանության վերաբերյալ փաստերը համակարգել՝ վերլուծելով յոթ կարևոր հարց: Այն տրամադրում է հմտության անհամապատասխանության ընդհանուր պատկերը և այն գործոնները, որոնք նպաստում են դրան:

Գործատուի կողմից տրամադրվող մասնագիտական ուսուցումը Եվրոպայում, շարունակական մասնագիտական ուսուցման երրորդ հետազոտության գնահատում եւ մեկնաբանում

Եվրոպական շարունակական մասնագիտական ուսուցման հետազոտությունը (CVTS) ձեռնարկություններում իրականացվող ուսուցման վերաբերյալ համեմատական տվյալների եզակի աղբյուր է: Սույն զեկույցը տրամադրում է երրորդ հետազոտության արդյունքների եվրոպական առաջին համեմատական մանրամասն վերլուծությունը:

Ներկայացված հրատարակությունների անգլերեն տարբերակները կարող եք ներբեռնել՝ այցելելով www.cedefop.europa.eu կայքէջ: